

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՌՈՐԵՐՏ ԵՍԱՅԱՆ

Հատոր առաջին

ՔԱՈՍ ԵՎ ԼՈՒՅՍ

*Բանաստեղծություններ
պոեմներ*

*Ետ տար տողը, ինչպես կափարիչը
քառսի, և կտեսնես՝
թե ինչպե՞ս է ծնվում ծանապարհը...*

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ-2015

ՌՌԲԵՐՏ ԵՍԱՅԱՆ

Հատոր առաջին

ՔԱՈՍ ԵՎ ԼՈՒՅՍ

*Բանաստեղծություններ
պոեմներ*

*Ետ տար տողը, ինչպես կափարիչը
քառսի, և կտեսնես՝
թե ինչպե՛ս է ծնվում ճանապարհը...*

«Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն
Ստեփանակերտ-2015

ՀՏԴ 821.19-1 Եսայան
ԳՄԴ 84(5Յ)-5
Ե 583

Նարեկի և Դավթի հիշատակին

ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

Հրատարակվել է ԼՂՀ պետպատվերով

*Շապիկին և գրքի մեջ օգտագործված են Արշիլ Գորկու
ստեղծագործությունները*

Եսայան Ռոբերտ
Ե 589 Քառս և լույս: Բանաստեղծություններ, պոեմներ/ Ռ. Եսայան.-
Ստեփանակերտ: «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2015.
Հատոր առաջին.- 240 էջ+4 էջ ներդիր:

Ռոբերտ Եսայանի պոետիկան հագեցած է քնարական զեղումներով,
փիլիսոփայական հայեցողությամբ, բնապաշտությամբ, անակնկալ
հայտնագործում-հայտնություններով, գեղագիտական նրբին զգացողու-
թյամբ, աֆորիստիկ ձևակերպումներով, միանգամայն ինքնատիպ տա-
ղաչափությամբ:

ՀՏԴ 821.19-1 Եսայան
ԳՄԴ 84(5Յ)-5

ISBN 978-9939-1-0229-0

Ռոբերտ Եսայան, 2015



Նկարը՝ Արշիլ Գորկու

ՀՐԵՇՏԱԿԻ ԹԵՎԵՐ

ՀՐԵՇՏԱԿԻ ԹԵՎԸ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ ԵՄ
ԵՎ ՆԱՅՈՒՄ ԻՄ ԱՊԱԳԱՅԻՆ

ԵԹԵ

Եթե տողերի միջև լռություն
չկա- ուրեմն
սպառված է հորիզոնը Ոգու:

Եթե հիշողությունների միջև կամուրջներ
չկան-ուրեմն
դեռ չի ծագել տարածության աստղը:

Եթե ներշնչանքների միջև զոհասեղանը
թևը չէ հրեշտակի-
ուրեմն երգի ծնունդը հետաձգվել է...
անհայտ լուսաբացով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՈՒՐԸ

Ես խմում եմ ջուրը՝
ոգի՛ն կայծքարի,
և ծարավի խոլ հայացքն է արթնանում
ցողուններում Անսահմանի:

Ես խմում եմ ջուրը՝
տարերքն աստղերի...
և ափով իմ շոյում եմ թևը ժամանակի՝
հրեղեն շառայլը մանկության իմ ձիու:

Ես խմում եմ ջուրը՝
անքը ծառերի,
և քարն իր խորքերի ծիածանն է բացում
բողբոջի կապույտ երակի վրա:

Ես խմում եմ ջուրը՝
հո՛ւյսը ընթացքի,
և հավատի խորանում վառվում է իմ ձանապարհը՝
բիրլիական մոմ:

Ես խմում եմ ջուրը՝
շո՛ւնչը երազի,
և երկնքի կեղևից ծիլ է տալիս հորիզոնը՝
ներշնչանքի ձիջ:

Ես խմում եմ ջուրը՝
ոգի՛ն կայծքարի,
և ծարավի խոլ հայացքն է արթնանում
ցողուններում Անսահմանի:

ՅԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՆԴԱԿ

Յուշարձանի կարմիր լռությունն է հառնում
ծաղիկների քարե ձիչերի միջից:
Ժամանակի ափից
ջրւր է խմում հիշողության լույսը:

Ձայնի պատարագ է
փողոցի շունչը: Մի բառ
մանկան պես առաջին
քայլերն է անում
կյանքի աներևույթ սահանքների վրա...
Գիշերը
գիրկ է:

Դռան
անհայացք
մենություն:
Քաղաքը փնտրում է հիշողության
շեմը:
Քառսից այն կողմ`
ծայների կղզի:
Յիշողության վանդակը`
տարածության անոն:

ՄԻՖԸ

Ստվերս ցույց է տալիս
հավերժի ընթացքը
և անհետանում քարակույտերում:

Ճանապարհը օձի շապիկ է,
թե... քմծիծանող ճակատագրի:

Մի վայրկյան առաջ
ես տերն էի կյանքիս ողջ ընթացքի:

Ժամանակի կմախքում
բնակվում է Միֆը:

ԸՆԾԱՅԱԳԻՐ

Ռ
Տ
Ք
Կ
Դ
Շ
Ս
Ն

*Արևիկ
Երայանի,
12.08.95 թ. Վանաձորի Մանկավարժական
սեյմի 12-րդ դասարանի ուսուցիչ
Սուրբ Գրիգորի Մանկավարժական
սեյմի 12-րդ դասարանի ուսուցիչ*

Ռ
Ա
Ձ
Ն
Դ
Յ
Ա
Ն



ՆԿԱՐԱԳԻՐ

Քարը, որպես վանդակ,
իր մեջ պահում է
թռիչքը թռչունի,
կայծակը լռության,
անդունդի բաբախող սիրտը:
Ձայնը`
հիշողության հատիկներ կտցող
մի ճանապարհ:
Ոտնահետքերի վիհերի վրա ճախրող աղավնի:
Մի լեռնագագաթ,
որ ուտում է
իբրև պաղպաղանկ
ստվերը Քաոսի:



Բանաստեղծը ծնվում է կյանքի և վաղվա միջև,
երբ բացում ես լռությունը և կարդում երազը,
(կյանքը թերևս կասեցրումն է փառքի ու ճանաչման),
ներշնչանքից հորդում է մտքերի օազիսը,
մահը բևեռների միջև բացվող մի ծաղիկ է
կամ մի հայելի` դրված ճակատագրի առջև,
իսկ Անհայտը երազանքի չըմբռնվող խաղիկ է,
բանաստեղծը ծնվում է կյանքի և վաղվա միջև:

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ՊԵՅՁԱԺ

Չիշատակի հողմապտոնյտ է իմ տառապանքը:

Քամին խառնում է տերևները
մենությունների
և անսպասելի պտտահողմով
բարձրացնում երկինք:

Չուշի մատները շոյում են
հանգրվանները աստղի:

Փողոցում շրջում են հուշերը մարտիրոսների
և վառում մոմերը Տաճարի:

ՕՐԸ

Բառերը
կամուրջներ են,
որ մղում են մարդկային երթը
դեպի մի այլ հուն:

Ճանապարհը,
որպես խաչ,
կրում է իր մեջ
ոգին աստվածային:


Օրը՝
խաչն ի վեր շատրվանող աղոթք:

ՃԱՆԱՊԱՐՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Լցվում են բուրմունքով
Անդիի:

Հագնում են ծառերի
լուսայգը և դիմավորում
ակնթարթները Ապագայի:

Մի ծիտ
նվագում է զգայարաններիս
ջրվեժների վրա
և սկզբնավորում
հաղորդությունը
բիրլիական:



ՀԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Ճակատագրի խորշից ելնում եմ,
ինչպես հնագույն մի քարանձավից:
Եվ ելնում եմ հողից հարության ծաղիկներ:

Տողը ճանապարհ է,
ինքնահաստատման մի հուն:

Ապագան վիժում է
ստվերով Անհայտի:
Եվ ելքեր են բխում ակունքից իմ ցավի:

Աղոթքների թևող փետուրներով
հյուսում եմ թռչուն-երկինքները,
որոնցով բալասանվում եմ տողերը ժամանակի,
լռությունը ամենայն Սկզբի:



ԱՅԱ ԻՄ ԺԱՄԱՆԱԿԸ

Լույսի սերմ է
մուգը:

Վարդի բուրոզ ծյուղ է
ծեռքը Անհայտի:

Սալաքարերից բխող տերև է
քո կանչը,
հայր իմ:

Ահա իմ ժամանակը.
ազատության հայացք
և... բանտախուց,
դատարկության զսպանակ
և... արյան ճիչ,
սովորության թարթիչներից կախված
բևեռ Ապագայի...

Թեև բացակա չեմ,
բայց տողս, որպես
գրիչ, գրում է
հայացքի մեջ
անցորդների...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՆ

Ցավի քարտեզ է քո ճանապարհը:
Չրեշտակն ընթերցում է տողը Անհայտի:
Լռության որմեր են բացում հետքերդ:
Կարմիր ընդվզումը հաստատվող հուն է:
Ցավի քարտեզ է քո ճանապարհը:

Դու՝ արմատների փոթորիկ ու ձայն:
Եվ բառը, որպես փրկություն հոգու,
Լուսանցքն է բացում հավիտենության:
Կարմիր ընդվզում է շնչառությունդ:
Դու՝ արմատների փոթորիկ ու ձայն:

Տողերիդ միջից բուսնում են վարդեր:
Եվ բառարանի սահմանն հատում են
Բառերը՝ որպես փրկության ելքեր:
Երբ լռությունը գոհասեղան է,
Տողերիդ միջից բուսնում են վարդեր:

Չրեշտակն ընթերցում է տողը Անհայտի:
Կարմիր ընդվզումը հաստատվող հուն է:
Լռության որմեր են բացում հետքերդ:
Ցավի քարտեզ է քո ճանապարհը:
Չրեշտակն ընթերցում է տողը Անհայտի:

ՇԵՄ

1.

Մտքով շոշափիր Անհայտի երգը:
Արյունն է դառնում Ոգու թրծարան:
Ուր էլ որ հասնես քայլով անվարան,
Յեռուն է միայն քո Տենչի ելքը:

2.

Եվ անուրջներիդ երկինքը, որպես
բալասան աստղի, կդրվի վերքիս...
Կպարի լույսը՝ տարերքն Անհայտի,
և լեռան երգը՝ արվեստի կրակ,
մղձավանջային ոգին կհատի...:

3.

Գազաթների լույսից մի սանդուղք է իջնում,
մի այլ սանդուղք ելնում լույսից գազաթների,
իմ հետքերի վրա քո ծայնն է անրջում,
քո անունն է դառնում զսպաշապիկ Ոգու:

4.

Քարակոփի հիմն է տարածքը Ոգու,
ուր սերունդների երազն է աճում,
երբ ճանապարհն է արծագանք հոգու,
նրա մեջ Ասքի շունչն է շառաչում:

5.

Փոթորկի նման բռնկվում ես երգով,
ինքդ քեզ ըմբռնում Անսահմանի ելքով:

6.

Եվ երազն է դառնում անհայտության մի շերտ,
Եվ հավատն է դառնում հիշողության նոր շեմ:

7.

Ամբողջի մեջ չի կորչում շնորհները Ցեղի,
և չի դառնում Ոգու մարգարիտը՝ ավար,
ինչ-որ նախնական է - ուժն ու ելքն է հողի,
երբ արմատ է լույսը՝ ընձյուղ, երանգ, հավանտ:

ՀՈՒՍՈ ԱՍՏՂ

ՀԱՅ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ
ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Փրկելով երազը մեր ճանապարհի՝
վառում ես,
որպես ջահ:
Ես քո հայացքից շնչում եմ
վարդը հարատևության:
Աքսորյալ եղբայր,
Տարածության լուսանցքներում
վառվում է դեմքդ,
որպես ձրագ:
Դատարկության արցունքները
հոգիներն են քսորյալների:
Բարերար հայոց,
դուրս նետիր որոգայթները ժամանակի
ձակատագրիդ նենգող հանգրվանից
և կանգնիր Արցախի լեռներում,
որպես ճանապարհի հայացք,
Հավատի զսպանակ:
Ժամանակի մեկուսարաններում
խոսքը՝ հոգու ապտակ:
Եվ Անհունի ձեռքերում
թփրտում է հոգիդ,
որպես զոհասեղան:
Աքսորյալ եղբայր,
ես քո աչքերի բևեռների միջև
շարժվում եմ, որպես ձակատագրի անսող:
Բարերար հայոց,
ելիր Հավիտենության լուսանցքներից,
որպես Մերոպաշունչ Բառ,
և շնչիր արևի ձառագայթը՝
իբրև վարդ...

ԻՄ ՃԱՆԱՊԱՐՅՈՒ

Ներդաշնակության ուժը
բաժանվել է վանդակում Քառսի:
Յոգին մարմնի պատանդը չէ:

Երեկ մարմինս,
հիշողության ճյունը տնտղելիս,
հանկարծակի ծաղկեց
և սփռեց լույսի թերթիկներ
երազանքներիս շրջապտույտում...
Փողոցի համբույրը հոգի՛ էր թևածող...

Ներդաշնակության ուժը
բաժանվել է վանդակում Քառսի:

Ո՞վ էր, որ բացեց
մարմնիս վանդակները,
որոնցից թևո՞ւմ են
աղավնիներ հույսի:

Իմ ոտքերի տակ լուսանո՞ւմ է ճանապարհը...
Իմ մեջ հասունանո՞ւմ է հայացքը նռան...
Լռության քարերը
ոգու խորաններ են,
որտեղ աղոթո՞ւմ է
իմ ճանապարհը...

ՍԵՐԸ ԼԵՂՈՒՆ Է ԲՆՈՒԹՅԱՆ

Ճանապարհի բիրը ելքն է տիեզերքի,
 Ժամանակի կեռից կախվել է հիշատակը,
 և, որպես փեթակ տառապանքի,
 եռնմ է օրը, բակը,
 ուր թռչկոտում են ձնձղուկները, ծիծեռնակը
 թառում տողերիս երակների վրա,
 Անսահմանի անփն է: Ես անվարան
 գրկում եմ տարածության հույսը, որպես փուչիկ,
 լցնում ծաղիկներով շնչառության... Սերը
 լեզուն է բնության: Բառերն
 առանց հիշողության
 նման են նորածին երեխաների:
 Բառերն
 հեռանում են թիթեռ-թիթեռ՝ թողնելով
 շուրթերիս և աստիճաններին վայրկյանների
 ներկայությունը Ոգու:
 Իմ շուրթերից հավաքում է ժամանակը
 հիշողությունը:
 Եվ ճանապարհին իր աչքերն է թարթում
 լեռան գագաթին:
 Սերը լեզուն է բնության ու... տառապանքի:

ԹԵ

Թե լռության շրթին
շունչս է վիրավոր-
թող տատմոր պես մոտենա ժամանակը
իմ տառապանքին:

Թե ազատությունը մենախոսող պոետի
հուշարձան է,
քարշ չտանք նրան
հրասայլերի և ջիպերի ետևից:

Թե անունը գետնամած
ստվեր է միայն,
թող հառնի՛ հողից
առասպելը ոգու:

Թե բռնաբարվում է կտավներում երկրի
կուսությունը գույնի-
թող մանկությանս փուչիկից կախվի՛
սիրո ճանապարհը:

ՕՐԱԳՐԻ ԷԶԵՐԻՑ

ԺԱՄԱՆԱԿԸ ՓՈՐՈՒՄ Է ԱԶՔԵՐԸ ԲԱՌԵՐԻ

Ժամանակը փորում է աչքերը բառերի,
դարձնում... խրամատներ:
(Հիշողության պարապրոզ:
Խղճի զոհասեղան):
Սահմանագծերի ափում բուսել է մի ծաղիկ,
որպես ավետին:

ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՆՔԱՆՈՒՄ ԵՆ

Կյանքի սահմաններն անէանում են,
որպես փուչիկներ,
թե՛... որպես ցավի ու տառապանքի
խոլ հետագծեր...

ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՆԳՑՆՈՒՄ Է ԼԱՊՏԵՐԸ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ

Ժամանակը հանգցնում է լապտերը տարածության,
որպես բիրը խղճի:
Վառվում է միտքը,
որպես հույսի մոմ:

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵՑ ՏՈՂԸ

Այս անգամ էլ կողմնորոշվեց տողը
բառերի ներքին ուղեցույցով:
Չիշողության քարտեզից բուսել է
մի ծաղիկ:
Բևեռների բռունցքը:

ԿՈՃԿՎԱԾ ԼՈՌՈՒԹՅԱՆ ԲԱՃԿՈՆԻՑ

Կոճկված լռության բաժկոնից
հանում եմ ներշնչանքի աղավնիներին
և թռցնում երկինք...
Կապույտը դառնում է Չոյսի ավազան:

ՉԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶԻՆ ՉՊԿՈՂ ՄԱՍԸ

Չիշողության քարտեզին հավոլ մատը
արևի ճառագայթն է:
Անհայտի պատուհաններում ակունքվում է
լույսը ներշնչանքի.
Ապագայի ճիճը:

ԱՅՍ ԱՆԳԱՄ ՓԵՏՈՒՐՈՎ ՈՉ ԹԵ ԳՐՈՒՄ

Այս անգամ փետուրով ոչ թե գրում,
այլ ավլում եմ
զոհասեղանը գազաթների:
Իմ քայլերից բխող վարդեր են պահերը...

ԽԱՉՔԱՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ ՕՐՈՐՎՈՂ ԲԱՐՈՒՐԸ

Խաչքարի ձեռքերում օրորվող բարուրդ
 իմ ժամանակն է:
 Ես հանում եմ դեմքս
 խորքից ճանապարհի,
 որպես բիբլիական ցողունն Անսահմանի:

ՈԳՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՋՐՎԵԺՆԵՐՈՒՄ

Ոգու ժամանակի ջրվեժներում
 հոսում են տողերը,
 որպես ձկներ...
 Երջանկության թարթիչների վրա
 թրթռում է լույսն իմ արմատների:

ԱՅԱ ԴՈՒՌԸ ՊՈՆՁԻԱՅԻ

Ահա դուռը պոեզիայի...
 Տեսիլաժամն է դեմքը բանաստեղծի:
 Եվ բառարանի շրջանակը ճեղքում է
 շնչառությունը տիեզերքի:
 Բացվում է աներևույթ ձեռքը ճանապարհի.
 ափի մեջ ծաղկում է
 աստղը...

ԾԽՈՒՄ ԵՄ ՅՈՒՇԵՐԻՍ ԱԾՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ

Ծխում եմ հուշերիս ածուխը կարմիր,
 և հոգուս խորքից բարձրանում է վեր
 ցավերիս լույսը-
 հրեշտակի՞ թև...

ՈՒՒԻ ԽԱՎԱՐԸ ԲԵԿՈՒՄ ԵՄ

Ուիի խավարը բեկում եմ
 սուսերով լույսի:
 Մի կարմիր ձիչ կա
 արմատներում ոգու:
 Անհայտի ցողունով բարձրանում է
 տեսիլաժամը:
 Դեմքը բանաստեղծի:

ԲՈՂԲՈՋԻ ՄԵՋ ՇՈՂՈՒՄ Է ԲԻԲԸ ՃԱՆԱՊԱՐՅԻ

Բողբոջի մեջ շողում է բիբը ծանապարհի,
 որից ըմպում է ձյուղը խորհրդողը տիեզերքի:
 Ես կանգնել եմ ծառի և անհունի միջև
 և լսում եմ պատարագը լեռնապարերի:

ԵՎ ԴՈՒՐՍ ԵՆ ԹՈՉՈՒՄ ՃԱՆԱԴԱՐԴԻ ՈԳՈՒՑ

Եվ դուրս են թռչում ճանապարհի ոգուց
 աչքերն իմ մանկության,
 որպես պատարագի մոմեր:
 Ես նայում եմ իմ խորքը,
 և Անհունի հայացքը լուսավորում է
 իմ գոյությունը:

ԱՊԱԳԱՅԻ ՃԻՉՈՎ

Ապագայի ճիչով
 բացահայտվում է դեմքը քաղաքի,
 որպես հիշողության տող,
 շեմը Ազատության:
 Եվ Անսահմանի պատուհաններում
 ակունքվում է մի վարդ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԲԱԽՏԸ

Բանաստեղծի բախտը
 մի ստորակետ է,
 որ փնտրում է իր հավիտենական տեղը
 կյանքի և մահվան միջև...

ԵՎ ԱՄԵՆ ՎԵՐՋԱԿԵՏ

ԵՎ ամեն վերջակետ
 Ազատության շեմն է,
 աչքերը... աստանդական Կատվի...

ՈԳՈՒ ԾԻՐ Է ԳՐԻՉԸ

Նվիրում եմ Լևոն Խեչոյանին

1

Չամբուրելով բառն ու հողը
 ամրապնդում ես ոգին հիշատակի
 քո ցավը
 դուռ է
 որ բացվում է դեպի հիշողության
 լույսը
 կանաչ
 ու
 կապույտ
 մի հանգստություն –
 ճանապարհի աչքը
 լցվում է արցունքով անսահմանի
 պատմության լույսը
 դեղի պես քսում ես աչքերին ճանապարհի
 որ զվարթ ու զգոն լինի
 հավատը
 եղեռնազարկ պապերի
 չկրակած փամփուշտը
 մխրճեցիր թշնամու կուրծքը խավարազարդ
 գիշեր և ցերեկ
 խավար և լույս
 թուղթը սպիտակ է
 իսկ թանաքդ սև
 մոլեգնում է օրը
 որպես տող
 և իմաստավորում քո ապագան
 հորիզոնի ճիչը
 ծարավի թռչուն է

2

հոգիդ որպես աղբյուր
ձեղքում է բառերի լեռնապարը
և միանում դողին արարչության

ճախրում են տողերդ
կտուցներին կայծակ է
և անմահություն

իսկ ճանապարհդ
ոգու ձեռքերով
դուրս է մղում միշտ
կափարիչները ճակատագրի
ճանապարհիդ հետքերը
ոսկեթև թիթեռներ են

բառը գրահ ու կափարիչ
բառը երկյուղ մրմուռի ծուխ
հիշողության վառվող ածուխ

մի առաքյալ
իր աղոթքով
միավորում է ձեռքերը
տարածության

գիշեր և ցերեկ
խավար և լույս
թուղթը սպիտակ է
իսկ թանաքդ սև
մոլեգնում է օրը
որպես տող
և իմաստավորում քո ապագան
հորիզոնի ճիչը
ծարավի թռչուն է

3

տառապանքի ելարանով բարձրանում ես դեպի Աստված
բացվում է դեմքիդ մի մասը
մյուս մասը մնում է
երազի մեջ
քամու աչքերից գլորվող արցունքներից
ելնում են շիվերը խնձորենու
բառի տեսողությամբ նժարում ես
աստղը ճանապարհորդի

և ընդհանրապես հաշտություն չկա
ոգու ծիր է գրիչը

տողերի արանքում բաբախում է լռությունը
և հողի դողը – ցավի գոհասեղան
սպիտակ թղթին մոտեցող մոլորակ է
հիշողությունդ Բառով շեշտում ես կարևոր
մի բան Ապրում ես ցերեկվա
և գիշերվա մեջ
Խիղճդ վիհի պես
ձգում է
քաշում անցորդներին դեպի կիզակետ

գիշեր և ցերեկ
խավար և լույս
թուղթը սպիտակ է
իսկ թանաքդ սև
մոլեգնում է օրը
որպես տող
և իմաստավորում քո ապագան
հորիզոնի ճիչը
ծարավի թռչուն է

ԱԲՍՈՒՐԴԻ ԹԱՏՐՈՆ

*ԼՂԳ ժողովրդական արտիստ, ռեժիսոր
Լեոնիդ Չարությունյանին*

Բառը հաղթահարում է վանդակը տեսողության:

Ազատության շեմը հատում է մի ստորակետ:

Անհայտի դեմքն իր

խաղացանկերով

ընդառաջ է գնում

տարածության ընկնող-ելնող բեմերին:

Ո՞վ է հանում ճանապարհի դեմքից

գործողության վիհը...

Աբսուրդի թատրոնը հաղթահարում է

որոգայթները տիեզերական:

Խղճի պարապնորդը:

Աղբյուրը քարի հիշողությունն է:

Առասպելի ոգուց բխում է երկինքը:

Տիեզերքը փնտրում է իր շնչառության ելքը

խոսքով կենդանի:

Ահա քո ոգին: Տիեզերքի

շնչառության բեմը...

Նոր արար ես բացում

շնչով ճառագայթի,

և մատներիդ արանքով հոսում է

հավերժությունը...

ՀՐԵՇՏԱԿԻ ԹԵՎԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՄ ԵՎ ՆԱՅՈՒՄ ԻՄ... ԱՊԱԳԱՅԻՆ

Հիշողությունների
 աման: Ես քեզ գրկել եմ...
 թևերով երկնքի: Եվ օրը
 անսպան է աչքերիդ մեջ: Դու
 համբուրում ես իմ բացակայությունը
 և արբում... ինձնով:
 Ես համբուրում եմ քո բացակայությունը
 և արբում... հույսով:
 Ներկա եմք
 և բացակա
 վայրկյանի սենյակում:
 Հրաժեշտի
 կամրջով անցնում է քնծիծաղը բախտի:
 Սիրո ազատության մեկուսարանը՝
 ժամանակի աներևույթ տեղանք:
 Ոգու անդունդ:
 Հրեշտակի թևը բարձրացնում եմ
 և նայում իմ... Ապագային:
 Իմ աչքերից լրնյս է խմում
 ճանապարհը:
 Իսկ թռչունը կտցում է
 ոգին մենակության:

ՆԱՐԵԿԻՆ

Դեմքիս լռությունը
 ջութակ է կարծես
 որդուս ձեռքերում:
 Մեխակներ են ելնում
 արցունքներից հուշի:
 Ժամանակը նվագում է
 կորստի կարմիր ձայնանիշերով...
 Եվ արծագանք է
 հիշողության դուռը...
 Դիպվածի ձեռքը
 տարածության շուրթն է:
 Աստված հավաքում է նրա մանրանկար
 հիշողությունը
 կյանքի մայթերից
 և կախում սյունից տվայտանքների,
 որպես լապտեր:
 (Ճակատագրի օրն է ամպամած):
 Որդուս բառերը`
 հիշատակի ծառեր...
 Ես քայլում եմ նրա կանաչ ու
 կարմիր հետքերով,
 և ծառերից հավաքում եմ համբույրները
 ջութակի:



ԺԱՄԱՆԱԿԻ ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ

Ավլի՛ր հանգրվանը մենակության
 փշրանքներից պատրանքների,
 ավլի՛ր հույզերիդ մնացորդները
 և նետի՛ր աղբարկղի մեջ
 ճակատագրի:

...Անդունդից
 մինչև լճիս...
 Եվ ձանապարհիդ, որպես բանալի,
 պտտի՛ր անցքի մեջ
 այս Յրվանդանի...
 Առավոտի հիշողության մատույցներում
 բուսե՛լ են շուշաններ...
 Կյանքիդ դրվագները
 հայելու մասեր են,
 որտեղ արյունոտ տեսա-
 րաններ կան և մրմնո
 ցավի...

Ավլի՛ր
 փշրանքները տառապանքներիդ...
 Յույսի պտտահոճվմ է
 քո ամեն տողը...
 Քո... վերնագիրը...
 Ապագայի դեմքն է:
 Անըմբռնելի՛
 հույզերի մրրիկ: Ձյան
 մեջ թփրտացող ձկներ են

օրերդ:
 Ավլիի հանգրվանը մենակության:
 Աչքեր կան,
 որ լապտերներ են,
 ասքեր կան`
 ծաղիկներ են,
 որ բուրնում են բլեռներում: Կան
 հիշատակի փոթորիկներ,
 որոնց շուրթերին
 անհասցե դռներ են...
 Եվ բառերը... հագուստներ են,
 որ հագնում եմ ու տաքանում
 միջանցքներում ժամանակի:

ԸՆԾԱՅԱԳԻՐ

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

*Միջին Թուրքիա, այս
 բանը չափումը ու նայվածքը
 պայծառ սխալման հասցեյի վրա
 ճանաչել Հայրենի Երկրի*

Ջ. Հայրենի
 6.07.05թ.

**ՄԵՍՐՈՊ
 ՄԱՇՏՈՅՆ
 ԱՄԱՐԱՍՈՒՄ**

ԵԼՔԸ

Ես թղթին դնում եմ մի բառ,
 որպես ասույս...
 Մյուս բառն արդեն այլ մոլորակի
 բնակիչ է:
 Եվ ճանապարհս, որպես բանալի,
 պտտում եմ անցքում ճակատագրի,
 և տառապանքի ակնախոռոչում
 վառվում եմ, որպես
 տարածության լապտեր...
 Բառերս հայելու փայլուն մասեր են,
 ուր բաժան-բաժան հոսում է
 ոգին-
 ջարդված բանալին իմ ճանապարհի...
 Մենակության սուրը...
 պատյանն ազատության...
 հիշողության բիբը...
 Ապագայի դեմքը`
 կառնափարան Ոգու:
 Մենախոսությունների միջև դռներ են
 ստվերները: Քարը
 անցն է հուշի:
 Կրակի ելքը...
 Եվ գլորվող մի կափարիչ է
 ստվերը Բառի...

**Չայացքների պտտահողմում
 ելք է ավյունը Չիսուսի,
 բաժանվում եմ ես ինձանից,
 միավորվում աստղով Չեռվի,
 տեսնում` հողի մեջ եռում են
 կանաչ հունդերն արշալույսի,
 և համբույրի տիեզերք է,
 կյանք է արյունը Չիսուսի:**

**ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ՝
ՉԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏԵՐԻՆ**

Չրեշտակների թանրից բխող երկինքները
ընթերցարաններ են,
աչքերը հուշերի,
որոնք համբուրվում են խշշոցով ծառերի:

Ձայնիս ծաղկաթերթն ընկնում է,
որպես վարագույր...
Եվ բառերն ազատվում են
կապանքներից լռության:
Եվ հրդեհվում է ցանկապատը մեղքի:

Շոյում եմ ձեռքդ.
ափերս ծարավն են սպառում աղբյուրի...
Փակագծերը
(ուր գրված է՝ «Ես քեզ սիրում եմ»),
մեկուսարանի դռներ են..

Ինչ-որ մեկը գրում է իր տողը
իրականության բևեռների միջև:
Չիշողության կանչը
ուղեկցող լոյս է...
Թռչում են դռները լռության՝
հասցեներն Անհայտի:
Չորիզոնի ակնթարթը
ճանապարհիս բիբն է...

ԿԱՆՉԵՐԻ ՀՈՐԻՉՈՆԸ ԱՐՅԱՆ ԿԱԹԻԼԻ ՀՐՎԱՆԴԱՆՈՒՄ

1. Խորհուրդը լռության

Բառարան: Դաժան երանխ:
Եվ բառերի որոգայթներից
ազատվում է խորհուրդը լռության:
Իսկ բառարանի պատերից կախվել է
հրդեհը Ոգու:

2. Ելքը

Բառարանն
իր դաժան երախը բացել
և կլանում է երազանքները
դաշտանկարի,
կանչերի հորիզոնը՝
արյան կաթիլի հրվանդանում:
Ներշնչանքի ձիչը
աներևույթ աշխարհի միակ ծանապանհին է:

3. Հիշողության ավազան է

Հիշողության ավազան է
ծանապարհիս բիբը:
Ափիս մեջ թռչկոտում են
ճնճուկները հույսի:
Ներշնչանքի ձիչը
ելքն է տիեզերքի:

4. Ոգու նկարագիր

Սկզբնավորվում է ծանապարհիս դեմքը.
կանչերի հորիզոնը՝
արյան կաթիլի հրվանդանում:

ՀԱՎԱՏԻ ԴՈՒՌ

Դավիթ Եսայանին

Չուշը մաշվում է հագուստի նման
 և ծվեն-ծվեն կառչում դռներին,
 թե ավելորդ չի դառնում ոչ մի հոն,
 ոչ մի անրջանք չի դառնում անցյալ,
 ովքեր են ձայնում որպես ոգու տեր,
 քամու պես համառ ծանկռոտում հողը,-
 ինչ կողոպտված էր- մենք են կստանանք,
 ինչ մերն էր- հիմա մեզ է վկայում.-
 մենք մնացել ենք արգանդում հուշի,
 և այս երկիրը չենք վերադառնա:-
 Կծնվենք այլ տեղ մենք՝ որպես ասուպ,
 և կըզլորվի մեր աչքից արցունք:
 Եվ ժամանակի ավազների տակ
 կըտրոփի՞ մեր զարկերակը տաք:
 Ուրեմն՝ ապրենք, կերտենք՝ քանի կանք,
 թև առնենք, սիրենք և տանք տողին կյանք:



ՆԿԱՐՉԻ ՀԱՅԱՑՔԸ

Գեղանկարիչ Սամվել Գաբրիելյանին

Նկարչի հայացքից
 ընկնում է շրջանակը,
 և գույնը դառնում է հավատի խորան.
 և պոեզիայի տարածքն ընդլայնվում է
 հիշողությամբ քարի.
 և ձայների մեկուսարանում
 աչքերն են բացվում լռության.
 և ճանապարհի զարկերակում
 բաբախում է ծիածանը Ոգու.
 և տարածության նժարներով կապույտ
 կշռում է Նա իր քայլերն աստանդական
 և դնում քարե շեմին... Ապագայի.
 և բառերն իրենց հիշողությամբ
 արթնացնում են
 լրյսն հորիզոնի-
 տառապանքի փեթակ...
 Եվ ծլացող օրը`
 խայտանկար կտավ:
 Նկարչի հայացքից
 ընկնում է շրջանակը,
 և ժամը դառնում է հավատի խորան:

ԱՂՈԹՔԸ

1.

Ճանապարհս լեզվանկն է զանգի,
որով հասնում եմ դողանջին Ոգու:
Եվ լռությունն է եռում գրերի,
որ լուսաթրթիռ մանն է ծառերի...
Երգող դրո՞ւ է Անհայտը:
Տողերս (ինձնից դուրս)
հավատի լուսաբացներ են...
Ես իմ ներշնչանքն եմ
և... Անհայտի դուռը...

2.

Ձեռքերդ կողոպտո՞ւմ են իմ հոգին
նվագով ջութակի:
Լուսաբացի ճյուղերից
քաղում եմ քո համբույրը,
որպես միրգ:
Ազատության ձիչերը
սերմի պես նետո՞ւմ եմ
հերկի մեջ վաղվա:
Ուր որ է՝ կկախվի
հիշողության անձրևը
թարթիչներից Անսահմանի:

3.

Մարգարեանում են պատուհանները
բառերը որպես դռներ լռության
բացվում են դեպի հույսն Ապագայի
ես պեղում եմ իմ մենակությունը
և կողմնորոշվում նշաններով ցավի
ամեղծվածների լիցքերն են բեղուն
թռչունի թևերը զոհասեղաններ են
մարգարեանում են պատուհանները
և արթնանում է իմ մեջ բիբլիական մի ծարավ

4.

Անծանոթուհու ծոցից ընկնում է գիշերը սիրո,
որպես վարդի թերթ...

Ժամանակը տեսնում է
 իմ գրչի երազով:
 Ես ինձ կողոպտում եմ
 կտավներում Ապագայի:
 5.

Խղճի ավերակներում բուսել են
 գիշերները: Սերը
 շնչում է ոգին ճանապարհի-
 բևեռը մենակության:
 Մի դուռ
 կանչում է
 ինձ
 ճյուղով հորիզոնի:
 Փետուրների ծիածանով
 փաթաթել եմ հուշերս,
 և ցավս այրվում է,
 որպես մոմ:

6.

Հողմի ձակատից թռչող ասույթ է իմ ճանապարհը...

7.

Ճակատագրի անկյունում աղոթում է տառապանքս:
 Մորս երգերից ծաղկում է
 դեմքը հիշատակի:
 Տարածությունը կբացվի,
 որպես հիշողության բարձր...
 Եվ հորս հայացքը բարձունքներից կլուսավորի իմ ճանապարհը...

8.

Բառը դուրս է մղում իր խորքից
 մեկուսարանները...
 Թռչունը թռիչքների ստվերն է ամփոփում
 թևերի տակ...
 Աշնան ճյուղերից հոսում է հորիզոնը՝
 խոտերին թողնելով նշանագրեր...
 Ո՞վ է թևում ճանապարհով ըմբռնումների,
 որպես հիշողության ասույթ:

Եվ ճզմվում է դեմքս բևեռների միջև իրականության...
 ճանապարհս կախվել սյունից լռության
 և ճոճվում է, որպես ապսպրանքն Աստծո:

9.

Ավերակված փողոցների լռությունը
 խունացած էջերով գիրք է,
 որի միջից բառերը հատվել են
 և միացել աստանդական ոգուն քամու:
 Նշանների ավազն հոսում է
 դեմքից ճանապարհի
 և լցվում բները մրջյունների:
 Կանգնել եմ մթին էջերի արանքում,
 որպես բառ,
 և հնչյունների լուսեղեն ձեռքերով
 ամբողջացնում եմ տիեզերքը:

10.

Ժամանակը մի լար է,
 որի վրա շարվում են տողերը,
 որպես թռչուններ:
 Ճակատագրի միջանցքներից հավաքում եմ
 քայլերս,
 որպես հիշողության լապտերներ...

Հայացքս կիսվում է
 և հոսող արյունը վերադարձող
 դեմք է

Թևերիս երկինքն ընթերցում է ժամանակը,
 որպես մագաղաթի թերթ...

Հայացքիս առէջներից ելնող մեղուները
 Անսահմանի մասնիկներն են...
 Կանգնել եմ բևեռների միջև հիշողության
 և իմ ձեռքերով միավորում եմ
 Աղոթքը...



Նկարը՝ Արշիլ Գորկու

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՇՂԹԱ

ՊՈԵՄՆԵՐ

Ժամանակը հայտնաբերվում է,
որպես ակունքն Անհայտի-
խարիսխն Ապագայի:

ԾՆՈՒՆԴ ԿԱՄ ԻՆՔՆԱՌԵՐԵՍՈՒՄ ՄԱՅԻՑ ՀԵՏՈ

Գրել ժամանակի էջում,
 նույն է, թե՛ գրել վիրակապի վրա,
 գրել ճանապարհի շնչառության մեջ,
 հատուկենտ լավող քայլերում անցորդի,
 գրել երկնքի անձրևային հայացքում՝
 թռիչքով թռչունի:
 Ճանապարհի ոգուց պոկում եմ մի փետուր
 և մակագրում Անհայտի էջերի վրա...

1

Ես քայլում եմ ստվերի վրայով քառսի,
 դառնում հանգրվանը
 ոգու արարչության:
 Հետքերիս վրա բացվում են վիհերը: Ես պատվում եմ
 փետուրներով արձագանքի,
 որպես շրջանակը առնչության:
 Անորոշության բիբերը կտցահարող
 թռչուններ են
 վայրկյանները:
 Իմ մեջ արթնանում է հիշողության կղզին:
 Ներսը և դուրսը՝
 ալեկոծվող փոթորիկ:
 Ոռնացող հուշերս օրորվում են
 ցցերին կսկիծի:

Իմ ամեն քայլը կշռվում է նժարներին ոգու:
 Եվ իմաստագրկվում է տիրությունը եսի:
 Իմ հետքը դառնում է ոգու սովից արթնացող
 աներևոյթ կյանք,
 ժամանակի պատանդ:

Անհայտության սյուններն ի վեր
 ծանու է լինում լույսը: Հիշողության
 ձին:
 Եվ ծառի ճյուղը
 ծաղկած մթնոլորտ է ասեղնագործում
 վայրկյանների քարե հայացքի վրա:
 Հիշողության բառը
 զսպանակ է ոգու:
 Իմ ստվերն աղբյուր է,
 որից ելնող ուրվականները
 ծարավի հուշարձաններ են:
 Նախնիներիս ոգով
 լուսանում է բառը:
 Պատմության մեկուսարան է
 հիշողության ճիչը:
 Մաշկիս լուսանցքներում
 գիշերող ճանապարհները
 արթնանում են հետզհետե,
 վառվում, որպես հիշողության փարոսներ...
 Ակնթարթի պղնձե ճակատից
 կաթում է քրտինքը, որպես դրամ...
 Ընկնավոր է դարձել ժամանակը...
 Մի ձեռք պատուհան
 է նկարում հույսի
 կարմիր կավիճով:
 Պատերազմող երկրի սահմանները
 բողբոջում են ցավիս մեջ-
 զինվորի խիղճը` լույսի զոհասեղան:
 Ոգու հատիկներ է կտցում ճանապարհը:
 Իմ ձգտումն ինձ կնիլ է տալիս
 հայացքի ներքո Բարձրյալի:

Գրիչս այս անգամ ոչ թե գրում,
այլ բացում է հետքը առասպելի:
Չավատի խարոյկ:
Շուրթերիս մոխիրներում պեծկլտում է
երկինքը բառերի:
Լռության օվկիանոս է
անդրժամանակի թևը:
Չավատս թոթափում է իրենից
թարթիչները սովորության:
Պտտահողմի՛ երկինք:
Երազների աներևույթ հողմը
փլուզում է
աշտարակը գաղափարի:
Եվ աստղեր են ծնվում աներևույթ Գոյի
հորիզոններում:

2

Անսահմանության տարերքում եռացող
անդունդը երգի:
Երազներիս պատվանդանից ընկնում է
կշիռն Անհայտի:
Աղոթքներիս անապատում վազվզում է
երկինքը մանկության:
Չուշը ասում է:
Լռության փոթորիկ:
Չիշատակի գագաթներին վառվում է
թռիչքների լույսը -
սիրո զոհասեղան:
Լույսը գլորվում է
եզրով անդունդի,
իբրև հաց,
տիեզերական պատարագ:
Արցունքներիս մենակության ծովում

ճողփում է տառապանքիս լաստը:
 Թռչո՛ւն,
 մի՛ կտցիր աչքը հիշողության...
 Արյան բռունցքներում ծլո՛ղ
 հորիզոն կա:
 Մանկության հայացքից արձակվող
 ճանապարհները
 լուսաբացներ են...
 Հիշողության մատները շոյո՛ւմ են
 երակները աստղի:
 Հորիզո՛ն,
 մի՛ կտցիր... աչքը տարածության...
 Քարը՝
 ավետաբեր հայացքն է տողի:
 Հողը
 անհայտության սերմն է:
 Երկնքի
 հրե տերևն է բխում
 սալաքարերից...
 Ոգու բներից ելնում են ճյուղերը
 աներևույթ Գոյի:
 Անհո՛ւն,
 մի՛ կտցիր... աչքը Լռության...
 (Հայը ճամփորդում է երակներով
 երկնքի,
 որպես հոգի,
 այսուհետ՝ անտղ...):
**Ես ինձ ընդառաջ եմ գալիս
 անհայտությունից:**

3

Անապատների ծարավն է բեկվում
 իմ աչքերում:

Չուշի թևերը մեխվում են պատերին
 գիշերախն կոքի:
 Չամբույրի որոգայթ:
 Մենակությունս
 պտտահոճմ է:
 Ոտնահետքերիս ձիջերի վրա
 գալարվում է
 լուսաբացը ճանապարհների:
 Իմ և իմ միջև... ծաղկել է ծառը...
 Իսկ Անհունի աստիճաններով
 բարձրանում է
 ստվերը Քառսի...



Քանդվող ճանապարհի ժպիտը միակ
 անհեթեթության անդունդ է կարծես...
 Ավերված հիշողության արցունքնոտ դեմքը...

4

Չասնելով հատակին լռության,
 բարձրացնում եմ
 դեմքը բառի:
 Չայացքների բևեռների միջև
 կանգնել եմ,
 որպես անապատի ծարավ...
 Իսկ ինչո՞վ լցնել
 անդունդը հոգու,
 եթե հայացքը դճուրս է թռչում
 իմ դեմքից,
 որպես խցան...



Քամին համբուրում է հիշողության
 հասցեները
 և կախում շիվերից Անհայտի,
 որպես ականջօղէր:
 Ոգու օղակների միջով
 ցատկում է վագրը Տենչի:
 Տողերիս դողը
 հիշատակի հրղմ է:
 Գրիչը՝ աղոթող ձեռք,
 գրիչը՝ խորան հավատի:
 Եռում է լուսաբացը,
 որից ընկնող մի ճիչ
 կամ աստղ
 կարող է փոխել
 ուղղությունները
 ճակատագրի...
 Ելքի լաբիրինթոս...
 և խորան լույսի...
 Մենակության բևեռներին զարկվող
 տարածությունը՝
 իմ ժամանակն է:
 Յետզիետե հետքերիս օրն է ծավալվում...
 Հավատի աստղ,
 հիշողության շեմ...
**Սահմանից այն կողմ՝
 գլորվում է իմ տեսողությունը,
 որպես գնդակ...**

Հայացքիս լապտերը
 մերթ վառվում է,
 մերթ էլ հանգչում՝
 տարածությունը թողնելով խավարի մեջ...

Ես իմ հիշողության խարհիսին եմ...

Հասնելով ինձ՝
 ես դճուրս եմ մնում ընթացքից ճանապարհի...
 գտնելով բառը՝
 ես գտնում եմ ակունքը Հարության-
 բանալին Անհունի:

5

Ինձ աչքով է անում ճանապարհը հույսի,
 որպես օագիսն Անհայտի:
 Ներշնչանքի տարածքից հոսում է աղբյուրը ոգու:
 Տիեզերքի հայացքը ալպիական բույն է,
 որ հենվել է գագաթին Մասիսի
 և արարում է աշխարհի Սկիզբը...
 Աստված...

6

Տողը հորիզոնի դեղնակարմիր ցողունն է,
 որի վրա իր բույնն է հյուսում
 Անհայտությունը:
 Անհնար է գրել... ծիծեռնակների թռիչքի վրա՝
 ոգեկոչելով թևերի երկինքը...
 Հիշողության ցողունի վրա շողում է աստղը ցավի:
 Եվ քայլերից իմ հառնում է դեմքը ճանապարհի:
 Հարության կտավը:
 Հոգու դռներից թևում են հասցեները.
 հետգրությունը պատմության էջն է:
 Ցեղասպանության դուռը...
 փակվող սպի՞ է...
 Տառապանքի 100-րդ շրջապտոնյուրը...
 1915-ը
 խղճի լապտեր է,-
 հիշատակի պտտահողմ...

7

Ոգու տիեզերքն է արարում իր դուռը՝
 հարության բառը:
 Հայացքի զարկերակում տրոփում է լույսը:
 Հիշողության բողբոջներում գտնում եմ քո աչքերը՝
 Ներշնչանքի հասցեները...
 Աստղի ընթացքով ճանապարհորդում եմ,
 որպես բառ,
 հիշողության պատարագ...

8

Արցունքների ձերմակ աղավնիները կտցում են
 իմ ափից
 մենակության հատիկները դեղին:
 Հիշողության վաղը
 աստիճաններին խաղացող մանուկ է...:

Ես... շիվն եմ լույսի:
 Տիեզերքի ոգին...

□

Թե ոգու դուռ է հայացքդ, սեր իմ,
 թող բացեմ դեպի ծառն Անսահմանի,
 որի ճյուղերը-խշշոց տառապանքի,
 հրաժեշտ են տալիս ասուպներին վերին:

Թե ոգու դուռ է անունդ, սեր իմ,
 թող բացեմ դեպի խորհուրդը ծովի,
 որի աչքերից ձկներ են հորդում,
 որպես արցունքները Անսահմանի:

Թե ոգու դուռ է քո ձայնը, սեր իմ,
 թող բացեմ դեպի հույսն օրորոցի,

ուր օրորվում է ապագայի օրը՝
 Ելքը Անհայտի,
 իսկ կյանքն անսպառ խորհրդերն է Աստղի...

9

Շուրթերիս համբույրն անհասցե նամակ է...
 Շուրթերիս ծարավն են սպառում հասցեները...
 Գգվանքներիս աստղերը օրորոցներ են...
 Անսահմանի աչքերը... ընթերցողներ են...

10

Ցավի հանգրվանները ճերմակել են
 մազերիս պես:
 Արցունքների թևեր են բառերը,
 որ չափում են երկինքը լռության
 և ընկնում... հուշի երկաթգծերի վրա...
 Երակներիս գարունը հատում է
 շեմը ճակատագրի,
 հոգու դռներից թևում են հասցեները
 և բներ հյուսում
 շնչառության մեջ ճանապարհների...
 Երգող դուռ է
 քո անունը, տարածություն:
 Առեղծվածի սյունը...

11

**Իմ բառերից բուսնում է ժամանակը,
 որպես ձնծաղիկ:
 Իմ երակներում հոսում է արյունը՝
 ճանապարհի ոգին:
 Հիշողության դուռը...
 սիրո ահազանգն է:**

12

Աղոթող երկնքի թարթիչներից
կախվել է անձրևը,
որպես պատարան՝
Ապագայի ակնթարթն է ազատագրվում,
որպես զոհասեղան:
Եվ ապագայի մարդը քայլում է,
որպես տիեզերքի բանալին:

13

Ստվերս
շարժվում է անցքի մեջ հիշողության,
որպես բանալի:
(Ես իմ պատանդն եմ):
Եվ կայանում է ճանապարհը՝ որպես
հիշողության միջանցք:
(Ես... իմ երանգն եմ):
Մի ձեռք ջնջել է հրեշտակի թևից
հասցեն հարության
(Ես իմ ստվերն եմ):
Եվ տառապանքը՝
զոհասեղանն Ոգու:
(Ես... իմ անդունդն եմ):
Ծնունդ է սա,
թե ինքնառեքսում
կշիռներում Անհայտի...
(Ես... իմ առեղծվածն եմ):
Յավատի արահետը ձգվում է, ինչպես
հիշատակի լոյս...
(Ես իմ... ճանապարհն եմ):

14

Անհասության կետ
Լոյսի հայացքը մասն է հիշողության

Անծանաթուհու ծոցում հավվում է մոմը աղոթքի
 և լուսավորում իմ ճանապարհը
 Մի դուռ է բացվում
 դեպի տիեզերական հաղորդակցության
 պատարան՝

Անհասության կետը
 ինքնամղումն է Ոգու
 Տարածության ձեռքերում բացվում է վայրկյանը
 որպես ծաղիկ
 Շնչիր բուրմունքը հեռավորության
 և աճիր ցավից
 որպես լույս
 Յետո կպառկես համբերության վրա
 լեռների
 որ հանգստանաս
 Անդունդից մինչև լույս`
 Անհասության կետ-
 Աչքերդ կփակի
 փետուրը հիշողության
(Ես իմ հիշատակն եմ)

15

Ահա ելքը
 Յողի գիշերվա մեջ կայանում է
 ձնծաղիկը
 որպես տեսադաշտն Անհունի
 Եվ օրը հիշողության բռունցքներում
 փշրում է քարը-
 իմ ժամանակը
(Ես իմ... Յեռուն եմ):

□

Անիմաստ է գրել
 հորիզոնի սպիտակ մտքերի վրա...

Բանվ է
բացահայտել դեմքը ծանապարհի...
Բեկորներով հյուսված ծանապարհի
քարտեզ: Շուշիի լրնյսը:
Աշոտ Բեկորի աստղային երթից
մնաց մի արձան, մի անուն, մի սյուն,
մնաց Երազի հավիտենություն...



Եվ տիեզերքն է բացվում,
որպես ձայնանիշերի
թագավորություն:
Լռության խմբավարությամբ
ժամանում է Տեսիլը`
կարմիր վերնաշապիկով:
Ձայնի տարերքում
Արցախի վանդն է:
Եվ հիշողության ստեղներով
սահում է ձեռքը Կամիլայի,
հանելով խորքից ոգու
Հարության թռչուններ...
Մանկան քայլերը`
ցորենի հատիկներ...
Քարի և իմ միջև...
հիշատակի հողմ է...
Եվ Ջաքարի առջև
փռված երգի ծովն է...
«Մեր շունչը ծաղիկը բացեց սերունդների համար`
իբրև լրնյս» «ՁՈՆ*»

*Ամերիկահայ երգահան Միհրան Էսեգույանի երաժշտությամբ և Ռոբերտ Եսայանի խոսքով ստեղծվել է «Ձոն» երգը` նվիրված զոհված ազատամարտիկների հիշատակին, որը մտել է Շուշիի «Վարանդա» երգչախմբի երգացանկը:

16

Գարնան հասցեն
 հողում խլրտացող սերմ է-
 Ապագայի դեմքը:
 Յերկի մեջ ծլում են հորիզոնները...
 Ճախրանքի սահմանները թափվում են
 թևերից Անհունի,
 որպես զսպանակներ:
 Տողը կափարիչ չէ,
 այլ՝ ժամանակի ձեռքից ընկնող
 Անսահմանի սերմ...
 Մի դրու է բացվում սահմանի վրա Ոգևորության...
Ես իմ... Անհունն եմ...

17

Երբ ես երկնում եմ, ստեղծում եմ
 ներշնչանքի նոր ասպարեզ: Երբ ես
 գրում եմ, հարություն են առնում
 ծանապարհները...
 Ճակատս դառնում է ճյուղավոր հույսի
 շտեմարան:

Բառը՝ աղոթքի համար ընտրված
 խորան:
 Իսկ անձրևի օրորոցներում
 բարուրվում են
 տարածությունները...
 Ճակատագրի անկյունադարձում
 (մերկ է ոգին հողի)
 կիսվում է օրը,
 որպես գիրք,
 իսկ ընթերցողը դեռ բացակա է...

**Ժամանակը հայտնաբերվում է,
որպես ակունքն Անհայտի-
խարիսխն Ապագայի:**

Տարածության ձեռքերից
ցայտում է ծաղիկը,
ինչպես հորս հայացքն՝
ապակուց պատուհանի...
Ոգու ցանկապատի տակով հոսող առուն
մի ծաղկաթերթ է տանում հեռուներին.
Վերածնվող ժամանակի ոսկեերիզ թանգր...

18

Թափուր պատվանդան է ժամանակը:
Հիշողության բևեռից հանում եմ
լապտերը ցավի:
Լուսավորվում է ինքնամոտեցման անդունդը:
Թափուր պատվանդան է ժամանակը,
որին հենվողը՝ ընկնում է
իբրև դեմքը ճանապարհի:
Երագի դուռ է հիշողության քայլը:

19

Հիշողության պատարագները
ունկերն են տարածության:
Աղոթող ձեռքերի երկինքներով
փաթաթում եմ
վերքերը քամու:
Ուր որ է՝ կկախվի անձրևը
կտուցներից թռչունների...

□

Ցեղասպանության գույժը պրկվում է,
որպես բռունցք,
ցավի պատարագ...

20

Բառը կախվել է թևերից ներշնչանքների:
Ուր որ է՝ կընկնի բարձունքներից,
որպես...նահատակ:
Ցավի խորքերից կբարձրանամ
դատարկության աստղը:

□

**Քամու թևերում փոթորկվում է
հիշողությունը խաչքարի:
Նախիջևան: Այսուհետ՝
Մեծ լռության մի մասը...
Հիշատակի բռննցքը...
Հաղորդակցության... վիճի...**

21

Ճակատագրի գրատախտակին
հրեշտակը գրել է մի բառ
Լուսի հայացքը թռչունի բույն
Եվ միայնակ մի ծիծեռնակ
ստվերների փողոցներն է ավլում
զիզազաձև թռիչքներով
Անցյալն ու ներկան նստել են
Ապագայի լարի վրա
Հեռվում ծաղկել է սերը
որպես հորիզոնի ձնծաղիկ

**Ես ինձ ընդառանջ եմ գալիս
Ապագայից...**

Խ ՈՒՎՔ

Հայոց երկրի շուրթը պրկել որպես աղեղ՝
 Ժամանակը խոսքն է նետի պես արձակում,
 Որ սուրալով տարածքներում տիեզերքի՝
 Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ,
 Որտեղ խրվի ցավամոռաց ու երերա.
 «Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»:

Խրճիթներում...անկոչ հյուր է դարձել օդը:
 Մանուկների արյունոտված ատամներից,
 Որ արդար են ու միամիտ կաթի նման,
 Կարմրում է ակամայից... հայոց բառը.
 Լույս ու մութի միջեւ օրն է հոգեվարում,
 Եվ վիժում է արգանդի մեջ լուսաբացը...

Խուլ երկինքն է անեծքներից կոտորակվում,
 Խուլ ջրերը էլ չեն պայթում բողբոջի պես,
 Եվ ժայռերը ավանդաշուք, որ լոկ արծվի
 Կտցից են սովոր պրկել ստվերն իրենց -
 Շվարել էին ողբագալար գետերի մեջ՝
 Նկատելով արտացոլքը իրենց կարմիր:

Մայր կածանը վիզն է թեքում գոմեշի պես
 Դեպի գուռը, ուր ծառերի ստվերները
 Հովհարներն են իրենց բացել: Եվ կովերը,
 Ջրի պատրանք որոճալով, կոհակվում են,
 Պիրկ կողերին կրելով տաք բույրերի պարս,
 Մինչ աչքերում... մի հեռահան ողբ է ձյունում...

Եվ արտերի լուսակոհակ բարբառը սուրբ,
Որ աստղահամ քրտինքով է լցվել զնգուն
Եվ օրորվել տանիքների շառավղով,
Արդ հավքերն են կտցահարում՝ մերթ խրտնելով
Իրենք իրենց ձայնի շեղբից, անբնական
Լռությունից, որ քաշում է ուժով վիհի...

Իսկ մշակի այլուրահամ հույսը հիմա
Նրա շվար խռպոցի մեջ աչքը բացում
Եվ փակում է՝ կոպի տակ բյուր հղացումներ,
Մոմի բոցի նման ձգվող դռների լաց,
Երազանքներ՝ սովի նման անհագ ու խոր,
Եվ աղաղակ անծայրածիր ու ահավոր:

Չայոց երկրի շուրթը պրկել որպես աղեղ՝
Ժամանակը խոսքն է նետի պես արձակում,
Որ սուրալով տարածքներում տիեզերքի՝
Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ,
Որտեղ խրվի ցավամոռաց ու երերա.
«Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»:

Կեռ թրերը պողպատաոխ շառաչյունով
Պատյաններն են լքում իրենց, ինչպես օձը՝
Մաշկը իր հին: Եվ խրվելով անմեղ սրտեր՝
Չեն հագնում. նրանց իղձն են ձեղքում նաև
Ու դուրս հանվում, որպես կարմիր կիսալուսին,
Որի ծայրին պսպղում է տենչն ապրելու...

Խաղաղ հունձքի երազը քո մեծ է այնքան,
 Որ այն դուրս է մղել միշտ էլ ատելության
 Բոցն ապստամբ: Սակայն հիմա, ամիս, հայրենիք,
 Երբ քո որդոց ծաղկամրմունջ ոտքերն անգամ
 Սկսում են... թքել իրենց բախտի վրա,
 Նաև մահվան, որ խորթ է ու անբնական,

Չիմա՛, երբ քո օրորոցը կուրանո՛ւմ է
 Աչքի նման, երբ զանգերը քո գոյության
 Քիչ է մնում կորցնեն նաև վերջին լեզվակն
 Չիշողության, երբ այլևս աղբյուրներդ
 Երգ չեն հյուսում ստվերներից եղնիկների,
 Որոնց հետքերն իրար շուրթից աստղերի տեղ

Մահ են պոկում,- հիմա՛ էլ դու պիտի լռես
 Ու չհանես Ավարայրի գոռ պատյանից
 Սմբակացայտ փոշիներից սրված թուրդ,
 Չիմա՛ էլ դու կհապաղես խղճմտանքի
 Անդունդի մեջ՝ կարմիր ծաղրն այս տանելով
 Մի լռությամբ, որ... պատանք է դառնում միայն:

Ա՛խ հայրենիք, մեծ է եղել խաղաղ հունձքի
 Երազը քո և ստեղծումի խոյանքներդ՝
 Անպարագիծ. ու պաշտել ես դու բիրլիական
 Մի սրբությամբ աղ ու հացի զրույցն անբառ,
 Եվ գալիքն է ձգտել անգամ քեզ մերձենալ,
 Ըմպել լույսդ, թերթել ոգիդ մագաղաթյա՛...

Չիմամ... քոչվոր ոճիրների մի հոծ ամբոխ
 Իր խեղճ մտքի կույր խավարից հանում է ոխ.
 Դի՛նջ խեղում է խաչքարածն մի հիացմունք,
 Դարաերակ ամեն երազ ու սրբություն,-
 Եվ այդքանից հետո նաև... տեր դառնալով
 Այլաքրտինք խոյանքների ու պատմության...

Թուհ, ինչքան է անտանելի այս բարբարոս
 Խլվլոցը այլասերման, ինչքան մութ ու
 Անդիմադիր: Տեր իմ Աստված, անդիմադիր.
 Չապա ու՛ր է քո կայծակը՝ ձեռքդ արդար,
 (Գուցե այլուր նա իր շանթե շեղբով հիմա
 Վահանու՛մ է նույն թաթի տակ կոտորակվող

Չույս ազգերին... Օ՛հ, խռպոտ է ամեն երազ,
 Ամեն ձգտում սաղմ է կրում իր մեջ մահվան),
 Թող գա՛... Եվ մեր ընդվզումը թող պարսպվի,
 Որ չբեկվենք արդար շավղից լինելության:
 Աստված, ո՛ր է ձեռքդ գորեղ... Չէ որ դու կանս,
 Եվ չեն եղել մտահնար վախ ու կապանք:

Չայոց երկրի շուրթը պրկել որպես աղեղ՝
 Ժամանակը խոսքն է նետի պես արձակում,
 Որ սուրալով տարածքներում տիեզերքի՝
 Չի գտնում ծով լայնության մեջ խղճի մի կետ,
 Որտեղ խրվի ցավամոռաց ու երերա.
 «Արդարություն, թող ես թքնեմ քու ճակատիդ»:

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐ

Եվ հաղթանակ չկա: Միայն՝ հաղթահարում:

Ռ. Մ. Ռիլկե

ԵԼԱԿԵՏ

*Ես չգիտեի,
Որ մի աչքիս մեջ
Աշխարհն է մեռնում,
Մյուսի մեջ՝ ծնվում...*

*

Ես ուզում էի հրաշքներ քամել
Ծաղկաթերթերից առեղծվածներիդ
Ու գնալ անվերջ երակիս միջով՝
Փնտրումի զորեղ հյուլեին կպած.
Տենչում էի քո երկինքները նոր
Բառերի կապույտ լուսամուտներից
Յդել անծրար հողին մշտաեռ,
Անհունին ձուլվող իմ տաք խոհերից
Ծիածանների ճուրհերը քամել
Իմ երազների ակունքների մեջ
Եվ մորմոքների վիհերի վրա:
Գույների արթուն զգայարանով
Շունչն էի փնտրում ես Գեղեցիկի
Ժամանակների հևոցների մեջ
Եվ իրարամերժ շեղբերի վրա.
Չէ որ այդ շունչն է առանցքը Երկրի:
Ես՝ որպես նրա հյուլեն մտածող,
Շուրթերիս ճերմակ արահետներով
Պիտի ձգեի նրա առաջին

Ղողանջը,
 Բույրը
 Եվ լույսը քամված...
 Ու ես ձգեցի.
 Եվ իմ շուրթերը...
 Քարացան
 Նրա...
 Դողից
 Արնահամ...
 Յուշերի լավան սկսեց շարժվել
 Իմ ոտքերի տակ: Կասկածանքների
 Ժեռ սապատները խորասուզվեցին
 Յորիզոնի մեջ: Մարմինս ի վեր
 Ելավ գոլորշին բրածոյացած
 Ընդվզումների: Ելան կրքերի
 Քարավանները՝ իրենց մացառոտ
 Կիրճերը լքած,
 Խաղաղված փառքի փոշիներն ելան,
 Ելան խորքերը և աստվածները՝
 Ինձ դարձնելով աղեղ մի պրկված,
 Որից արձակվեց նետ մի անվրեպ-
 ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

*

Երակիս կարմիր անապատներում քամին հռհռաց.
 Օրը կիսվել էր, և քղանցքներից արյուն էր կաթում
 Լույսի անհանգիստ ու խելակորոյս անհունի վրա...

Ելևէջների ու կարոտների թափոր մի անտուն
 Գնում էր՝ խաչված իր երազների հրե սյուներին,
 Եվ Գողգոթայի ճանապարհները սուզով էր պատում:

Ու կծկվում էր անգամ ավազի մկանը խաղաղ.
Մեղմ բարձրանում էր համաստեղությամբ թախծոտ աստղերի
Լուսինը՝ որպես ավերված թոնրի դեղին աղաղակ:

Ավերակներում ննջում էր անգամ քամին մոխրացած,
Իսկ ոգիները ստվերների պես դեռ գգվում էին
Իրենց երազի դիակն անպատանք, մի պահ մոռացած,

Որ ժամանակի ջիղը հանված է և չունի նա խիղճ.-
Երբ դարն է լալիս ակնթարթի մեջ, նրա արցունքը
Միշտ լինում է սև ու զարհուրելի, կոչվելով... մոխիր:

Իսկ լուսակոհակ պատրանքները դեռ օրորվում էին
Մարդկային մտքի քարանձավաշունչ վիհերի վրա,
Եվ մոխրանում էր իրերի լեզուն՝ շոնչն աստվածային:

Ինչ ստեղծել էին հանձարի շունչն ու քրտինքը լույսի,
Աստվածանված իրենց բարձունքից ընկնում էին վար:
Յողի վերքերում շրջող ասուպ էր հետքը Յիսուսի:

Ինչ-որ սլացք էր խտացված լույսի ու մուրճի աղոթք,
Ինչ-որ անուրջ էր ու քարակոհակ մի նավարկություն,
Որից ցոլք էին առնում ու երազ դարերը աղոտ,

Ինչ-որ կարկաչ էր ու աստվածամետ մտքի ընդվզում
(Ասես Աստված էր քարի ճակատին ասեղնագործել
Լուսնի շողերի սահուն ու դաշըն տուրևառություն),

Մոխրանում էին ակնթարթների արգանդների մեջ,
Մոխրանում էին անտարբերության քարե կոպի տակ,
Եվ դժոխային մի զարհուրանք էր պատում մեկընդմեջ

Բնության ոգուն և Գեղեցիկի ստինքներին տաք:

Ելևէջների ու կարոտների թափոր մի անտուն
Գնում էր՝ խաչված իր երազների հրե սյուններին,
Եվ Գողգոթայի ճանապարհները սուգով էր պատում:

Ես երանգ էի ավագում խրվող պապիս աչքերում,
Ես բուրմունք էի, հղացման տեսիլ ու աստղի առէջ,-
Իսկ մահը հույսի խավարախարխափ հատակն էր քերում:

Յետքի ճիչ էի ճանապարհների ծալքում շուլաված
Եվ մի հրաբիբ մոն էի պապիս մտքի խորանում,
Եվ անհայտության քղանցքը պատռող ծիլ էի անվախ:

Ես գոյատևման ակունքն էի և հոլովվող հյուլեն,
Իմ մեջ հավերժի գաղտնիքն էր ապրում, որպես առեղծված:
Թախիծ էր ծնվում իմ հղացման մեջ ծվեն առ ծվեն,

Կոհակ առ կոհակ անուրջ էր ծծվում ու բողոք քարե,
Յայացք էր ծծվում ու պղնձանում արմատներիս մեջ,-
Իսկ Աստված վերից հղկում էր անդուլ խոսքս մարմարե:

Բայց Գեղեցիկի հոգեվարք տեսնող հորիզոնը ծեր
Իր վրա փակվող մի կոպ էր դարձել, որի արցունքը
Թե չքարանար-պիտի սկսվեր... Մի նոր Ջրհեղեղ:

Մեր օրորոցվող արյան մեջ պիտի զնգացներ հույսեր
Եվ մեր երակի լուսաթաղանթից փշի պես հաներ
Վիժած հետքերի տափաստանահոտ սամումները սև:

Մեր կոթողների հառաչն էր ելնում ամեն մի բառից,
Ամեն ածական (ուր էլ որ դրվեր) իր փեղկը դեպի
Ավերակներն էր բացում ու դեպի... աղոթքը բափի:

Ա՛խ, չէին փրկվել կածաններն անգամ խելագարվելուց,
 Լեգենդից պոկվել ու նետվել էին անդունդները մույժ՝
 Դեռ աղաղակող վերջին հետքերի սլաքին հլո՛ւ...

Երկինքն էր հոսում ու ընդարձակվում հողի մաշկի տակ,
 Դրանից սակայն չէին բռնկվում առէջներն օդի.-
 Արյունն էր դարձել հայոց լեռների գագաթներին թա՛գ:

Տեղ-տեղ հավատի ծվեններ էին վառվում սնոտի,
 Սակայն հրացայտ մի կաթ արյունն էր երգում պատարագ
 Չանգչող մոմերի բիբերի վրա ու ծաղկաթերթի:

*

Ասքեր են շարժվում մամուռների տակ,
 Լույսը չի՛ գրկվել հիշողությունից,
 Չուշն է աղոթում ծերպերին ձյունի
 Եվ խաչակնքում հորիզոնով տաք:

Ես գնում եմ և Անհունն է գերի,
 Ես գնում եմ և ճանապարհն է բաց,
 Մի հույս է մնում երկնքի պես թաց՝
 Չենված սպիտակ ոտնահետքերիս:

Իմ և քո միջև հավատի տեղակ,
 Լույսի, երազի, երգի փոխարեն-
 Բիբլիական բախտ-սեպված է դարեր-
 Քարտեզը, որպես մի զոհասեղան:

*Նահատակների շնչից հրեղեն
 Սկսել է հալվել մետաղը անգամ
 Նման մի համր մեղսաքավությամբ.
 Ես այդ շնչի մեջ խրվեցի՝ որպես
 ՉԱՎԱՏԱՍՔԻ ՍԱՂՍ:*

*

Ես...

Չգիտեի՛,

Որ մի աչքիս մեջ

Աշխարհն է մեռնում,

Մյուսի մեջ՝ ծնվում...

Չազար վիհերի շուրթերից քամված

Ահն է կաթկթել մեր ամեն տառի

Չորիզոնաշունչ խլրտման վրա,

Բայց հեռուներն են մայրացել դարձյալ

Քղանցքների տակ ամեն մի բառի,

Ամեն մի դարձվածք Գալիքի շնչին

Ձուլվել է ուրույն աստղակամարով,

Ամեն ստորակետ, շեշտ կամ փակագիծ

Սարսուռներով են լցվել, ինչպես մոր

Ստինքը՝ կաթնով...

Մոռացման հարը այսքան հեշտությամբ

Դեռ կույ չի տվել ոչ մի հայ կոկորդ,

Եվ ոչ մի շրթունք այսքան հեշտությամբ

Սաղմերի վրա իր գալիքնաեռ

Չի ցնցուղել դեռ... խելակորոնյս մահ...

Այսքան հեշտությամբ ոչ մի հայ անուն

Չի ծխնելույզվել օտար թեքումով,

Ոչ մի հայ երազ այսքան հեշտությամբ

Օտար ավյունի պատվաստ-կցումով

Դեռ չի խարխափել

Դեռ չի խարխափել...

Անորոշությամբ այսքան ծանրաբեռ...

Երբ ծամփաները նժարների պես

Տարրերվում են շնչից բևեռի,

*Տարութերվում են, ախ, պարանպ այնպես,
Կարծես գուժում են, որ գողացված է
Կշռաքարն հայոց բիրբլիական բախտի...*

*

...Եվ իմ երակը,
Որ մերթ պարսպվում
Հրոսակների մոտալուտ շնչից,
Մերթ ակոսվում է
Արշալուսաեռ խուտուտից սերմի,
Որ մերթ գմբեթվում
Մեր քարակոհակ հղացումների հանգույցը որպես,
Մերթ բարուրվում է
Ծիածանաբույր երազանքներով,
Որ մերթ կամրջվում մրջյունի անբառ հիացքի համար,
Մերթ էլ ոռնում է
Վրեժի անգուսպ քարերը փշրող իր արմատներով,
Որ մերթ դառնում է
Լվացարանը մոլոր կրքերի,
Մերթ զսպաշապիկ`
Իմ կարոտների սլացքն օղակող,-
Թանգարանի խուլ պատերի նման
Լռում երբեմն
Եվ անպատասխան այդ լռությունից
Խելագարության բոցեր է պոկում.
(Ո՞վ է հետքերիս աչքերը փակում
Մոխրափոշով կամ ավազի թևով.-
Դա անօգուտ է և ծիծաղելի-
Նրանք տեսնում են հորիզոններով...):
Ինչքան սուզվում են ընդերքը հուշի-
Այնքան ես կյանքից վեր եմ բարձրանում,

Սակայն երկփեղկված ոտքերիս միջև
 Նույնքան ստվերս է մութով ծանրանում:
*Չսպաշապհին է քարտեզը երկրի,
 Որի արնամած փեղկերն է բախում
 Իմ կիսված հողն իր արշալույսներով...*
Քարտեզն այդ խնկի է.
*Հողի խելագար ու ըմբոստ եռքից
 Եվ պտտահողմից
 Կթռչի մի օր,
 Ինչպես...*
Խցանք... կյանքի ակունքից:
 Թող պատրանքն անգամ լինի հողեղեն,
 Բայց պատրանքային չլինի երբեք
 Իմ արյունակից ու կիսված հողը,
 Ուր ավանդաշուք դարերն են եռում
 Իրենց խորքերով դեռ զսպանակված,
 Եվ գալիքների արգանդում փակված`
 Կյանքն է հաղորդվում ելքերին Աստծո...

ՏԱՌԱՊԱՆՔԻ ՀԵՏ

Նահատակների հուշից կարծրացած`
 Հողն ընդլայնվում է մի պատարագով,
 Որ թռչունների շնչից է հյուսված,
 Փնջված` կուսական երգերի թագով:

Ես... արցունք չունեմ: Քրքրված, քամված
 Կանգնել եմ շեմին տիեզերական
 Եվ անիրական փոփոխումների.
 Երակիս լեզուն արյունս է անմահ:

Կանգնել եմ: Թե հենց խրված եմ հողում:
Երկինքը շնչիս երկնամերձ դողով
Աստղաբույլեր է դեռ տեղափոխում,
Չորիզոնն՝ անցնում մարմնիս աղեղով...

Իսկ գրչիս ծայրին... իմ շունչն է, որով
Չանգուցաթելն եմ բացում պահերի
Եվ իմ հետքերի արգանդում ննջող
Ապագան՝ զատում ոխակալ մահից:

Եվ մի վայրկյանում բախվում են իրար
Կարոտ ու հրճվանք, անուրջ ու թախիծ,
Բախվում են, ինչպես մերկ, ճյուղատարած
Կայծակի շղթան՝ լեռան շեղբերին...

Խավարը նույնն է, ինչ լուսաբացը,
Ինչ փոյթ, դու օդ ես շնչում, թե փոշի-
Երբ ուղեղիդ մեջ նստած է ցանցը,
Եվ չի անջատվում անգամ գոլորշի
Ո՛չ քո խոհերից (հաշմանդամ դարձած),
Ո՛չ քո անունից (վահան երբեմնի),
Ո՛չ դեմքից, ձայնից (ջաղաց ջրատված),
Ո՛չ էլ քո շնչից՝ պատմական ու հին:

Ընթացքից դուրս ես դու լուսնոտի պես,
Ո՛չ շոյանք կզգաս, ո՛չ մրմուռ խոցի-
Երբ քո բերանը բացում ես այնպես,
Ասես դռնակ է գերեզմանոցի:

Ասես ոչ մի շունչ ու նշույլ չկա
 Մայրենի լեզվիդ հաղթ լեռնապարից,
 Ո՛չ ունեցել ես առասպելապատ
 Արմատներ, ո՛չ էլ խոյանքներ տառի:

Ո՛չ մահ ես տեսել, ո՛չ կործանման ահ,
 Ո՛չ անուրջներ ես քամել տարագիր
 Բախտի շրթունքից, ո՛չ էլ ահասաստ
 Եվ դողդրջաքայլ մոտեցել ափին

Ու նեղուցներին ցավո՞տ խնդության.
 Դու հայտնվել ես այս երկնքի տակ
 Կարծես հենց հիմա՛, ոչ դարեր առաջ.
 Կարծես հենց հիմա՛, ոչ դարեր առաջ,

Եվ ուղեղիդ մեջ նստել է մի ցանց
 Կարծես հենց հիմա, ոչ դարեր առաջ,
 Նստել է համառ մաքսանենգի պես՝
 Խառնելով իրար դժոխք ու դրախտ:-

Նստել է... և իր ստվերը փռել
 Կնճիռների մեջ քո քրտնաբարբառ,
 Գորշ նախնիների քոչվոր շուքի հետ
 Փռել ստվերի ստվերն էլ թռռան:

Այդպես... սկսել է քո լույսով քեզ հետ
 Առևտուր մի պերճ ու միահոսանք,
 Տափակացրել ամեն շունչ ու հետք,
 Դարձրել դրոշմ... դրամի՛ վրա...

*Բայց քայլում ես դեռ այս երկնքի տակ,
Որպես մի երկինք՝ կայծակներով լի,
Եվ մի բուռ հողն ես կրում, որպես թագ
Տրորված, բայց նոր աշխարհով հիվ:*

Խավարը նույնն է, ինչ լուսաբացը,
Ի՞նչ փույթ, դու օդ ես շնչում, թե փոշի-
Երբ ուղեղիդ մեջ նստած է ցանցը,
Եվ չի անջատվում անգամ գոլորշի
Ո՛չ քո խոհերից (հաշմանդամ դարձած),
Ո՛չ քո անունից (վահան երբեմնի),
Ո՛չ դեմքից, ձայնից (ջաղաց ջրատված),
Ո՛չ էլ քո շնչից՝ պատմական ու հին:

Եվ կշիռներն են դառնում անկշիռ
Տարածության մեջ ձգող կամ վանող
Եվ աղերսում են հավատի մի շիթ՝
Իրենց հաստատող և կամ կործանող:

*Արդ. Քննողն անգամ և Դատողը մեծ՝
Շարժվելով դեպի խորքը իրերի,
Դեռ մակերեսի փառք չհատած՝
Ետ է շարտվում ահից խորքերի՝
Իրեն զգալով նույնքան մեղսակից,
Նույնքան հանցապարտ ու խավարասեր,
Ետ է ընկրկում - սո՛ւր լինի ասես,
Մի սո՛ւր՝ ետ քաշված իր իսկ պատյանի՛ց...*

.....
Խառնակությունն այս ցրբ է սկսվել
Եվ որտե՞ղ պիտի մի օր վերջանա-

Անսեռ գրքերի պատյանների մեջ,
Թե՛...մարդկայնության անդունդի՛ վրա...

*

Մեր դեմքի դեմքը երբ է բացվելու,
Այս տարածության ո՞ր կետի վրա.
Ի՞նչ ավիքով է շատրվանելու
Անլեզու խորքի բուրվառն առ Աստված:

Հապա մեր շարժման շարժման շարժումը
Ո՞ր շարժման մեջ է սրբագործվելու,
Երբ մեր հայացքի հայացքը մոմե
Սարսափում է մեր խորքը նայելուց:

Մեր կեղծ քայլերի արձագանքն անդուռ
Սեգ բարձունքներից կհարվածի մեզ,-
Էհ, քարշ ենք տալիս մենք մեր քայլերում
Ինքնախաբության դիմակներ անձև...

*Երբ ամեն ձայնի մեջ կա մի երկիր,
Խնդալու ձևեր, թախծելու առիթ
Եվ «կա-չկայի» պայքար անմեկին,-
Եվ դրանով է կյանքը անառիկ:*

*Այն ո՞վ է ուզում ձայներն արդուկել,
Երկիրը մատնել անորոշության,
Նա՛, որ ձգտումի պատվանդանն է թեք
Եվ գահավիժող աչքը... երկվության...*

**ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ
ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Լռում եմ. թղթի երակն է պայթում,
Որպես լուսանցքը ճակատագրի,
Խոսում եմ. ծայնս տիեզերածիր
Մի լռություն է կրկնապատկում:

Նյութն ինձ մղում է դեպի հայացքս,
Յայացքս՝ դեպի նյութը շարունակ,-
Որտեղ հատում կա-այնտեղ է կյանքը
Ընդլայնվում՝ մինչև... ոլորտներն ունայն...

Մի անտես երազ զնգում է օդում
Եվ կոպերիս տակ փոխարկվում դողի,
Անցյալս իմ տեղ քայլեր է զոդում
Ճանապարհների փոշոտ խոհերին:

Մի լռություն է ծանրացել շուրթիս,
Որից խաչքարեր պիտի ես տաշեմ
Եվ հիշողության կապույտ նշաններ
Թողնելով՝ անցնեմ Դժոխքը Խոսքի:

*

Արդուկված մի իղձ ու մի հառաչանք
Ուսած՝ ելնում եմ Լեռը դաշնության.-
Գուցե թե բառս մի հայացքաչափ
Բացված աղերսն է բանականության:

Անտարբերության շքահանդեսից
Քայլերիս անտակ անդունդն է սերում,-

Կամ գեթ փրկություն մահվան այս ծեսից,
(Թե՛... լույսը սաղմի մեջ է ավերվում...):

*Թե ես ապրում եմ - ո՛վ է մեռածը,
Թե սա՛ է կյանքը - դժոխքը ո՞րն է:
Իմ ձայնի մեջ կան խեղդվողի ձիչեր,
Իսկ իմ ձայնից դուրս-նույն սև անդրորն է...*

Արձանանում եմ՝ հենած ուսերիս
Արագությունը ժամանակների,
Արձանանում եմ. թափվում է վերից
Ձայնդ՝ երանքը ծնվող աստղերի:

Ձայնդ՝ ուր հիմա ապրում եմ, որպես
Աղոթարանում առեղծվածների,
Մերթ այնքան շռայլ, մերթ այնքան որբ է,
Լռած հատանկն է ավերակների:
Մերթ էլ փրփրած տարերքի նման
Բարձրացնում է ինձ կարոտի ափեր,
Ես իմ երազով - աշխարհն է ունայն -
Գոյի՞դ ակունքն եմ կամեցել չափել -
Մի ադամանդե քրտինքի՞ նման
Ապրել ու ապրել ձայնիդ լուսանցքում,
Կախվել քո Լեռան մղձավանջն ի վար՝
ԻՐԲԵՎ ԵՐԱԶԻ ԱՍՏՂԱՅԻՆ ԹԱՐԹՈՒՄ:

ՌԵՔՎԻԵՄ

*Սև սամուճը եղեռնական
մոլեգնում է Արցախսա սուրբ լեռների մեջ:*
Վարդան Զակոբյան

*Մի բուռ խավար թաղելով հողում՝
սպասում են (թուրքերը),
թե ուր որ է բուսնելու է լուսաբացը,
այնինչ ելնում են հողաթմբից ծաղիկներ
Ոսկորի՛...*

Ռոբերտ Եսայան

Հայաստան,
քաղաքականությունդ
թիզ առ թիզ կնկ է գնում
նավթային ախորժակին
Կասպիական Ձկան,
ու՛ր է Թուր-Կայծակին,
որով պիտի որոշվեր սահմանագիծը
իրականության:
Հայաստան,
վայրենի ոգու սմբակների տակ կոխկրտվում են
մազաղաթե բիբերը
քո պատմության...
Փլվում են դարպասները արքայական
դարերի,
փշրվող խաչքարերն են վերածվում
մոռացության
ավազների...
Հայաստան...
Հայացքիս
մեջ մխրձվում են ճիչերը
մորթվող
հորիզոնների...
Հա-յաս-տան...

Ընթերցում եմ
 երկնային կանչերը հայացքում քարերի:
 Մի վայրկյան հետո
 սերս դառնում է աչքը հավքերի,
 իսկ ստվերիս ճյուղերից թափվում են
 անընդհատ
 մոխիրները քո տառապանքների...
 Հայաստան...

✠

Պատմության ծաղրից ելած խառնամբոխ,
 որ ջարդում է խաչքար, փշրում դիմագիծ,
 այրում այն ամենն, ինչ հայկական է,
 ինչ մեզ է հասել Ոգու աստղերից:
 Կոտորած: Վարագույր: Կամարներ մտքի,
 որոնցից հոսում է արյունն օրորոցի,
 խառնվում ցեխաջրին համատարած Տենդի:
 (Անդունդ է և... ցավ): Ջարդերի դասերը
 փոխանցվում են արյան ճզգրիտ կողերով
 (Համիդից-Թալեաթ, Թալեաթից-Բաղիրով),
 վերածվում սուր-սուր կացինների,
 փոխարկվում մահվան հրդեհներին...
 փողոցից-փողոց և քաղաքից-քաղաք...
 Ամենուր ավեր է, ավար է ու թալան,
 ուր սահմակեցուցիչ ձենձերահոտը
 հեռու է վանում հրեշտակներին...
 Երկինքը ապակե մի զոհարան է...
 ծայրեծայր թփրտում է ոգին հորիզոնի
 և կախվում ծիրերից կոտորածների...
 կաթիլ-կաթիլ-կաթիլ
 լցվում են վիհերը ողբերի...
 Հայի ուր-վա-կան-ներ,
 որ «հալածում են» մարդասպաններին
 մինչև ճահճահոտ խորքերը խղճի,
 ուր ծախվում են... սերը, պատիվը, դեմքը...

Զորքեր, զորքեր, զորքեր...
 Պատմության շենքը պղծող խառնամբոխ,
 որ պատուհանն է փակում երագի,
 բացում դժոխային փեղկերը ահի...
 Մոխրի հորիզոն, շատրվան ցավի,
 դիվային կրքեր և անհայտի դուռ...
 Հայաստան...

✠
 Մուրճի հարվածներ՝
 ճառագայթի սպիտակ սալերին...
 Դարբնոցում ոգու
 վերածնվում են գրերը հայոց...
 Հողը
 քո անվան տառերից ծլարձակող հոնդ է...
 Հայաստան:
 Ճակատագրի ափը
 հիշատակի ճիչն է:
 Հավատի նորահայտ խաչ է,
 ազատության միակամ երթ է
 գաղափարների քառսի վրա...
 Հայացքիդ թաքստոցում
 համբուրում ես ծնունդները,
 բացում իրերի ոգին բաբախող...
 Հայաստան...

✠
 Ապագայի ոտնաձայները
 համբույրների դռներ են,
 ապագայի ոտնաձայները
 հավատամքի խաչեր են,
 ապագայի ոտնաձայները
 հույսի աշտարակներ են...

Հայաստան...
 Համբուրում ես

Ժաղիկը տարածության,
 և խղճիդ վիհերից բարձրանում է
 Հրեշտակը Հույսի...
 Հայաստան...

✠

Վարդերի խուլ հրդեհների միջից
 ցայտում են աստղերը հուշերի
 և կառչում ձայներից անապատների,
 ուր ոսկրափայլը անշիրիմ զոհերի
 փորձում է ձերմակ իր սավաններում
 բարուրել ու փրկել
 հավատը վաղվա...
 Աշխարհ...Աշխարհ...
 Քո խիղճը անդունդ է,
 որի մեջ թքում է կիսալուսինը
 և ուղիներ հարթում նոր խառնակչության...
 Քաղաքական խաղերն ավարտվում են միշտ էլ
 փոքր ազգերի տեղահանությամբ
 կամ բնաջնջմամբ (լրիվ, մասնակի՝
 նայած թե խոշոր տերությունների
 շահերի հողմը ո՞ր ուղղությամբ է մարտավարելու...):
 Ոգու անապատ, երազի անդունդ,
 կարոտի հրդեհ ու հողմի գագաթ...
 Հայաստան...

Պարիսպներիդ լռության մեջ փաթաթվում են
 հրեշտակները,
 որ չլսեն սրտի զարկերը տառապյալ Հողի...
 Ցավն իր լույսով է ճանապարհորդում...
 Խոսքն իր բեռներն է նետում անդունդը...
 Հետքերիդ վրայով գլորվում է երկինքը՝
 լուսավորելով խավարը Խղճի...
 Հայաստան...

✝

Քարերը դռներ են մեղքաքավության:
 Գիշերվա պատյանն է քարշ տալիս հողմը
 դեպի դատարկություն:
 Բառերը
 բանտեր են,
 որոնցից կորզում եմ ազատությունը
 լեռնապարերի...
 Ազատության լույսն է աղաղակում
 եկեղեցիներիդ քարե բռունցքներում...
 Արցունքիդ մեն մի կաթիլի տակ
 փլվում է տանիքը
 մրջնանոցի...
 Չայաստան...

✝

Խոշտանգված դեմք է իմ ճանապարհը,
 որի արցունքները քարեր են գլորվող...
 Չիշատակի ձիչ է քո ամեն բառը...
 Թող քառսն իր թևերով հարվածի
 դահիճ-փողոցներին,
 ուր հայի տները դամբարաններ են:
 Մահվան հրդեհն է տարածում մագիլները...
 Նորածնի բարուր: Աչքերի փոխարեն-
 կայծկլտացրող մոխիրներ,
 որ քեզ են նայում պատմության խորքերից...
 Տենդի հրդեհն է տարածում մագիլները...
 Երկնքի
 ուների վրայով հորդում է
 ոսկրակույտը՝
 միանալնու կարմիր աղաղակներին
 հույսի,
 ցավի,
 ոգու...
 Խոշտանգված երազներ են

օրերի դիմակները,
 դարերի երազները՝
 հավատի պատյաններ,
 որ փողոցներով քշում-տանում է
 Մոլեռանդության փրփրած ալիքը...
 Պատմության վիհից ելած խառնամբոխ,
 որ կոխկրտում է ծիրը հավատի...
 Ոխի անապատ, կայծակնահար ծառ,
 մոլոր ուղևոր ու ցավի անտան...
 Հայաստան...

✠

Քո բառը
 արյունոտում է իր կարմիր ռիթմով
 տանջահար ուները
 ժամանակի...

Հարության հրեշտակները տանում են
 տողերիս
 ոսկորները՝
 որպես ջահեր...
 Հայաստան...

✠

Ես իմ ցավից մի քայլ առաջ եմ
 ընթանում՝
 հասունացնելով
 ժամանակի ռիթմը...
 Պտտահողմ է
 իմ ձայնը,
 որ ծեծում է դռները անհայտության...
 Քամիները
 կտուցներով կարմիր
 խմբանկարն են պատռոտում
 զոհերի,

պատմության և իրականության միջև
 ձգվում է
 խավարը,
 և դիվահար են լինում ձկները.-
 կարթերից
 կախված են լուսաբացները...
 Հայաստան...

✠

Երկրում և երկնքում
 օրորոցներն են փշրվում հրեշտակների:
 Խղճի աղաղակ`
 զսպաշապիկներից հավիտենության:
 Աներկինք երազները
 ավերված լուսամուտներ են:
 Սև ձեռք: Կարմիր խիղճ: Կապույտ անուն:
 Վերածննդի հետքերով վազում է
 հիշողության հողմը...
 Հետքերիս պատարագը...
 Ե՛լքն է աղաղակում
 զսպաշապիկներից,
 ինչպես հույսի ծաղիկ,
 հիշատակի խաչքար...
 Հայաստան...

✠

Պատմության վիհից ելած խառնամբոխ,
 որ խաչքարեր է փշրում ու թաղում
 ժամանակների որմնախորշերում,
 ջարդում մարմարե դեմքը հավատի,
 հիմա այրում է քանքար կերտողին,
 զանգվածին տենչի թևեր տվողին...
 Մորմոքների վիհ, լույսի պատարագ,
 կարոտների ծիր և Անհունի կանչ...
 Հայաստան...

Փախստական երկինք ու նստակյաց խավար,
տառապանքի խորան ու տանջանքի Յովպագ...

Գոյության տենդից ժայթքող արցունքները
հավատի խաչքարեր են...

Երազը գրկվում է խղճից ու ելքից,
Երազը գրկվում է դեմքից ու Աստծուց...

Եվ բարբարոսների դիմակն ընկնում է
կուռքերի կարմիր հետագծի վրա...

Գոյության տենդից ժայթքող արցունքները
հավատի խաչքարեր են...
Յայաստան...

✝

Երազը ապագայի ցողոտ ճանապարհին է,
որով քայլում է
պատրանքի լույսը...
Արյան կաթիլներից ելնում է
եկեղեցին:
Զանգի ղողանջներով վերադառնում է
խիղճը աքսորյալ:
Յայաստան...

✝

Փողոցում ընկած հայացքդ բարձրացնում եմ,
դնում ժամանակի հենարանների վրա:
Տոհմաժառիդ ճյուղից կաթկթող արյունը
իմ երանգն է:
Ահա թիրախը:
Քո խիղճը
բեկումն է
ներքնատեսության...

Հայաստան...

Հայացքիդ անդունդը
լցվում է
ձիչերով

աքսորյալների...
Ընկնող վարագոյր է
մահն Առաջնորդի,
որով ջնջում ենք անվերջանալի
հետքերն Աղետի...

Ձեռքերի ձիչեր

Պատերի ձերմակ աղերսանքի վրա
թքում է
դևը

Հավատի անդաստաններ
որ կոխկրտում է գարշաշունչ հողմը
Մեղքի անդեմ զորքը
խրախճանում է
փողոցների կույր խոռոչներում
Տենդի ճանապարհ փակագիծ հույսի
աղոթքների սյուն և դեգերող սեր
Հայաստան

✠

Մենք սերմեր ենք ցանել
մեր որբ ճակատներին,
համաճակատ հերկից
ծով հավանտ ենք հնձել...

✠

Ես հատում եմ սահմանը Խղձի:
Եղեռնական անտառներով ես տանում եմ
ոսկորները նախնիներիս,
որ շիվերի՜ պես տնկեմ ազատագրված հողում...

Բողբոջում են ճյուղերն իմ հիշողության...
Նախնիներիս հետքերում մոմեր եմ վառում,
ինչպես... տաճարում...
Հայաստան...

✝

Գետի ընթացքը ծանրաբեռնվում է
դիակով հույսի:
Եվ փոթորկվում է զարմանքն Արարչի,
որպես երագի մի զոհասեղան,
ընկնում է կյանքից ամեն հենարան...
Իմ տառապանքից ցայտում են աստղերը,
իմ ոգուց ելնում է մագաղաթը հույսի...
Դարերը վիհեր չեն, այլ՝ զսպանակ Ասքի,
քարտեզն անդունդ չէ, այլ՝ ճանապարհի Ելքի...
Հայաստան...

✝

Ծառը քո Ոգու արտահայտությունն է,
որ ծաղկել է հիմա
այս տարածության ըմբռնումից դուրս...
Հայաստան...

✝

Դու մնում ես միշտ դարերին հենված
օրհնված տառով,
ձիչով ծնվողի...
Հայաստան...

✝

Խրամատներով ամրապնդիր քո
խաղաղությունը,
պատմության ճիչից արթնացած երանգ՝
երկիր Հայաստան...

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ՇՂԹԱ

*Ժամանակը
կտրում է շուրթերիս թրթիռը -
և նրանից ծորում է
առասպելի արյուն...*

1

Իմ երազանքի հատակին պառկած՝
ես մտորում եմ: Շուրջս՝ ոսկորներ-
պարկուճներ խղճի, որոնց լույսն ի վեր
մի մրջյուն արդար իր բեռն է տանում.
ասես տանում է թագն արեգակի:

2

Անձրևը տանիքներից քշել տարել է
փոշոտ օրերի խառը ձեռագրերը,
մի պատառիկ հագիվ մնացել է
կովի դնչին կպած:
Թրջված հորիզոնը
ընկած է լեռնալանջին՝
ինչպես պատռված թմբուկի կաշի:

3

Թուխս է նստել ժայռի վրա
քարի մի բեկոր,
և լսվում է քարի միջից մի սպիտակ
թևաբախում,
որ խավարի շրինչն է բեկում
ժայռի կարմիր կտցի վրա,
Նեռի երախում:

4

*Եվ բարձրանում է դեմքդ մոռացված
հիշատակների սանդուղքներն ի վեր:*

*Ուր տիրական է շունչը դիպվածի,
իրական կյանքն է դառնում ասացվածք:
Եվ պատմությունը կանգնել քո շեմին
ու ափն է բացել.
ափում, սերմի տեղ, աճքն է կախվածի...*

5

Ճակատագիրն այստեղ
մանկանց ծիչերով դագաղներ է մեխում,-
օրորոցից ցայտող մոխրի փաթիլները
իմ աչքերն են լցվում:
Ճառագայթի վրա արտասվում է մի շունչ,
մի շուրթ քարանում լռության մեջ ոխի
և քայքայվում է.-
մամռոտ որոգայթում
ոռնում են բրածո կենդանիները բոլոր:
Բայց չի լցվում դարձյալ ունայնության
փոսը:

6

Ծառի ստվերն է կծկվել ոգնու պես
մայթի սարսռող բիբերի վրա:
Խոտը հուշերով
իր բարակ մեջքն է դեռ տաքացնում:
Շունչս սերմի պես
նետում եմ օդի թևերի վրա:
Օ՛րն է լուսանում
ոտնահետքերիս քավարաններում:

7

Լույսից ծնվի է ելնում:
Անտարբեր են պատուհաններն, ինչպես
մեռյալի կոպ: Մութը ծանր նստել
իմ ստվերի վրա, պատացել է, ինչպես ահը:
Վիհը օրորոցս է՝ վաղուց կորած:

Աստծո շուրթերի վրա
թրթռում է
փետուրն իմ արյան...

8

Բառերիս թրծող հայացքն է վազում
իմ ներշնչանքի լույս գագաթներով...

9

Գրում եմ.
սովորության պատնեշն է փլվում
կաղապարների լռության վրա:
Արյանս բիբն է
ցատկոտում մահվան
զիգզագների միջև...
Երազներիս
ավազուտներից դուրս է ցցվել
շնչառությունս`
պտտահողմը հույսի...

10

Ժամանակն օրորում է տողերս
բարուրի նման,
սակայն լացի ձայնից միայն ես եմ ցնցվում...

11

Վարագույրներ են ընկնում շարունակ
իմ փոփոխական ընթացքի վրա,
և այս աշխարհի էջերից գունատ
երկինքն ավլում է տողերն իմ գրած:

12

Թուղթն իմ ճակատն է:
Սպիտակ ակոսներում`
եռացող լուսաբաց...

13

Չավիտենության կարմիր ավազում
 թաղված ոսկորի փայլն է կլանում
 երազանքներիս սաղմերն անանուն:

14

Չորիզոնի աղը շերտ առ շերտ
 մաղվեց
 իմ վերքերի վրա...
 Ցավի փոթորիկ՝
 որբության ահեղ բևեռների միջև...
 Եղեռնների միջև...

15

Չատակը ծածկված է մթության շերտով,
 ինչպես չթրաշած դեմք:
 Նայում եմ:
 Չեմ ճշում:
 Մինչդեռ իմ տառապանքից
 խեղդվում է...
 հայելին:

16

Եվ դժոխսափայլ, պաղ աչքեր էին ծառերից կաթում,
 գետի կարմրող մտածմունքի մեջ ու հույսի վրա,
 ամեն ալիքն ու հորձանքը նրա մահով էր չափվում:

Մեռնող աչքերի աշտարակներից ցայտած ամեն շող
 խրվում հողի մեջ, դառնում է ապա ըմբոստացման ծիլ,
 իր մեջ կրելով հարատևության հյուլեն արթնացող:

Չուշի թրթռող տերև չէ ձայնս, ոչ էլ ծեփ պատի,
 օրվա հոսանքը դյուրին պատճենող կաղապար չէ նա.
 ձայնս՝ եղեռնված ու խարխուլ դարի լուսամտի սպին:

17

Ես գրում եմ
 ոչ թե թղթին,
 այլ՝ հայացքին ժամանակի:
 Մաշկիս խուցերում-փրկության հույսով-
 աղոթում եմ դեռ անթիվ երազներ,
 ու սպասում, սպասում, սպասում անհամբեր,
 թե անխոնջ գրչիս թանձր գիշերից
 երբ է ելնելու լուսայգը Ոգու,
 որ Անսահմանի օրորոցներում
 բառերը ըմպեն կա՛թը աստղային:
 Ես՝ թղթի պայծառ տեսողության մեջ
 սուրացող ասուպ...
 Ես՝ հայացքի շեղք,
 որով կտրում եք հանգուցաթելը
 գաղջ սովորության...
 Շուրթիս փայլփլող
 անհանգիստ բառը
 Անհունի անջքն է...

18

Աշխարհը դիմակի պես ընկնում է ոտքերի տակ...
 Թմբուկ զարկող տղեկը
 նետում փայտերն աղբի մեջ
 (գուցե ծաղկեն հրաշքով)
 և մաքրում է սպունգով
 դեռ գարնան շունչ չտեսած
 գրատախտակը բախտի:
 Լռությունն է գլխատվում
 ամայի պատվանդանին,
 մինչդեռ դարը խոսելու
 ցանկություն չունի...
 Աշխարհը դիմակի պես ընկնում է ոտքերի տակ...
 ծվատող թռչունի...

19

Ժամանակն է լռում
 գծերի պես դեմքիս,
 որոնք չեն ընթերցվում՝
 թեկնով նման գրքի:
 Կարծես դեմք չլինի,
 այլ՝ զմռսված դիակ,
 որ չի զգում ցուրտը,
 բնյրը, գնյնը, տոթը...
 Գուցե ուրիշ դար են
 ապրումներս թևել,
 թողնելով ինձ այստեղ,
 որ ես մի կերպ տևեմ.-
 ուրիշն ինձնով ապրի,
 հյուսի՛ երգից թևեր,-
 իսկ ես՝ անդեմ, անտուն,
 մի չորչորունկ... տերև...

20

Իմ գրչի ծայրին երազը եռում,
 ձգում է իր տենդը...
 Դարը
 թե վառեր գեթ փոքրիկ մի մոմ
 իմ գրչի ծայրին-
 կդառնայի՛ լույս
 և ընդերքի սյուն...

21

Տողերիս մաշկը
 ճաքճքել է նռան
 կեղևի նման,
 որից գլորվում է
 տիեզերքի արցունքը
 հայացքիս տոչո՛ր
 անապատի վրա...

22

Յուսի երկինքը չլքող
սիրահար եմ,
երբ փոթորկվում եմ՝
ինչ-որ տեղ քանդվում են ավերը հավերժության.-
ծովս անցնում է հուշերի եղեմային խշռոցի միջով,
հարության՝ ալիքներով ողողում
իմ կողերը...
Ականապատված հիշողության միջով քայլողը-
ես եմ...
Ոտքերիս տակ եռացող անդրինդ կա...
Թռիչքի մեջ աճում են թևերն իմ փրկության...
Ինչ-որ տեղ փշրվում են սապատները սովորության,
հավվելով անէանում
մկանի մեջ
դեմքիս...

23

Յիշողության փլվող պարիսպների տակ
դեղին պատրանքների ծովն է օրորվում,
որ իր թևածող ոգու անեզրությամբ
կլանում է հեռվից արտացոլքը կյանքի,
մահի շերտը ծակում որպես հսկա որդ,
ներքաշում է անհագ... արև... ժպիտ... ու սեր...
Եվ ծվեն առ ծվեն, և օղակ առ օղակ
պըտըտում է ողջը
իր առանցքի շուրջը...

24

Ճակատագրի հերկերն են շարժվում
ծիլերի կանաչ երկինքներում վառ.-
հույսի հողեղեն տեսիլն է մաղվում
ինքնության անծայր դաշտերի վրա:

25

Տանիքներին
 նստում է
 առասպելի եղյամ:
 Քայքայվում է ամեն ինչ:
 Եվ մեռնում է ամեն բան:
 Տեղ-տեղ համառում է հավերժությունը,
 ինչպես լույսի պատառիկներ՝
 կպած հողին:

Ժամանակը
 կտրում է շուրթերիս թրթիռը-
 և նրանից ծորում է
 առասպելի՞ արյուն...

26

Ծալված է օրը՝
 որպես մագաղաթ:
 Հիշողությունն է հողի լուսանում կույս խաչքարով...

27

Մոխրամանիս մեջ
 դիակներ լռության
 քառսի մեջ կախված
 է լեզվակը
 հոգուս
 առանց ղողանջի
 թավալվում է
 կյանքը
 փոշիներում տիեզերական
 անսահմանի ճակատին
 անհնազանդ տողեր են
 կամ լույսի սլաքներ
 որ ձեղքում են վայրկյանի
 պատյանը
 դարավոր

28

Բառի համրություն,
որ ընդունում ենք՝ որպես
ճակատագրի ապտակ:

29

Երկրիս ամեն երազի վրա
մի կափարիչ է դրված,
որով չի թափանցում լույսը...
Բոլոր դռներն էլի բացվում են
դեպի ծաղկող ծառերը...

30

*Մասիսը... որպես հավատապահական ու վերջին նժար՝
տարուբերվում է եղեռնված դարի վիհերի վրա,
և իմ մորմոքի հրդեհում կարմիր տարուբերվում է
Մասիսը՝ որպես հավատապահական ու վերջին նժար...*

31

*Մեր շունչը ծաղիկը բացեց սերունդների համար՝
հրրև լույս:*
Երկիրը բախտ արարեց, նոր կյանքի երգով
բացեց ակուններ,
ապրելով՝ հիշեց, կոթողներ հիմնեց, մեր ոգուց
հիմներ արարեց,
որ լինենք մենք ու ապրենք նոր կյանք:

*Չավերժի մեջ ենք, մենք կանգառ չունենք...
Չավերժի մեջ ենք, մենք կանգառ չունենք...
Չավերժի մեջ ենք, մենք կանգառ չունենք...*

32

Բառերս զանգեր են,
որ ղողանջում են
ցավի երկնքում...

Յոգու անդունդից
վեր են խոյանում
լեռնապարերս:

33

*Բեռս`
երկնքից կախված մի ճանապարհ,
որ ես տանում եմ
քարե ուտերով,
որ քայլ առ քայլ թեթևանում է`
շարվելով թղթին,
իբրև երգ
կամ երազանքի չբռնվող պատկեր:
Անունս` քառսի անդունդը ծածկող
մի կափարիչ...
Իսկ ժամանակը
հսկա խաչքարից պոկված երկտոհ է,
թե՛... իմ ճակատի չընթերցված գիրը...*

34

Ժամանակը
դանդաղ աղում է քայլերս
և այլուրը փռում ճանապարհներին:

(Անչափ հեռու է Աստծո ծայնը):

Խաղանդ ձյուն է մաղվում
իմ երազների
տիեզերական որբության վրա...

35

Ստրկահաճ ուտեր: Ծափահարող փոշի:
Սերունդներ: Դեմը` երազանքի ծով:
Անունս, իբրև մի կափարիչ,
գլորվում է կյանքի եզրագծով:

Պատմության ճակատն անդունդ է կարծես,
 ուր մեղքն է շրջում լապտերով եսի.
 ուր երազանքն է կիսվում դեմքի պես-
 զարդարանքներ են մոլորյալ ծեսի:

*Մութից եղեռնի տեսիլն է հոսում,
 երբ բախտին հասած՝ կորցնում ենք մեզ
 սրի լուսեղեն շեղբի քառում:
 Կորցնում ենք և... Սմբակից կախված
 օրորվում են մեր երազները կույր
 և երթը՝ որպես դիպվածի համբրոյր...*

Հայացքս ընկնում հասած մրգի պես,
 արնոտվում է դեռ հողմի կտցի տակ,-
 մինչդեռ ստեղծվել էր, որ մարդիկ արբեն
 քո վայելքի մեջ, Վերին ակնթարթ:

Ստրկահաճ ուսեր: Ծափահարող փոշի:
 Սերունդներ: Դեմը՝ երազանքի ծով:
 Անունս, իբրև մի կափարիչ,
 գլորվում է կյանքի եզրագծով:

36

Գեղեցկության ծովի ալիքների վրա
 օրորվում են ահեղ թևերն առեղծվածի,
 և բացվում է լույսը-երազների սրահն
 Անհունների շնչով, բռնկումով կայծի:

Ճառագայթի սահք է թրթիռը նաիրյան,
 և գարունն է հևում թևերի մեջ հույսի,
 սպիներն են հալվում ծիածանի նման
 շրթունքների վրա սարսռագեղ կույսի:

Եվ ճակատն է փնտրում աստղը հավերժական,
 և հավերժն է հենվում երկինքներին բախտի,
 կարծես թե չի պայթել բաժանումի ական.-
 բողբոջով են բուրում շրթունքները կյանքի:

Աղջիկների քայլում հողը ջահելանում
 և փնտրում է կրկին եղեմային ափեր,
 բեմը երկնի համբույրն ակունների տանում,
 թռցնում է շուրջը հայացքների ծափեր:

Գեղեցկության ծովի ալիքների վրա
 օրորվում են ահեղ թևերն առեղծվածի,
 և բացվում է լույսը- երազների սրահն
 Անհունների շնչով, բռնկումով կայծի:

37

Մի վիրավոր աշուն
 լազուրի մեջ թռցնում է
 արյան հավքեր:

Շուրթս, հողի շուրթից անջատվելով,
 կրում է լռության եղեմային բեռներ:
 Կայծքարե մտքերս քսվում են տարածության
 վառորդով խորանարդված պարիսպներին,
 և սլացող կայծերից
 վիրակապերի խավարն է կծկվում
 հրեշտակի աչքում...
 Մութը փոքրանալով,
 դառնում է միջակետ:
 Երազներն են ճշում արցունքի մեջ հողի...
Վերցրու

իմ աչքը

ճանապարհի փոշուց

և իմ տեսողության բարուրն օրորիր,

օ-րո-րի՛ր,
 մինչև
 ինքս էլ հավատամ,
 որ երկրագնդի հաջորդ պտույտում
 կա...կյանք,
 կա...խիղճ,
 կա...սեր...

38

Եվ ճանապարհս
 ոգի է առնում՝ ընդարձակելով
 շնչառությունը երկնային բերքի,
 ոգի է առնում՝ մահը հերքելով
 պապիս հետքերի սուրբ զանգակներով...

39

Ճանաչում եմ ինքս ինձ.-
 տիեզերքի հայացքն եմ ես՝
 հառած ժամանակի հարահրճ ընթացքին...

40

Հիշողության անապատի միջով քայլող
 երազանքի հյուլեն եմ ես,
 թվում է, թե սովորական տողեր եմ ես
 շարում թղթին,
 այնինչ դրանք Ջրհեղեղի
 հետքերն են հենց,
 և տապան է յուրօրինակ
 տարածության մեջ արձակած
 Ոգուս ճիչը:
 Ձայնի՛ր, եղբայր,
 ես դուրս կգամ դեպի
 ձայնդ,
 ինչպես դեպի...
 Հուսո՛ւ ավիը:

41

Յիշողության ժայռերի միջից
 բխում է հայացքս
 և հոսում ծարաված հերկերի վրայով:
 Բառերիս մեջ արթնանում է
 արմատն Անհունի:

42

Իմ կեղևի տակ գիշերում է
 սովորության ուժը,
 իսկ լուսաբացին չքանում իսկույն.-
 ինչքան կարծր,
 այնքան փոփոխական եմ, հակասական ու անէս...

43

Ճանապարհների շունչն օրորելով՝
 ընթանում եմ ես, և ոտքերիս տակ
 փոշիանում են կեղևներն այն տաք,
 որ դագաղի պես ինձ ամփոփելով,
 պիտի սեղմվեին մահվան մեխերով...

Իմ երազների աղոթքն եմ լսում
 հայելիների բանտախցերում.-
 հողմերի թողած անթիվ խոցերից
 ալիքվում են դեռ երկինքներն հույսի՝
 կախվելով մի կերպ կյանքի կեռերից:

Պատանդ լռության հանգույցն եմ բացում...
 Ինչպես վրեժի կայծակաբեր ծուխ,
 վիհերի միջով ընթանում եմ ես՝
 մի քարի թողած անունս, որպես
 տառապանքներիս հետքը բրածո:

44

Խաչից հոսում է արյունն արեգակի.
 մի երգ է ծնվում
 իղձերի կարմիր հորիզոնի վրա...

45

Որպես շուրթերի արդարություն՝
 ծնվում է բառը,
 մաշկը շփելով
 աղով դիպվածի...
 Եվ ներշնչանքիս սյուների վրա
 փոթորիկների բներն են
 հյուսվում
 անսահմանության
 կտուցով կարմիր:
 Ես իմ երագի շնչառությունն եմ,
 մտնում եմ... երկիր՝
 ընդարձակելով
 պատյանը խոսքի,
 ուր և ոգում եմ.
 ահա բառը
 կամ
 շեմը երկնքի...

46

Ճանապարհու-
 երագ,
 հոգուս թևերով
 կսուրա երկինք՝
 միացնելով
 տարածություններն
 իբրև լույսի
 խաչ...

47

Բառ, քո բարձունքի օրորոցներում
մանկություններ կան,
որոնք իմ շուրթով ընկում են կա՛թը տիեզերական...

48

Արդ կանգնած եմ շեմին
ես Անսահմանի.
աչքերիս խորանում՝
համրացած աղոթք,
շուրթերիս դողի մեջ...
լուսաբացն է խրված...

49

Գագաթն իմ Լեռան
ոչ թե փառքի հանգած
կրակ է մի ունայն,
այլ՝ ծնվողի ճիչ,
որով օղակվում է
տիեզերքի զորեղ
հաղորդության շղթան:



Քր. Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանում

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Իմ մարմնից բուսած ծաղիկ, լսու՞մ ես իմ ձայնը: Ես տիեզերական տարածքներ եմ կտրել, որ զրուցեմ քեզ հետ:

Վառողի բույրն է շրջում հողի շնչառության միջով, հետո ծակելով գիշերամած տազնապաների շերտը, դուրս գալիս հողի անդորրության միջից ու տեսնում... աշխարհը...

Ինքը չգիտի իր անունը, իսկ մարդիկ իրեն ծաղիկ են ասում: Եվ ծաղիկն այդ մարդկանց երազաբույր ձայնի մեջ ինքն իրեն գտնում է... Մերթ հիշում է... Շուշիի պարիսպներով ելնող ազատարարների կարմիր հևոցը, մերթ խավար լռության խուճապն է հիշում զսպանակված փողոցներից... Եվ այն պահն է հիշում, երբ վերջին կրակոցից հետո... ինքը փարվեց մտերմի պես ընկնող գինվորին ու մնաց... նրա մարող ու ափսոսանքից ծվատվող հայացքում: Չետո միասին թաղվեցին հողում...

Եվ մի օր դուրս գալով հողի անդորրության միջից, զարմանում է, որ մարդիկ իրեն ծաղիկ են ասում: Իսկ ավելի ճիշտ կլիներ, եթե իրեն կոչեին «Տեսակցություն», որովհետև ինքը մի հեռավոր տեսակցության համար է աշխարհ եկել...

-Իմ մարմնից բուսած ծաղիկ, լսու՞մ ես իմ ձայնը: Ես տիեզերական տարածքներ եմ կտրել, որ զրուցեմ քեզ հետ: Շուշիի պարիսպների տակ ամեն հայ գինվորի շնչառության մեջ հայոց պատմությունն էր վերածնվում: Չենց այդ պատմության լույսն էր ինձ կանչում երկար ժամանակ, որ իմ միջոցով հաղորդակցվի հիշողության տիեզերական շնչառությանը... Ես այդ կանչը լսում և խուսափում էի տեսակցությունից: Մինչև որ, իմ մարմնից բուսած ծաղիկ, տարածությունները միացնող քո հարազատ բուրմունքն զգացի՝ ուրախանալով, որ իմ մարմնից ոչ թե չարիք, այլ հենց... ծաղիկ է բուսել...

Ջահել էր իմ մարմինը,
 երբ ես նրան հրաժեշտ տվի: Յողը
 դժվարությամբ տեղավորեց մարմինս իր ծոցում:
 Երկար ժամանակ խռով էր ինձնից ու թաքուն հեծկլտում էր
 ծառերի արմատներում: Ես լսում էի այդ հարազատ հեծկլ-
 տոցը՝ մի պահ հիշելով հայոց պատմության բարուրն
 օրորող ծերացած հորս ու ինձ երջանիկ էի համարում՝
 հատկապես այն պատճառով, որ հիշողության դաշտը
 փարթամանում էր իմ անկրկնելի գոյության ավյունով:
 Ես տեսնում եմ ազատագրած քաղաքիս առավոտը, նրա
 շողերում վազվզող մանուկներին, իրենց ընդհատված
 կյանքը խաղաղությամբ վերսկսող ընկերներին, առօրյայի
 կլանող ճեղքերից երազանքի փշրանքներ հավաքող
 սևազգեստ մայրերին... և հանկարծ ըմբռնում եմ, որ
 ես էլ երազանքի պատառիկ եմ ու երջանկության որո-
 նում, հիշողության ելք եմ ու պատմության լնյս...
 Ձեռքս եղմունների ջերմությունն եմ զգում հեռվից... Ահա վերևից
 իջնող մշուշն է համբուրում տանիքն այն տան, որտեղ
 ես ծնվել ու մեծացել եմ... Մշուշի բացվածքներից տես
 նր՛մ եմ բակը: Մայրս ծաղիկներն է ջրում՝ օդում գգվելով
 իմ ներկայության շուրջները: Երեխաներս վազվզում են՝
 զգուշանալով, որ հանկարծ չտրորեն ինձնից մնացած ա-
 վանդներն ու հուշերը: Կովը վիզն է քսում ցանկապատին:
 Ճնճողիկները երազանքի ծվենների պես ցատկոտում են
 ցանկապատի խոնավ ստվերներում ու հացի փշրանքներ
 թռցնում կովի տաք շնչառությունից մաքրվող գետնից...
 Ես օդի պես լցվում եմ բակը, լցվում եմ տունը, պատերի
 բարձրությունն եմ չափում, որմնանախշերում լսում
 անմոռանալի հեքիաթներիս ծայնը... Ինձ
 շնչում են հարազատներս... Նրանց
 հայացքների դատարկ տեղերն եմ
 լցնում ինձնով... Յետո... հանկարծակի կանգ եմ առնում

- (ասես խոր մի անդորրություն է տիրում տիեզերքում),
միանգամից նայում եմ հարազատներիս հայացքի մեջ,
ուր լռությունն է դանդաղ խորանում՝ վերածվելով սպի-
տակ արցունքների...
- Իմ մարմնից բուսած ծաղիկ... Քո բույրը տարածիր ազատագրված
քաղաքիս փողոցներում, ծանոթ-անծանոթների շուրթերի
գծերում դարձիր համբույրի սարսուռ, ձգիր ճանապարհ-
ների փոշուտ հանգույցները՝ նրանց վրա մաղելով Ան-
սահմանը հոգուս: Եվ երբ լռության կապանքներից բող-
բոջների պես պայթեն նրանք, իմ սպիտակ հրձվանքի
ձայնը կլսեն դու...
- Իմ մարմնից բուսած ծաղիկ... Շուշիի պարիսպների վրա ոգու լու-
սաբացն է տարածում թևերը... Դու էլ պայծառացիր
այս տոնական երթի կոհակներում, որ իմ շունչը,
իբրև գեղեցկության հանգրվան, ընդառաջ գնա...
հավերժից ալիքվող վայրկյաններին...
- Տես... շիրիմներից մի աստվածային լոյս է բարձրանում... Նրա
ազդեցության տակ ես մոռանում եմ շատ ու շատ բա-
ռեր... Որոշ բառեր էլ ինձ համար կորցնում են իրենց
իմաստը՝ միանալով կապույտ անէությանը:
Մեռնել, զոհվել, նահատակվել բառերի փոշիացող
կաղապարներով է ծածկված երկիրը... Կաղապարնե-
րի փոշին ճեղքելով բարձրանում է լույսը...
- Իմ մարմնից բուսած ծաղիկ...
- ... Ինքը չգիտի իր անունը... Եվ ծաղիկն այդ մարդկանց ձայնի մեջ
ինքն իրեն գտնում է: Հիշում է այն պահը, երբ քաղա-
քը կլանվում էր ազատության բոլոր անկյուններից:
Հետո... մի օր զարմանում է, որ իրեն ծաղիկ են ասում:
Ավելի ճիշտ կլիներ, եթե իրեն կոչեին «Տեսակցություն»,
որովհետև ինքը հենց այս լուսավոր տեսակցության
համար է աշխարհ եկել...

ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ

1
 Իմ և բառերի հայացքի միջև
 քառսն էր եռում.
 շուրթերիս վրա
 ծանրանում էր անվերջ
 համրությունը աստղի: Խավարը
 կլանում էր: Ես
 փնտրում էի քո աչքերը
 և գտա՛...
 մի մոմ
 ու... վառեցի՛...
 Համբույրն ընդարձակեց ինձ.
 բարձրացա
 վարսերիդ խթանիչ գիշերներով
 և կրակի ելևէջներով հղկեցի
 խոսքից ընդմիջտ զրկված
 մարմնիդ տարածությունը...
 Ուզեցի բացել քեզ.
 դու փակվեցիր, ինչպես առեղծվածի վերք:
 Ուզեցի փակել քեզ.
 դու բացվեցիր անխնամ ու կատաղի...
 Բայց ես
 չկուրացա.
 տեսողությանս մեջ փաթաթվեցի,
 ինչպես բարձր...

 Ժամանակի քայլը մնացել է կախված
 դեռ չասված խոսքի անդունդի վրա...

2

Ստվերների շունչն են զգում վերքիս մեջ.
 հույսի առաջին փաթիլին են սպասում:
 Ո՞վ է կտցում սիրտս
 քո ծիծաղից տաքացած քարերի վրա.-
 վիրավոր օդն իր թևն է թափահարում
 ջահելության ճերմակ հառաչանքի վրա...

3

Յամբուրում են
 քո մատները՝
 սավանների խրախճանքին անտեղյակ...
 Ճակատագրի հերկերն են թափվում
 իմ երազների թրթռի վրա...

4

Մի շարժվիր.
 իմ և քո շուրթերի միացման կետում
 թռչունի բոնյն է հյուսվում...

5

Կողոպտված են բառերը մեր շուրթերի վրա:
 Չկա ձայն: Շշուկ: Միայն սպիտակ
 մի հևոց է սահում
 դեռ չբռնկված կրակի ստվերի մոտ:
 Եվ վայրկյանների սոսինձը կապույտ
 ձգում- քաշում է մեզ համառորեն
 դեպի արբունքի մեծ ժամանակը,
 ձգում -քաշում է վիհերի միջով,
 դողի,
 շշուկի այրող թելերով,
 տանում է շնչի անցուղիներով,

վայելքի հովտում
 թողնում մեզ մենակ...
 Չկա ձայն:
 Շշուկ:
 Չկա բան:
 Ծառերն են ծաղկում:
 Փթթում է հովը:
 Ճյուղից արծաթե թերթեր են թափվում
 եղանակների շրջապտույտում:

- Այդ ժամանակից
 մենք խուսափում ենք,
 ինչպես մատաղացուն՝
 զոհասեղանից...

6
 Քո համբույրը՝
 զոհասեղանին ընկնող լրնյա...

7
 Հոգիս աստղային պահեր է ապրում
 քո շրթունքների ու ցավի միջև,
 կրքեր փորձարկող դավերի միջև
 հոգիս աստղային պահեր է ապրում:
 Երբ հույսն է ծլում լռության ավում,
 երազը՝ համբույր, կարոտը շրնչ է,-
 հոգիս աստղային պահեր է ապրում
 քո շրթունքների ու ցավի միջև...

8
 Հայացքս այնպես ներսուզվեց քո մեջ,
 որ քեզնից դուրս մղվեց դատարկությունը:

Լռությունը բուրեց ծաղկած ծառի՜ պես:
Եվ աչքերիդ միակ ընդունարանը լցվեց
կույսի՜ արցունքով...

9

Պարանոցիդ սարսուռի մեջ
թփրտացող
թիթեռներ են իմ բառերը,
որոնք շնչում մաշկիդ բույրը
գարնանային
և հևում են
ձերմակ-ձերմակ թևերի մեջ
տարածության:
Շունչս
բախտիդ վերելակով
բարձրանում է
ու շոշափում
ակունքները
արցունքներիդ:
Յուսիս ճեմակ թերթիկները
օրորվելով,
ընկնում են ցած,
լույսն է ձգում
ժամանակի ոտքերի տակ...

*Քեզ սիրելու համար
պետք է
ծաղիկ լինել...
ու...
անրջանք...*

10

Քո կրծքի ալիքների վրա
 թրթռում է
 երկնքի մի կտոր:
 Դու նետում ես քո շորը
 խոտերի վրա-
 և մարմինդ ի վեր
 գալարվում է
 հոգեվաճառը ձկան:

11

Մեր շուրթերի միջև խելագարվող օդը
 ընկավ թփի վրա`
 որպես կանաչ հրդեհ...

12

Ես սիրում եմ քո տաք շուրթերը, երբ
 թեթև են, վրան էլ բառեր չկան,
 էլ կասկած չկա: Կան լոկ սպասումներ,
 ուր ես փորձում եմ մոռանալ ցավը
 և անդեմ կյանքիս իմաստն համբուրել...

13

Իսկ ստվերս երեկ ծիածան էր կապում
 քո կոնքերի վրա,
 որ հայացքս լողա..
 Գրկիդ գիշերներից արցունքներ են կաթում
 հուզումներս զսպող կափարիչի վրա...

14

Արյանս թրթիռը
 քո լռության կարմիր պատերն է լիզում.-
 ծոցդ նռան պես հասնում է...

15

Յուսիս տերևը
քո ծոցից հանում է թրթիռներ լույսի,
և համր պորտոլ
կաթնալույսի մեջ սահող լուսին է,
որի մի շողով հաղորդակցվում ենք
տիեզերքն ու ես:

16

Յայելին,
ուր սերն ապրում էր որպես պատանդ,
ջարդեցի երազիս քարերի վրա...

17

Ես քայլում եմ շնչիդ թանգարանի միջով:
Առանց քեզ օդն այլևս վարդագույն չէ:
Քամին կտրատել է քո լռությունը,
տերևների պես փռել մայթերին:
Մենակ եմ ես: Դաժան աշուն:

18

Քո համբույրը հավերժության բանալին էր,
փոխանցեցիր դու իմ արյան տաք հյուլեին.-
այժմ փնտրում ու չեմ գտնում ոչ հայելին,
ոչ նրա մեջ իր վարսերի հույսը փռած
հրեշտակին-լոկ իմ հոգուց տեսանելի...

19

Քեզ հիշելով միայն
ես կարող եմ քամել մենակությունս
այս անխորան ու պաղ վայրկյանների վրա:
Ու՞ր ես մոմդ վառել, որ շուրթերիս վրա
կրճատվում է օրը և ...քո շունչը: Խավար:

20

Չառաջանքն իմ խփվում է
անորոշության պատերին
և գղջման թևերին սլանում
դեպի անդունդն իմ
հոգու...
Ես քեզ կանչում եմ.-
չնչառությունս ավի է դուրս հանում
լուսի մի խելահեղ ալիք...

21

Մեզանից հետո... մեր համբույրները
հսկում են լռության տարածքների վրա,
ուր շարունակում են ապրել մեր հույզերը
մի այլ կյանքով: -
Մի օր այս տարածքներով
կանցնի ճակատագիրը՝
հավաքելով հարկեր...

22

Քո հմայքներից,
անունից հանված... մենակությունը
պարուրում է ինձ,
դառնում իմ... մաշկը.
ինձ ղվ էլ շոյի,
կշոյի հենց այդ մենակությունը...

23

Մութն ընկավ: Գլուխս
իջեցրի ձերմակ ծնկներիդ վրա,
ձրագներիդ լույսը ընդարձակեց
հմայքիդ սահմանները...

Լույսը
բացվեց: Մնացի մենակ՝
քո աղոթող հետքերի զանգակներով
շրջապատված...

24
Լռության թևերից կառչելով՝
սահեցի հմայքիդ ծովի վրայով,
մինչև որ մի քանի ալիքներ քսվեցին
տոչո՛ր շուրթերիս,
ուր կարոտներիս երգն էր
արարվում: Բախտի ճյուղերից
կաթեց մի աստղ և իսկույն մարեց
ցավիս հատակին:
Մենակության շերտը ծակեցի
երգի ճառագայթով,
որ լուսավորեմ ապրումներիս
ճակատը: Գրիր այնտեղ
երկու բան,
և ես հպարտությամբ կկրեմ այն ողջ
կյանքում: Միայն թե՛ գրիր...
Իսկ ես... շապիկիդ կոճակն
արձակեմ՝
թեկուզ և կրծքիդ ճերմակ երկնքից
կուրանամ իսկույն.
դա կհամարեմ ես պարզև վերին,
դու կգտնես ինձ,
ես կգտնեմ քեզ,
և պայծառատես տողեր կունենանք...
Գրիր շրթունքիս երկու համբո՛ւյր-բառ...

25

Շուրթերիս վրա
 շարժվող բառերը աստղիկներ են,
 որ ընկնում են՝
 ծոցիդ երանգը լուսավորելու:

26

Վարագույրը՝
 որպես մի աստղոտ գիշերվա
 շնչառություն,
 հավաքում եմ՝
 ագուցելով
 թռչնի թևերի պես,
 որ չթռչի,
 որ երկանր տևի...
 համբույրիդ դողը շուրթերիս վրա...

27

Թևերը
 ճախրող բներ են
 կապույտ արտասուքների:
 Սպիտակ
 երազի թելերն են կախվել
 պարիսպերից մեղքի:
 Համբույրով լվա
 ճակատս՝ իբրև
 բախտի գոհասեղան:

28

Քայքայվում է հեռվում հայացքի մի սանձ...
 Մի ծաղիկ է լվանում ոտքերը հունիսի...

ԵԼՔ

1

Գարնան հեղեղը քշում է, տանում
 Խոհերիս կեղևն ու թևը բառի.-
 Եվ լռությունն է փոթորկվում արյան,
 Պայթում է լույսը բողբոջով քարի,
 Մի կարմիր երազ լցվում սարսուռով,
 Ձգվում է, ինչպես համբույր-վայրկյանը,-
 Բառս իբրև սեր քայլում աշխարհով
 Ու մոմ է վառում Աստղծո տանը:

2

Արցունքիդ լույսով մաքրվում կյանքս,
 Լուսավորվում է ձայնով քայլերիդ,-
 Սեր իմ, օրերի շունչն ինչ արագ է
 Փոխարկվում դողի. շուրթիդ նայելիս,
 Թվում է՝ պիտի երանզը ծաղկի,
 Իսկ երկնի փայլը՝ դառնա հայելի,
 Ուր արարվում է հեքը կրակի,-
 Արցունքիդ լույսը՝ շուրթ համբուրելի՜...

3

Քո վայրկյանն իբրև տանջարան հույսի
 Մաքրում է տիղմից ինքնությունս սեզ,
 Չայտնաբերելով խղճիս ուսերին
 Տանջանքի ջահեր, տվայտանքներ սև:
 Շուրթերդ, որպես բախտի սարսուռներ,
 Իմ երակներից ծնծղա՛ են հանում,-
 Եվ փոթորկվում են լույսի համբույրներն
 Ու խանդի հստակ անդունդը վանում:

4

Ստվերիդ միջով լույսերն են հոսում
 Եվ թերթիկները առեղծվածների,
 Որոնք կարոտիս շուրթերին հասնում
 Եվ փոխարկվում են ձերմակ բոցերի,
 Շրջանցում են իմ ներկայության դողն
 Ու ծառերի տաք ստվերից կառչում.-
 Սահում են՝ որպես անրջանքի շող.-
 Ձեռքիս տակ ձեռքիդ սարսուռն է ուռչում...

5

Ծառի ճյուղերից ծիծաղն է հոսում,
 Ինձնով փոխանցվում երակներին քո,
 Իսկ լռությունը բողբոջ է հասուն,
 Որ պայթելու է մերձեցման հևքով:
 Դու գարնան թրթիռն ինձ ես փոխանցում,
 Որպես լուսաբեր խուտուտ արթունքի,
 Ես ծաղկի թերթով հպումն եմ հայցում
 Քո երազային ու տաքուկ ձեռքի...

6

Շուրթով բռնելով կայծերն Անհունի՝
 Իբրև ուլունքներ շարում եմ վզիդ.-
 Մաշկիդ երկինքը ինչ աստղեր ունի
 Եվ ինչ գալարներ՝ կրքերով ազնիվ:
 Ինչպե՞ս շնչամ մի համբույր-երազ,
 Որ շրթունքներիդ կայծը չթռչի,
 Այլ դուրս քաշի մի հույզերի երամ
 Անորոշության խուլ անկյուններից:

7

Ճանաչման սահմանն անցած բառի պես
 Սարսուռն եմ ես, ընդլայնվում լույսով,

Երբ քո երազող շուրթերով արբել,
 Շարունակում եմ կարոտ աղերսել
 Քո երազների լռությունից խոր
 Եվ շշուկներից աստղավառ երկնի,-
 Մինչև որ.. հասնում ակունքներին քո,
 Խելագարվում եմ... համբույրով Ելքի...

8

Սերը երանգ է առնում աստղերից,
 Եվ քայքայվում է տարածության դին,
 Իրար մոտեցող ձայնը քայլերի
 Վերադարձնում է գարունն իմ կրկին...
 Վարսերդ, որպես աստղային երազ,
 Պարուրում են ինձ, դարձնում երկնային,-
 Շուրթերիդ դողը ճեղքող մի երամ
 Յավատի ցոլ է թափում թևերից...

9

Սեր իմ, կարոտիս առանձնարանում
 Փետուրն է խայտում անսահմանության,
 Երբ հեռուներից հասնում է մի ձայն՝
 Փոթորկի երազ, որ չի հովանում:
 Բախտի թևերից ընկնող աստղի պես
 Ջերմացնում եմ քո տեսքն իմ ափի մեջ,
 Որ պատրանքներիս թևերը անվերջ
 Գուրգուրեն հողը՝ հույզերս արբեն...

10

Ապակու մեջ քո հայացքն է խայտում՝
 Իմ հպումների դողից հալածված,
 Յետո կարոտիս լույսով են թարթվում
 Քո անուրջը պարզ, հույսը լվացված:

Քո մաքրությունն է կարծես բարախում
Աղավնու ճերմակ թևերի ծայրին,
Ես իմ հայացքն եմ քո ուսից կախում,-
Եվ բռնկվում է երազը վայրի...

11

Շապիկդ բացեց արշալույս մի նոր,
Որով փաթաթվեց սարսուռիս շղթան.
- Դու երգ ես, որի լռությունն է խոր,
Մաշկիդ վարդագույն տարերքներն են թարմ:
Քո պարանոցին փաթաթված բառով
Լռությունս քո երազը ըմպեց.
- Դու ելք ես, որ ես գտնում համբույրով
Եվ չեմ կորցնում գալարանքով պիրկ:

12

Վարսերիդ առատ գուրգուրանքներով
Պարուրվում է իմ շունչն առածգական,
Սարսուռն է ձգվում կրքի թելերով.-
Կյանքիս ապրիլն ես՝ տեսքով մոգական,-
Ես ինչպե՞ս ըմպեմ ծիծաղն Անհունի
Քո շրթունքների գծերից փակվող,
Որ քո երազը թևից թռչունի
Չանջատվի, բայց և... դառնա՛ տենչի հող...

13

Ճակատագրի արցունքների մեջ
Տառապում էի ու քեզ որոնում
Եվ պատրաստ էի երջանկության մերկ
Վայրկյանը՝ իբրև բարձր օրորել,-
Մինչև որ լույսիդ ճառագայթն հասավ
Խոնավ պատերին իմ տանջարանի.-

Նշանն այդ բախտի հայտնությունն դարձավ
Եվ լուսածին հիմք՝ կյանք ու օրրանի:

14

Նռնենիների կարմիր երագով
Փաթաթվեց հայացքն իմ սիրահարի,
Գգվելով ճամփիդ փայլատակող ցողն
Ու ծիածանը երկնակամարի:
Կեղևաթափվող քայլերիդ ձայնը
Սփռվեց կարծես միտքն իմ տանջահար,-
Եվ գլորվեցին նռան հատիկներ
Իմ հայացքից քո ուսերին խոնարի:

15

Եվ թրթռացին տենչի ալիքներն՝
Յոսելով մաշկիս սարսուռի միջով,
Մեր ապրած կյանքի սուրբ վայրկյանները
Ծիածանելով՝ իբրև գարնան ցող:
Քո շուկների ճուրթերն ուտելով՝
Յասա սարսռուն բացատը բախտի,
Ուր քո գգվանքը, կարծես հատելով,
Վերագտավ ինձ... համբույրով Ելքի:

16

Վերագտավ քեզ... ու տարածեցի
Լույսդ երագիս տաք շնչառությամբ:
Իմ էության և հողի մեջ թախծի
Փոթորիկ սփռեց աստղային մի ձայն
Եվ ոտից-գլուխ քեզ համբուրելով՝
Ոգու աստղերով կյանքդ զարդարեց,
Պատկերիդ լույսով երգեր արարեց՝
Խոսքի տարերքը ընդարձակելով:

17

Չիմա նայում եմ վարսերիդ՝ որպես
 Ինձ ջերմացնող երկնի շողերի,
 Որոնք նման են հղացումների,
 Որ ներշնչանքի լույսով են արբել...
 Եվ թևավոր են բառերը դարձել
 Մեր անրջացանձ շուրթերի միջև,
 Տարածությունը հատելով թեթև՝
 Մեր արբունքին են դողով միացել...

18

Սեր իմ, կարոտդ լույս է ճյուղավոր,
 Որից քաղում եմ թախծի հատիկներ,
 Չեստո փոխարկում շուրթիս ալիքով
 Ծիածանների: Երգս քանի քեզ
 Սիրահետում է այգու ծաղիկով՝
 Ես ներքաշվում եմ դեպի խորքն աստղի,
 Ուր լռությունն է եռում ալիքով
 Անակնկալի, ուր... բախտն է հղի...

19

Սիրո հին ու նոր հայտնություններով
 Կշռում եմ երազն իմ ճանապարհի.-
 Զգացմունքներիս լռությունն է խոր,
 Կրակը բախտի թևեր չի՛ այրի:
 Աշխարհիդ միջով հոսելով երկար՝
 Վարարում եմ ու դառնում ծաղկավոր.-
 Իմ անդրադարձը պարզևում է կյանք
 Ափերիդ երգին ու խոտերին չոր:

20

Անունիդ հեքով օդն է առնչվում
 Բացվող բողբոջի կապույտ սարսուռին,

Տարածությունն է դառնում թևավոր,
 Երկնային լույսը փարվում է ծառին:
 Անունիդ բոլոր հնչյունների մեջ
 Ես աղոթում եմ ու մոմեր վառում,
 Որ չմոլորվեն սարսուռները մերկ
 Մանուշակագույն կրքի անտառում:

21

Մայթի սարսռող երազի վրա
 Մեր գգվանքների լույսն է օրորվում.-
 Դու ծաղիկներ ես նետում անվարան
 Փախչող առվի մեջ, երազկոտ շրջվում,
 Ամփոփում ես ողջ տարածքը քո մեջ...
 Քո մեջ ապրիլյան մի հույս է թարթվում,-
 Ցերեկը հանգչում ծունկիդ ծալքի մեջ,
 Եվ բռնկվում է մի ակնթարթում:

22

Թղթի հարթության վրա տրոփող
 Ճերմակ ալիք է իմ վերհիշող տաք,
 Որ քո վարսերն է փռում` որպես շող,
 Գոյության վրա իմ արցախական,-
 Իմաստ է տալիս մայթերին նիրհող,
 Տարածությանը` նոր շնչառություն,
 Երկինք է տալիս բառերիս ու ցող
 Եվ մի ոգեղեն հավիտենություն:

23

Հոգում թփրտող անուրջի նման
 Քո քայլքը տենդի փառն է պատռոտում,
 Նայում եմ հողին, որ չունեիր հմայք.-
 Քո գոյությունն է ծիլերից հորդում:
 Նայում եմ աստղին, որ չունեիր երազ.-

Քո շնչով երկնի լույսն է ծիծաղում:
 Դու աստվածային հմայքի երակ.-
 Չես տեղավորվում բնության խաղում:

24

Կարոտի հևք է հնչունը վերջին,
 Որ պոկվում է քո անվան առանցքից,
 Տարածությունը քո պայծառ շնչի
 Վերափոխում է պահը հրաշքի:
 Մայթը երանգ է ստանում բաղձալի,
 Փողոցը՝ երազ-ներդաշնակություն,
 Երբ գալիս ես դու քայլով սարսռալի,
 Սերը դառնում է իրականություն:

25

Եվ իրականի սահմանն են հատում
 Քո համբույրները՝ կրակով աստղի,
 Քո եթերային կարոտն է թարթում
 Աչքերն իր՝ Պահի պատերի միջև,-
 Ես որոնում եմ անո՛րջը նախկին,
 Մաշկիդ վրայից լիզո՛ւմ գալարներ,
 Հիշում փայփայած դեմքը իմ բախտի,-
 Եվ լուսանում են տենդի գագաթներ...

26

Ձայնս ընկում է երկինքը ձայնիդ,
 Իմ երազները դարձնում աստղազարդ,
 Տեսողությունը կորցրած բառի
 Արմատն ես խրում թրթիռի մեջ բարկ,
 Որ լուսավորվի բացատը տենչի
 Շրթունքիդ դողով ու ճերմակ հևքով,
 Երկինքը ավլի՛ տարերքը շնչիս
 Եվ ամբողջանա թեկնո՛ւզ այս երգով...

27

Ցավի բներ են շարժումները իմ,
 (Թեթևանում են տանջանքներն աստղի),
 Երբ փարվում եմ քո լուսե ուսերին,
 Ըմբռնվում համը մոգական պտղի,
 Թեթևանում են ուսերը Պահի՝
 Ընդարձակելով թրթիռը երկնի.-
 Ոգիս լուսայգն է իմ լեռնապարի,
 Շունչս՝ տարերքը ներշնչանք-երգի:

28

Չողի շփումից ցայտում են վարդեր,
 Աստղեր են ծնվում շփումից բառի.-
 Անսահմանության կապուտակ լաթերն
 Առնում եմ դեմքիս, որ այս աշխարհի
 Երանքը փրկեմ ճիրանից թախծի
 Եվ ժամանակի կուռքից բրածո,-
 Որ չհոշոտեն կրքերը անծիր
 Սիրո երկնքում բախտն իմ թևածող...

29

Որպես երկնքի մուժն հատող մի շող՝
 Չայացքս հույսիդ աստղին է հասնում,
 Ներշնչանքներ են ապրումներս շոգ,
 Խոտերն ու քամին՝ գգվանքներ հասուն:
 Մեր շրթունքներից բխում են թևեր,
 Չետո միանում համբույրով երկամր.-
 Ես ու դու կարծես դառնում ենք երազ
 Եվ շնչառություն տիեզերական:

30

Ինչ են ասում այդ շնչառությունը
 Եվ սեզ երազը աշխարհին այս մեղկ.

-Այն, որ չեմ փոխում ես սիրո հունը,
 Ինչքան էլ գերեն հաճույքները մերկ:
 Նայում եմ աստղին, որ չուներ երազ.-
 Քո շնչով երկնի լույսն է ծիծաղում:
 Դու աստվածային հմայքի երակ.-
 Չես տեղավորվում բնության խաղում:

31

Ես հավաքում եմ քո շշուկները
 Երկնի ու լույսի սեգ քղանցքներից.-
 Ծաղկից ընկնում է հայացքիդ ծիրը,
 Փոթորկում օդը՝ անհուն խորքերից:
 Ես հավաքում եմ թելերը հուշի,
 Փաթաթում հետքերն անսահմանության,
 Մինչև՝... համբույրդ իմ մեջ ներսուզվի,
 Մինչև՝... վեր ելնի... շունչը փրկության...

32

Չայացքիս հույսով ըմպում եմ ճամփան,
 Որ քո ծնկներից սահելով թեթև՝
 Գգվում է աստղը հավիտենության,
 Բացում Անդիի դռները հերթով...
 Քո ստինքներից դեռ լրնյա է ըմպում
 Իմ ներշնչանքի բաբախող ոգին.-
 Դու աստվածային տենչերի հպում,
 Դու կյանքն ես, շունչը ու լույսի հոգին:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՄ ՅՐԱԺԵՇՏԻ 40 ՕՐԵՐԸ

*Ճեղքիր բառը, միտքը, երազանքը, ռիթմը,
վերստեղծելով Յոգուդ աշխարհը.-
այն է, ահա, քո ազատությունը...*

1

*Բառերը հևում են
աշնան տերևների կցկտուր շնչառությամբ:
Վառել է պետք
բառերը բոցերի մեջ հուշերի:
Լույսը ապրում է
հուշերի սահմանից այն կողմ:
Յիշողության վանդակում թռչկոտում է
մանկությունս:
Մութը եռում է
իբրև Անհայտի կենսալի կեղև:
Ես ապրում
եմ աշխարհում՝
արշալույսի փետուրով ջնջելով հետքերս...
Ես մաքր եմ,
թե հաղորդության շղթա...*

2

*Մաշկս
բաժանում է
իմ ապրումները
վանդակներում,
որտեղ իմ հոգին
մոլեգնում է դեռ...
(Լույսը ապրում է
հուշերի սահմանից այն կողմ):
Անապատային ծարավ է շարժվում
դարպասների մոտ,
և կլանում է դատարկությունը
բոլոր կողմերից...*

*Ես իմ վարքն եմ փնտրում
ներկայի և ապագայի միջև...*

*

Մաշկիս վրա-հույսի երկար մի հոգեվարք,
որ բացում է պատուհանը մերթ դեպի մահ,
մերթ էլ դեպի կյանքի լույսը անկաղապար:

Մաշկիս վրա-հույսի երկար մի հոգեվարք,
ուր զարթնում է աստվածային շունչն ակամա,
որպես կյանքի երակներում մոռացված վարք:

Մաշկիս վրա-հույսի երկար մի հոգեվարք...
Կրքի համար գիշերային տենդն է ավար...
Մաշկիս վրա-հույսի երկար մի հոգեվարք...

*

Պահը

լուսավորում է երազանքիս ճակատը:
Թռիչքի պահին բառերից ընկնում են բոլոր բեռները,
պատերազմական բեկորներն են ընկնում՝
ասուպները հուշի...

Ամեն քայլս ճանապարհիս մեջ խրվող հոնդ է...
Թռիչքի պահին ճանապարհից ընկնում են բոլոր հետքերը,
որ նշաններն են ճակատագրի...
Ճանապարհի հորիզոնի միջով թևածում են հրեշտակները...

*

*Ես իմ անունն եմ փնտրում
լույսի և ստվերի անջատման կետում...:*

*

Իմ ունեցած-չունեցածը այս է որ կա՝
անդիմության վիհի եզրին համառոդ կյանք:
Ու աղոթող շուրթի կարոտ խոսքի խորան,
ու տվայտանք խուլ բակերի ու կույր դռան:
Ու անստվեր երազանքի պղծված շավիղ,
ու կասկածի անհուն քարայր ու վիհ դավի:

Ու աներեր հավատամքի քարե մատուռ,
 ու ակունքի մահից սարսող նահապետ ջուր:
 Ու կավձաբույր գրատախտակ, որ դագաղի
 կույր կափարիչ դառնալու սև երկյուղն ունի:
 Ու սպիտակ անրջանքից թափվող մրուր,
 կարմիր մրմուռ, կարմիր մրմուռ, կարմիր մրմուռ...
 Իմ ունեցած-չունեցածը այս է որ կա՝
 անդիմության վիհի եզրին համառոճ կյանք:

4

Աղոթքի բառերն աստիճաններ են,
 որոնցով ելնում է
 երկինքը խղճիս...

-Լույսդ հոգի է.
 առեղծվածի շուրթով
 բացում է երանգն անսահմանության...
 Չայացքդ՝
 ծաղկաթերթերով անցնող
 փոշոտման քամի,
 շշուկդ
 առեղծվածի ուսն ի վար սահող
 բողբոջ է մի,
 համբույրդ՝
 ալիք
 տիեզերական:
*Տեր իմ,
 տո՛ւր շուրթերին իմ բառերի
 առեղծվածի լույսը
 և ցո՛ղր մանկության...:*

5

Թիթեռը թրթռում է
 փողոցի կապույտ երազի ճյուղին,
 ամբողջացնելով
 Պահը
 անհատնելի...

6

Քայլս
լույս է,
որից աղոտանում է սակայն
տարիքիս գլորվող անիվը...
(Ու՞ր է երազանքիս սուրացող ձին...):
Տարերք: Շղթա: Մոխիր:

7

Խաղում էի բառերով անհոգ, ինչպես գնդակով,
խաղում էի տողերիս հեքիաթային միջանցքում,
իսկ Անհայտը շնչիս մեջ տարերային ալիքով
սպառում էր շուրթերիս լռությունը անհատնում:
Խաղում էի՝ անտեղյակ մեջս վառվող ցավերին,
այնինչ դառնում էր հեռվում ոտնահետքս մոխրաման,
մերթ ցնցվում, մերթ կուրանում ցավիս լույսից ակամա,
վառվում էի իբրև հույս երազանքի թևերին...
Մտնում եմ ինքս իմ մեջ՝ ինչպես հոգու թանգարան,
սուզվում եմ ես՝ փրկելու հիշողության ծրագներ,-
օրը լքված հյուրի պես թողած շեմին իմ դռան՝
արթնացնում եմ հողի մեջ առասպելի երակներ...

8

Ձանձրության անապատ է:
Մութը եռում է
իբրև Անհայտի կենսայի կեղև...
Անորոշության կոկորդից արդեն
քարանձավային ոռնոց է լսվում...
Եվ մի Ոգի է ալիքվում
փոշուց,
ձանկռում
տարերքի դեմքը իրական,
որ արդ հոսում է տան ցանկապատից
այն կողմ,
ուր ներկան
շարունակվում է՝

երազանքներիս թելին ներհյուսված...
(Չավատ, պայտ, արյուն):

9

(Ես ապրում եմ աշխարհում...)
Բայց ու՞մ հարվածից փշրվեց, Աստված,
հայելին, որի մեջ
ես ինձ զննում էի...
Ես ինձ տեսնում էի
ակնթարթների սյունների վրա...

10

(Չիշողության վանդակում թռչկոտում է
մանկությունս...)
Ես մի օր քնել եմ
վարագույրների օրորող ստվերներում
և արթնանալիս տեսել... հրաշքը...

Պատմության ճեղքից գլորվում են դեռ
իմ արցունքները քարերի նման,
որ իրենց ճամփին
փաթաթվում ոսկրի ավազափառով,
դահճի քրքիջով,
պատանքով մեղքի...
թվում է՝ պիտի ընթանան նվազ
արագությամբ, բայց...
էլ ավելի է սաստկանում Ոգու
մրրկարշավը-
քանզի նրա մեջ,
ինչպես հնոցում,
եփվում է սերը,
ընդլայնվում լույսը
և կարմրում է միշտ Թուր-Կայծակին...

*

(Փակուղու մեջ եմ,
ինչպես սերմը՝ հողում,
պայթյունը
դուրս կբերի՞ ինձ մի նոր տարածություն...)

*

Ճակատագրի նվագն է օձի պես փաթաթվում անդունդի քարերին,
որոնց վրա մոմ վառող ազատամարտիկը
պատմության հայացքն է զորեղ...

Ճակատագրի նվագն է օձի պես փաթաթվում անդունդի քարերին,
որոնց լռությունը, ավելորդ մասերից ազատվելով,
դառնալու է խաչքար...

Ճակատագրի նվագն է օձի պես փաթաթվում անդունդի քարերին,
որոնց վրա նշմարվող նախամարդու հետքը
հիշողության դուռն է...

Ճակատագրի նվագն է օձի պես փաթաթվում անդունդի քարերին...

Ես բառն եմ
և հոգին
միաժամանակ,
և իմ ճանապարհը լույսն է
անդրադարձվող...

Ճակատագրի նվագն է...
օձի պես փաթաթվում...
անդունդի քարերին...

11

Ճանապարհով
գլորվում է
անիվը երկվության,
որի ետևից վազում է մի երեխա
և չի էլ զգում,

*որ դառնում է
ձերմակահեր
մի երազանք...*

Երեխան գուցե
խաղրվ է պաշտպանվում,
բայց նրա ժամանակը
օրորվող փուչիկ է
երեք բեմի արանքում.
կյանք-մահ-հավիտենություն...
ԱՐՑՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ:

12

Միտքս՝ հավատի լարերի վրա
թռչկոտող երազ,
որ վերափոխվում,
դառնում է հայացք...

Փոխակերպության
ալիք է ձայնս,
ինքս ինձ հասնելու
ելարան:

Բառը
շեմն է ճանաչման,
որով մտնողը զարկվում է պատին
ճակատագրի,
հետո հաստատում վարքը իրերի...

Վերածնվում է
հայացքս
բախտի մեխերի վրա
և թափվող արյան շիթից հառնում է
հոգին
կայծակի...

*

*Ես նայում եմ բացվող օրվա
ճառագայթին,*

*ձեռքս դրած ժամանակի սրին.-
լույսը թա՛գ է դառնում
ամեն տառի գլխին:*

13

Իմ տեսողության սահմանն ընկնում է
ընկերքի նման.-
սահմանից-սահման
ընդլայնում են ինձ
տողերս՝
արյան բիբերով գրած...
Ճակատագիրը՝
պատռոտված կոշիկ,
որ անշարժ հայացքով
ընթացքն է չափում
հոսող Քաոսի...
Դատարկ օրորոցն
ազդում է, այն էլ՝
տիեզերական ցնցումի նման..

*

*Ես իմ օրվա շեմն եմ համբուրում՝
իբրև սրբատեղի...*

Իմ ներշնչանքի սարսուռը կարմիր
կայծակի թողած հետքի է նման...

Ձանձրույթն անապատ է:
Ես իմ հետքերի լույսն եմ համբուրում,
որ չմոլորվեմ պատրանքի խավարում...

14

Մատներիս դողը հատակն է սուզվել
հուշի: Մայթերից քերվել է
քո շունչը-
կախարդանքը պատարագող

լույսի: Ես քայլում եմ
 երագիս դավերի վրայով:
 Սպի է
 վարկյանը: Օղը: Տարածու-
 թյունը: Օրը
 սեղմում է պարանոցս, ինչպես
 օձիք: Իմ ներսում կոճկված
 մրմուռը տեղ է փնտրում տարածվելու
 համար: Իբրև
 սանձարձակ մի քրքիջ՝
 բոլոր կողմերից ինձ ընդառանջ
 է վազում
 դատարկությունը: Իսկ ես...
 ետ-ետ եմ ընկրկում
 շարունակ,
 ետ-ետ եմ գնում
 անընդհատ
 դեպի իմ ու
 քո...
 խաչը...
 (Վառել է պետք
 բառերը բոցերի մեջ հուշերի):

*

Հողը
 ավյունն է ըմպում նահատակաեռ լուսաբացների
 և գորեղանում...
 Ես համբուրում եմ երակը հայտնության
 և գրում
 խաչից կաթկթող իմ երազներով...

15

Մանուկների շուրթերին՝ կյանքի ելքով ակոսված,
 կաթի թրթիռը սերտած շրթունքներին այս ծարավ
 հորիզոններ ենք թաղում պատարագով մի ճերմակ,-
 և երագի փոշին է դառնում մահվան սև պարան...

Ու մայրենի լեզվի սուրբ ակունքների ոռնոցով
մենք ընդառաջ ենք գնում մեր գալիքին անպատկեր,
զատված այրող թելերից հիշատակի ու խղճի՝
փայում մեր մեջ այն հեռուն աներազ ու անկշիռ:

Անապատներ ենք մաղում հույսի վրա արգավանդ
սովորոյթով մի թեթև, որ մոլուցք է բարբարոս,
գեղեցկության անկումով վեր բարձրացող մի ընթացք,
իսկ մեր հայացքը ծեփ է Պահի ոտքի տակ թափվող...

Գեղեցկության անկումով վեր բարձրացող մի ընթացք,
զատված այրող թելերից հիշատակի ու խղճի.
-վանիթ, որդիս, քեզանից անդորրը այս խելահեղ,
դիպվածը, որ իջնում է հանց կափարիչ դագաղի:

*

Ձնհալի հետ բացվում է լեզուն ներշնչանքի,
և լռությունն աստղի շապիկն է պատռում,
ծվեն-ծվեն կախում
պարիսպներից
քաղաքի:
Երեխան գուցե
խաղով է պաշտպանվում,
բայց նրա ժամանակը
օրորվող փուչիկ է
երեք բեմի արանքում.
Կյանք-մահ-հավիտենություն...
ԱՐՑՈՒՆ,ՔՆԵՐՆ ԵՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ:

Փողոցը մի օրորոց է,
որ կորցրել է անդեմ հասարակությունը,
որ շարունակում է ապրել
հիշողության առանցքից դուրս,
երազանքի կամուրջները թողած
ունայնության փոթորկված ալիքներում
իբրև կետաձկներ:

Ինքնահաղթահարման ժամը Սիզիֆի քար չէ...
 Զգացմունքը ափ է,
 որը ձգվում է Քանոսի երկու թևերի միջև,
 որոնցից թափվում են
 ձերմակ փետուրներ`
 հյուսելով երկինքը մեր կորուսյալ սիրո:
 Ձնհալի հետ բացվում են աչքերը հիշողության,
 և լռությունը պատրանքի շապիկն է պատռում,
 ծվեն-ծվեն կախում
 պարիսպներից
 բառերի...

*Լուսը ապրում է
 հուշերի սահմանից այն կողմ:*

16
 Չալոցքի հետ հուշի
 աստղիկներ են հոսում
 տենչերիս ձյունապատ սյուներն ի վար,
 մահվան օղակների միջով
 փոթորկվելով`
 հորդում են ու մեխվում
 Անսահմանի գորեղ ակունքի մեջ...
 Շուրջս խշխշում են պատյանները ցավի,
 հետո փշրվելով ոտքերիս տակ,
 լցվում են ձեղքերը խաղաղության,
 որպես ավանդները հարատևող
 Ցեղի:
 Վշտի մոխիրների միջով սուրում է հորիզոնը...
 Չողի մագաղաթյա մեջքն է փայլվում...
 Ճառագայթն է ձեղքում արցունքները
 թռչունների,
 որոնք երազներիս հրե ծիլն են ձգում
 դեպի երկնակամարը
 ծվլացող...

17

Ներշնչանքների միջև
 գրչիս տարածությունը ամբողջանում է դանդաղ,
 ներշնչանքների միջև
 հուշի պատերին է զարկվում որոնումների ոգին,
 ներշնչանքների միջև
 իմ մատներից կաթում են երագի արցունքներ,
 ներշնչանքների միջև
 իմ հայացքն է դրվում
 վայրկյանների ոսկորների վրա՝
 իբրև տապանաքար,
 ներշնչանքների միջև
 մերթ՝ մանկան հայացք եմ, մերթ՝ երկնքի ցող,
 մերթ՝ ճանապարհ տողի, մերթ՝ կորստի
 գալարանք, մերթ՝ հուշի տերև, մերթ՝ խաչքար,
 մերթ՝ կասկածի մեխ, հիացմունքի վթար, հույսի երկմտանք,
 մերթ՝ կարոտի հոսք, մերթ՝ հավատի
 լույս, մերթ՝ հաղորդություն...
 Հողի թևերը չեն հասնում այլևս
 երկնակամարին:
 Ճանապարհս
 բիբ է,
 որով տեսնում է տարածության հոգին...

Ծովի թևերը չեն հասնում այլևս
 իմ երազներին...

Ներշնչանքների միջև թևածում են հրեշտակները...

18

Գրչիս ծայրին
 աղոթում է բառը,
 և միանում են
 հողն ու երկինքը,
 շունչն ու կրակը...

*

Իմ ներշնչանքից թափվում են
հոգուս պատանդված տարածությունները...

*

Ո՞վ է կրում խիղճը՝
խաչի նման...
Ճշմարտության դեմքը
ճանապարհի շեմն է,
որ հատում է ճամփորդը՝
չհասնելով դռներին արևածագի:

*Ժամանակի դեմքը
հոսում է մաս-մաս,
ընդլայնելով ուղին
ապաշխարության:*

*(Ես ապրում եմ աշխարհում՝
արշալույսի փետուրով ջնջելով հետքերս...):*

*

Ճակատագրի բառերը
լուսանցքներն են տարածության:
Եվ արցունքներիս ճակատագրի մեջ
խեղդվում է
մի տերև...

*

Թփրտում է: Հոգիս: Մենակության ցանցում:
Իմ հույսերի բոլոր սենյակներն են փակ:
Չկա մի ձայն: Մի ձեռք: Մի բախտորոշ անցում:
Շուրթը շոթի վրա՝ երազասպան մի փառ:

Միտքը մտքի վրա՝ կափարիչ է անթաղ:
Կատվի զվարթ մի վազք մութը լույսից զատեց,
մեջս շարժվեց կասկած մի ուռուցիկ, իմ Տեր,
ու՞մ շիրմին են մաղվել երազները իմ թանկ,

դիր աստղի տակ՝ մաշվել իմ կյանքը անցողիկ:
Մայթին ընկած լապտերն անի է մուրացողի:

Թփրտում է: Հոգիս: Մենակության ցանցում:
Իմ հույսերի բոլոր սենյակներն են փակ:
Չկա մի ձայն: Մի ձեռք: Մի բախտորոշ անցում:
Շուրթը շոթի վրա՝ երազասպան մի փառ:

19

Մեղքից ծորում է գիշերը զոջման
և լուսավորում ճանապարհը
ապաշխարության:

Հավատը դուռ է,
որով մտնողը
ինքն իրեն
այլևս
չի ճանաչում...

*(Ես իմ դեմքն եմ փնտրում
մեղքի անվերջանալի սյուների վրա...)*

20

Դու իմ սարսուռն ես, Տեր իմ,
և լռությունը,
որով համբուրում եմ
բողբոջները
Անսահմանի:
Բառերս
տեսնում են հողը, երկնիքը և... ինձ:
Տեսնում են իրար ու չեն ճանաչում:
Գրիչս քերում է ժանգը հիշողության՝
որպես ոստայնը ինքնաըմբռնման:
Բռնիր ձեռքս-
և կբացվեն աչքերը առեղծվածի,
որպես ծաղիկներ:

Շոյիր մենությունս դողդոջուն առասպելով քո մատների,
որպեսզի խցանի պես դուրս մղվի մարմնից իմ
դատարկությունը տիեզերքի...

*Համբույրն է
լույսը
հաղորդվող բոլոր մենությունների...*

*(Ես մարդ եմ,
թե՛... երկմտանքի ծավալ...):*

21
Լուսամփոփ
է մարդը
խղճի փողոցներում:

22
Քայլող երազանք եմ,
ապրող հավատ եմ,
հիշողության շեմն եմ.-
Ես այն կետն եմ,
որից
անտղ է ծնվում...

23
Սեր իմ,
լռությունդ
դարձնում է ինձ
հավատ.-
հույս է տալիս ու առնում թև,
շունչ է տալիս ու առնում դող,
առնում-տալիս է հարատև...
Թողնում է,
որ ապրեմ
ու երազեմ
Աստծո շուրթերի վրա...

(Ես մամրդ եմ,
թե... հաղորդության շղթա...):

24

Յուսի մի մրջյուն է բարձրանում
մտքերիս թելով
դեպի դուռը տիեզերքի .
դա իմ չասվող խոսքն է:

*

Յրեշտակի ճերմակ թևը ծածկելով
մարմինը բառի,
հարություն տվեց
ոգուն Անհունի:
Բառն իր լռության հաղթահարումով
ձեռք բերեց հայացք:

Լռության ճակատը
համբուրող խոհերս
իրենց հետ տենդի սյուններ բերեցին:

Փոթորկված հոգուս հետքերը
թողեցի՝ որպես նշաններ
հիշողության մեջ ճակատագրի:
Ինձ առաջնորդում է ոգին ներշնչանքի:
Եվ լռության ոգուց
պոկվում են տողերս՝
թևերը Արծվի:
Երազ-անդունդ-կյանք:

25

Յաճախ չասված խոսքերիս կառափնարանն եմ մտնում.
գրչիս ծայրին իմ արյան բեղուն երազն է ճշում:

Իսկ լռությունը, որպես հիշողության որոգայթ,
ներսուզում է բառերի օրորոցները դատարկ:

Բառի խավարն են ձեռքում կայծակներով տողերի...
Կախվել ճոճվում է լույսի պորտալարը եթերից...

Քերթողական արվեստի աստեղնային անդրադարձ-
երկնի առէջ, ելքի դող և համբույրի անսպան հաց:

*

(Դեմքս կպել է անդունդի եզրին
ու բրածոյացել.
իմ շուրթերով սահում են
թևերն արշալույսի`
արթնացնելով
խորքերը մանկության երգի):

26

Օ՛, ոգու տարածքից աքսորված արշալույս,
օ՛, արմատի ճիչ,
հիշողության փշոված դռներ`
արմատներիս տրոփող երկինքների մեջ,
կամուրջների հեկեկանք`
թաշկինակի պես հորիզոնի ձեռքերից սահող...
Ես ուղղում եմ
քայլս
Անհունի շնչառությամբ
և իշխում
մահի
ունայնության վրա. -
շնչառությանս թևերն են
բախվում
անհասության գագաթներին,
և կարոտներիս փետուրն է ընկնում
լռության կարմիր անդորրի վրա...

*Ես հանում եմ
դեմքս*

բրածոյացած ճամփաների բռան միջից
 և փռում
 լույսի շնչառության վրա-
 հրբռն պատմության զոհասեղան...
 Խավար: Երկինք: Երազ:

27

Ձեռքերս դեպի լուսայգը բացվող պատուհաններ են,
 ձայնս մի խարխուլ աքսորավայր է՝
 տանջանքներով լի,
 շուրթերս՝
 հույզի հին կառափնարան...
 Թեև շուրթերիս
 բոլոր սրբերի տառապանքը կա,
 բոլոր բանտերի
 մղձավանջը խոլ
 ներծծվեց իմ մեջ՝
 հոգեվարքի կարմիր ելևէջներով...
 Մաշկս կոխկրտվեց,
 որպես հին փառքի մի հրապարակ,
 ուր սպառվել է
 վաղուց
 կուռքերի թագավորության
 վերջին կենտ
 օրը...
 Ես՝ ինչպես տանեմ
 այսքան ահռելի
 ու մեծ
 ՏՄՏՄՆՈՒՄ...

28

Բոլոր կշիռներն են լուծվել երազիս մեջ,
 բոլոր արևներն են հատակն իջել մեղքի,
 մեկն էլ երբ եմ, Տեր իմ, կարոտել ինձ այսքան,
 հասունացել այսքան կորուստների ահից:

Մեկ էլ Երբ է աշխարհը սարսուռներով կարմիր
իր խորքերի մաղձը թափել հողի վրա,
հետո... սարսափահար ետ ընկրկել հանկարծ
ու խռովել, սսկվել իր վերքերում... օտար...

Չես զարմանում, Տեր իմ, որ աշխարհում այս մեծ,
լայնածավալ այսքան, այսքան անեզրական,
սուտը ճշտի մեջ է տեղավորվում դարձյալ,
փառքն է գահակալում անքավ մեղքի վրա:

Բոլոր կշիռներն են լուծվել երազիս մեջ,
բոլոր արևներն են հատակն իջել մեղքի,
մեկ էլ Երբ եմ, Տեր իմ, կարոտել ինձ այսքան,
հասունացել այսքան կորուստների ահից:

*

...Վերջին, վերջին ճիգով
կյանքի շուրթին հասած Ոգու տոնն այս կարմիր-
սրբագործող արցունք ու երազի արգանդ,
մրրիկ տառապանքի ու աղոթող հավատ,
օրորոցվող արյուն ու աստղային քանքար,
ավիշների տարերք ու մայրացող անուրջ...
Վերջին, վերջին ճիգով կյանքի շուրթին հասած
հավատամքի ավյուն ու բռնկում սերմի...
Լույսի կարմիր սահանք: Գյուղեր, գյուղեր, գյուղեր՝
իրենց երազանքի ստինքներին կառչած...
Չկա ետդարձի հուն: Մղձավանջն է փախչում
իմ խոհերի ծուծից, շնչից, օդից, լույսից՝
վերջին, վերջին, վերջին իր պատյանը լքած...

29

Իմ երազների սահանքների միջով
հոսում է դեմքս՝
վերածնվելով,
ինչպես...
կայծքար:

Իմ արձագանքը մայթին՝
կոչվում է ստվեր:
Իմ արձագանքը ծառին՝
կոչվում է ընծյուղ:
Իմ արձագանքը հողին՝
կոչվում է հետք:

Իմ երազների սահանքների միջով
հոսում է ժամանակը,
որպես ներշնչանքիս
դեմքը թրթռուն:

Մայրենի լեզու,
հավատի բարբառ,
մանկության խարիսխ.-
առանց քո տառի պտղաբեր հպման,
առանց քո բույրի, հողաշիթ գույնի
և աղավնաթև քո հնչյունների...
Ես ես չեմ լինի...

*

*Մայրենի
լեզվով խոսող ամեն շուրթ
մի ճրագ է,
որի լույսը
ամենօրյա Ելք է
անորոշություն -
լաբիրինթոսից...*

*

(Ես իմ ձայնն եմ փնտրում,
և արձագանքը հարվածում է ինձ...
Խղճիս լույսն եմ փնտրում,
և իմ խավարը ցնցում է ինձ...):

30

*Սեր...
Ասում եմ մի բան՝*


ալեկոծելով լռությունը ճակատագրի...

(Յիշողության վանդակում թռչկոտում է
իմ երազը...):
Մեր շուրթերի միջև ապրող տարածքներում
ծիածանն է թևում...
Եվ արյուն է կաթում
անհազ պատրանքներիս կմախքի վրա...
ԿԱՐՈՒՍԵՂ ԲԱԽՏԻ:

31
Մենք լուռ կըմպենք ակնթարթը մենակության:

Եվ բառերը ազատվելով տառապանքից՝
կձախրեն վեր...

32
Ո՞վ է, որ երազ ունի ու չի սարսռում,
ո՞վ է, որ չի գնում իր գոյությանն ընդառաջ...



Նկարը՝
Կամիլայի

33

Մահվան սուրացող պատկերը
 երազներիս կոկոններն է պոկում
 և նետում ոտքերի տակ...
 հորիզոնի:
 Հողից բուսնում են կարմիր
 ասքերը
 ձեռքերիս:
 Ոտքերիս շնչառությունն է
 տարածվում
 ճանապարհի նման:
 Շուրթս,
 թե չգտնի հրայրքը շուրթերիդ,
 կդառնա... աղբյուրի ակ:
 Եթե գաս
 և ինձ չգտնես... հանկարծ,
 զրուցիր... ստվերիդ հետ
 և այս տողերը,
 որպես մի բուռ հող,
 լցրու
 ծաղկամանի մեջ
 և աճեցրու
 հույսի ծաղիկներ...

34

Հյուրահոն են արահետները գյուղի:

 Հորիզոնն է հենվում պապիս մտքի վրա,
 տարածելով
 շուրջս հույսի աստղացույքեր...

 Ծարավել են հետագծերը տենչիս:

 Պապիս խոսքը երազանքի ձիչ է կարծես...

 Գոտնու նման մաշվեց նրա ստվերը հին...

Ծառից ընկնող տերևները համբույրներ են,
որ հղում է Աստված հողին:

35

Հույսն իր ցանցն է հյուսում,
իսկ իրականության շունչը քանդում է այն,
մաս-մաս նետում

երախի մեջ անցնող վայրկյանի:

Կարոտը

*Երբեք արժեզրկված թղթադրամ չի դառնալու,
ինչքան էլ կեղևաթափվի ժամանակի վազքը,
քանզի նրա մեջ բարախում է հոգին.-*

տարածության քայլը

բառն է,

դեմքը`

անդուլ դրոնումների բարախյունը...

Միտքս`

ինքնամաքրման աստվածային

հնարավորություն,

անհասությունն իմ համբույրն է...

Կարոտը

*Երբեք արժեզրկված թղթադրամ չի դառնալու,
ինչքան էլ կեղևաթափվի ժամանակի վազքը:*

Մի կետ Անհունից ընդառաջ է գալիս ինձ

և բոլոր-բոլոր ժամանակներին.

դա իմ գրչի ծայրն է...

Ես իմ խիղճն եմ փնտրում,

և տողս դառնում է զոհասեղան...

*

Որոնումից առաջ

և հետո...

Մտքերիս անձեղք պատերով


բառն է մրջյունի պես վազում,

չգտած ոչ մի ելք՝
ընկնում է,
դրպես շեշտ ապստամբ...

Մտքերիս սպիտակ պատերով
բառի ստվերն է ծավալվում
անվերջ,
և ձյուն է մաղվում
մրջյունի
(և իմ)
տիեզերական
մենության վրա...
Ո՞վ է, որ իրեն գտնելիս՝
չի կորցնում
նաև
դրոնումից առաջ
և հետո...:

*

Հավասարակշռվում են բառն ու ասելիքը,
տիեզերքն ու երազը,
ծաղիկն ու ձգտումը...



*Լուսանկարը՝
Ռոբերտ Բաղդյանի*

*

Ճակատագրի ձեռնափայտը կորցրած պապս,
որպես աբսուրդի պատկեր,
ապրում է հեռավոր սենյակում տարածության:
Աձյունափոշուց բուսած ծաղիկ է
իմ ողջույնը:
Ես ապրում
եմ աշխարհում:

36

*Երբ ես չեմ լինի-կլինի՜ քամին, կլինի՜ ձյուղը,
մեկը հուշերիս որբանոցներում լապտեր կվառի,
քրքրելով իմ անրջանքները տեսիլքների՜ պես...
Դեմքի գծերը թողած հատակին մոմերի՜ նման՝
նա կհեռանա-
խավարը կիջնի,
և միայն մի մոմ կվառվի ուժգին՝
բոցի շեղբերը խրելով Ոգու պարիսպների մեջ,
մի մոմ -մի տեսիլ ցուլքեր կցրի
աշխարհի քարե խրախճանքն ի վեր,
երգեր կցրի ու կմոխրանա՜...
մի կարոտ-մի հողմ,-
իմ մենությունը...*

37

Գոլորշու նման
իմ հույսերի պաղ ուրվականներն են
բարձրանում բախտի խոռոչից դատարկ:
Եվ ծանրանում են ոտքերս հողին,
որպես ամպ: Հեռվում-
ինձանից թափված փոշին է արդեն
դարձել հորիզոն:
Տես... ստվերները ազուցվել իրար
և բուրվառում են մի տոնահանդես.
Կարծես մորթվում են ճառագայթները
ու հանգչում ձեր մեջ,
ոտնահետքերիս կայծքարե բիբեր...

Այսպես հասել եմ
կյանքի (թե՛ մահի) լուսավոր ելքին,
և ինձ երբեմն այնպես է թվում,
թե իմ շուրթերը օրորոցներ են,
որոնց մեջ սիրո բարուրն է ծջում...
*Մաշկս բաժանում է իմ ապրումները
վանդակներում...:*

*

*(Իմ դատարկ տեղում...
հուշի ինքնագիրն է):*

*

Իսկ իմ ստվերը՝ մոխրացող քամի՝
որ քարշ եմ տալիս ավերակների
միջով: Խոհերիս նման մերթ կարմիր,
մերթ կանաչ, մերթ սև երանգներ ստանում,
կայծեր է հանում հող ու քարերից
տանջված իրանիս հին սպեղանին:

Ձայներ է հանում: Եվ առեղծվածի
պատուհաններն է բացում կտուցով,
ու ստվերային այդ բացվածքներից
հին պատկերներ են բարձրանում մեկեն՝
ոգիներ, դեմքեր՝ քարե արցունքով,
որ հիշողության մեր նիրհը բեկեն:
*Մեկը ստվերիս վրա հող ցանում
ու ակոսներ է քաշում: Խյրտող
փետուրներ կան տաք իմ ստվերի մեջ՝
իմ երազների ապաստարանում:*

Բախվում են իմ մեջ ուժեր հարաշարժ,
ափերս են շրջվում ջրերի վրա,
ստվերս ինձ պես տրոհվում մի շարք
սուր անկյունների՝ ձգվում է դարձյալ
դեպի միջուկս: Ջղերով պրկված

բախվում ինքս ինձ վանդակում անտես՝
 (իմ ստվերի մեջ՝ փետուրներ արնոտ),
 ես քրքջում եմ աշխարհի վրա...
 Ինքնաճանաչման ճանապարհն ի վեր
 մեկը վանդակն այդ տանում է վաղուց,
 (վաղուց, շատ վաղուց... ու տեղ չի հասնում)
Աստճո գոհանակ հայացքի ներքո...

38

*Խիղճս խորխորատ է,
 որից ելնող ժամանակը
 ապաշխարության դեմքն է:
 Իմ և իմ միջև պատկերների եռք է:
 Ես փնտրում եմ իմ մեջ ինքնաճանաչման
 կենսաբնիկ եզրեր:
 Ես մնում եմ դրսու՞մ:
 Ես իմ փնտրումն եմ:
 Ես մի տարածություն եմ, որ պահվում է բառերի թևերի տակ:
 Իմ կյանքը ձգվում է
 անհայտությունից մինչև անհայտություն:
 Իմ հայացքի զագաթներից կաթկթում են
 հղացումները
 Անսահմանի:
 Ամեն անգամ աչքերս բացելիս՝
 մի ցուլ է ընկնում լռության զանգվածի վրա,
 և փոթորկվում է հոգուս շրջանառությունը...
 Երկինքը հոսում է մաշկիս արթնացող բիբերի վրայով,
 որպես պատարագ:
**Կառչում են տողերս սյունից հավատի՝
 գուցե թե կյանքին մի նոր բան ասեն:***

39

*Տեր իմ, ինչպես նռան կեղև,
 իմ հայացքն է կիսվում
 քո լռության շեղբով,
 և հայացքիս արյան անծայր*

*թելով
գլորվում են
աչքերը տարածության...
Բառ-Պատուհան-Սեր:*

*

Տեսնում եմ լույսը`
հայացքը Պահի,
որ հավատի պես հոսում է երակներիս միջով
և կառչում աշնան հեռացող աստղին:
Շունչն եմ ըմպում ցողի`
արարելով համբույր տարածքների միջև:
*Որպես երագի սրբագործություն`
ծնվում է դեմքս:*
Յնչյուն եմ համբուրում
ես արմատներով հիշատակների:
Ես հրնդն եմ վաղվա:
Եվ անհայտության կոպերից կաթող
անրջանքն եմ ես:
Իմանտը Ելքի,
որով հատվում է սահմանագիծը
տիրող Ունայնի:
*Անունս շնչում է
լույսը տիեզերքի...*

*

Թե ստվերս լինեի իմ կեղևը,
ինձ վաղուց էին մաշել հուշերս սայթաքուն:

Թե քայլս լինեի իմ կեղևը,
ճանապարհիս երազն աչքերը կբացեի
անդունդի ցողի մեջ:

Թե կարոտս լինեի իմ կեղևը,
տարիքս իբրև ավազ կհոսեի
ժամանակի կույր աչքի վրայով:

Թե հավատս լինե՛ր իմ կեղևը,
մոմի բոցն իմ տեղ կլուսավորե՛ր
երկինքը Աղոթքի...


40

Մի օր,
անկասկած,
բառը կանգ կառնի՝
հոգուս թրթիռները
ունկնդրելու համար...
Ոչ շշուկ: Ոչ ձայն:

Սպիտակ մի երազ
կբաբախի թևերին
տարօրինակ
այդ
ծեսի,
ծիլը իմ անվան մասնիկը կշրշա
ականջին հովի,-
ոչ մի արձագանք
չի ողողի ավիը
երկիր -լռության...
Մի օր,
անկասկած,
վարդը կբուրի՝
կախված իմ վերջին հայացքի դողից...
Բառը կմնա
ճակատագրի դեմ մենակ,
ինչպես ես՝
դատարկ
ու ան-դա-մա-հատ-վող
իմ մարմնի դիմաց...
Մի օր,
անկասկած,
լույսը կձչա

ու բարձր կհեկեկա երազներիս
ամայի
շրջանակի մեջ...
Եվ ես կտեսնեմ
առեղծվածների
թարթիչների վրա
երգող
իմ
հոգին..

Լույսը ապրում է
հուշերի սահմանից այս կողմ...



Նկարը՝
Կամիլայի

**ԱՐՅՈՒՆՍ ՃԱՆԱՊԱՐՅՆ Է ԻՄ
ԵՎ ԻՄ ԱՊԱԳԱՆ**

**Ներսը և դուրսը՝
երկու տարբեր բևեռ,
որոնց միջև անդունդն է ներդաշնակության:**

1. ԵՐԱՋԸ ԴՈՒՌՆ Է ԺԱՄԱՆԱԿԻ

1

Երազը դուռն է ժամանակի,
իսկ ճանապարհը
արցունքն է բևեռի...
Գլորվում է բառը՝
որպես գնդակ...
Յրեշտակի թևերից կախվել են տեսիլները,
որպես տաճարներ սիրո:
Ցավահարույց դռներ են բացվում
շնչառության մեջ այս տարածության:
Ո՞վ է ծեծում մուտքն իմ Մենակության:
Մի ծաղիկ բուրում է անդրադարձներում
ոգու ու արյան:
Իմ սենյակն ինձ զրկում է հիշողությունից:
Լքված զոհասեղան է կարծես իմ Սերը...
Մոխիր: Օ՛, սև փիլիսոփայություն...

Ես հղկում եմ հայացքը ճանապարհի,
որպես դիմաքանդակ,
և դնում երազի պատվանդանին:

2

Քարացել է բառը՝
մեկուսարանը տիեզերքի:

Պատմության սապատից իջնում է օրը
 և
 բացում հանգրայցը ճանապարհի:
 Յուսերի կարմիր դագաղն է ընկնում
 ուսերից Անհունի:
 Մի ձեռք կշարժի
 նժարը կշռոյթների:
 Ներսը և դուրսը...
 հոգու կարմիր լրնյսն է...
 Գիշերվա պատյանի վրա
 քայքայվում է ժամանակը:
 Բառերը տանում են
 խաչը ճանապարհի...
 Խոտը աղոթում է հրդեհներում վերին:
 Քարացել է բառը`
 մեկուսարանը տիեզերքի:
Ե՛տ տար տողը,
ինչպես կափարիչը քառսի, և կտեսնես՝
թե ինչպես է ծնվում ճանապարհը...

3
 Ես որոնում եմ իմ ճանապարհը
 բառերի ներքին ուղեցույցով...

Մեծ լռության առաջին բանը...
 շրջում է գազաթներին կամքի
 և վառում լապտերը խղճի-
 մեղուների թռիչքը դեղին:

Տիեզերական ելք է
 իմ ճանապարհը:

Չարության երկնքի վրա՝
կամուրջներ երկվության:
Ծաղկած գրույց՝
մեղունների դեղին թռիչքի վրա:
Դա ապագայի դեմքն է,
որ սրսփում է
հեռավորության ցողունի՛ վրա:
Մեծ լռության առաջին բանը...

4

Ճանապարհի ճիչը
հիշողության հաց է,
որ գլորվում է անդունդներն ի վար...
Ոգու սո՛վ է և...
աներևույթ կյանք:
Ժամանակը պատանդ է
ոտնահետքերում հիշողության:
Մի կետ իր վրա է սևեռում
ուշադրությունն Աստծո.
դա քո հայացքն է,
բանաստե՛ղծ,
որ հասունանում է
աստղի օրորոցում:

5

Անսահմանության կոկորդը
անդունդն է հիշողության:
Աստծո շութերից պոկված լռությունն եմ,
որ որպես տող օրորվում է՝
կախվելով սյունից անհայտության:
Այնտեղ է բնակվում անհայտությունը,
ուր բացակայում է հիշողությունը ցավի:
Ունայնության հետքերի վրա

պառկել է ստվերը պատերազմի
 և նրանից ելնում են շիվերը
 խաղաղության:
 Վերքերի բռունցք՝
 անորոշության պատվանդանի վրա:
 Իմ արյունն ինձ զրկում է ազատությունից:
 Ճախրում են բները երկնքում Չարության:

6

Իմ ստվերներում լույսը հասնում է,
 ինչպես նարինջ:

Չույսը հունդ է դառնում խռոչներում Միֆի:

Ազատության սյուններն ի վեր ծանու է լինում
 լույսը:

Խավարի կայծակե արմատ:
 Չավատի լաբիրինթոս:
 Չայացքի ճուպանուղի:

Քարե ուրվականները
 ջրոր են խմում անհագ
 ակունքից ստվերների:

Իմ ստվերներում լույսը հասնում է,
 ինչպես նարինջ:

Չույսը հոնդ է դառնում խռոչներում Միֆի:
 Տապանաքար բառերը պառկել են լռության ստվերի վրա
 և լսում են ձայները Անդրաշխարհի:
 Աստծո դեմքը մերթ լուսանում է
 ու մերթ մայր մտնում
 ծառի կատարին:

7

Իմ հավատն ինձ զրկում է իրականությունից:
 Կառափնարանից ընկնում է դեմքը
 լռության:
 Բարձրացնում եմ ստվերը քարի
 և տեսնում թևերը Անսահմանի:
 Ես ապրում եմ սապատներին սահմանների:
 Մաքրագործվում է կերպարը հողի
 ոգեշնչումների ալիքների վրա:
 Տապանաքարեր
 չեն բառերը,
 այլ՝ զսպաշապիկներ
 ոգու:
 Հիշողության զոհասեղանին
 թփրտում է հասցեն Լռության:
 Ձայնիս ժամանակը
 ետևում է թողնում
 պատերը Աղմուկի:
 Անունս հողաբեկոր չէ՝ որ քայքայվի...
 Անունս տիեզերքի շնչառությունն է:

8

Ձայների բարուրներում
 խլրտում են ճանապարհները,
 և իրերի հայացքից դուրս է թռչում
 օրը՝
 որպես պատանդ:
 Սովորույթի զսպաշապիկներից
 ազատվում են բառերը
 և դառնում դիմագիծը տարածության:
 Իմ ձայնն ինձ զրկում է անհայտությունից:
 Առասպելական ներկա:

Եվ դուրս են մղվում
տողի խորքերից
վանդակները ոգու:

9

Ճանապարհների միջև ակունքվում է լույսը:
Չաղթահարելով ինձ՝
ես բացահայտում եմ ոգին տիեզերքի:

Խելահեղ բռնկում: Չնչյունների պարս: Աստվածային
խորհրդի:
Անհայտի պատուհաններում
հղացումներիս վաճառն է:

Իմ երազն ինձ զրկում է ունայնությունից:

Չորս ձեռքերի և կարոտներիս միջև
արթնանում է փողոցը մանկության
և լցնում տարածությունը ծվլլոցով թռչունների:

10

Ես շրջանցում եմ իշխող մթնոլորտը պոեզիայի
և հասնում ներշնչող ոգուն տարածության:

Մի սկիզբ, որ բացվող
դեմքն է Ապագայի:
Սահմանների բռունցք,
որ իջնում է մերթ ընդ մերթ
ակունքին Ազատության:

Օրորոցվում է
տողը պոետի,
ինչպես փրկության հոյսն Ապագայի:

Սերմի հիշողություն՝
բռունցքներում արյան:

Ինձնից ուր որ է դուրս կթռչեն
խցանները հիշողության:

11
Ես ուտում եմ հացը հիշողության:
Չայացքս զարկվում է փեղկերին ճակատագրի
և վերածնվում, որպես արձագանք ոգու:
Չանապազօրյա խոսք է
հացը, որի մեջ
դեռ սոսափում են արտերը երկնաբույր:
Չայացքս ակոսվում է երազներում հասկի:
Եվ անձրեւ է բխում թարթիչներից հիշողության:

12
Երազի դուռ է ժամանակը:
Մտքերի բողբոջ՝ տարածության ճյուղին:

Քանի է բխում
կարկաչից աղբյուրի և ծածկում վերքերը
հողի:
Եվ ցավի լույսից հառնում է խաչքանի:

13
Լռության բարուրն առած ձեռքերում՝
օրորում է ծառը-
և ծիլերն, ինչպես դողանջներ,
ելնում են ճյուղերից Ոգու:
Աղբյուրի ջուրը զանգն է Չարության:
Իմ քայլերով հղկվում է լռությունը ճանապարհի:

Չորիզոնի ափի մեջ արթնանում է սիրտը տարածության:
 Բառերի խավարը ուտում է ճանապարհիս լույսը:
 Որպես վարդ՝ բուրնում է վայրկյանը:
 Իմ ներկան բանալի է:
 Չավատիս խորանում վառվող մի մոմ է
 ստվերը պապիս:
 Եվ հիշողությունը դառնում է ճանապարհի բիբ:

14

Աշխարհը՝ զոհասեղան,
 ուր փետրահան են լինում ճանապարհները...
 Ոգու հացով սնվող արմատներ են
 բառերը:
 Իսկ Ապագան միշտ կայանում է ինձնից
 դուրս,
 որպես վարդ...
 Աներևոյթ հիմն:
 Մուսաների այց՝
 անհայտությունից:
 Արյունս ճանապարհն է իմ
 և իմ հասցեն:

15

Չորիզոնի վրձնից կախվել է
 տիեզերքը:
 Մեղվի պարսեր են գնդվել երկնքում,
 և հրեշտակների թևերից սնվում են
 օրերն ապագա:

Չորս քայլերի և Անհունի միջև
 արթնանում է մի ձեռք
 և կերտում տաճարը հավատի:

16

Ճանապարհը,
 դուրս գալով պատյանից միֆի,
 սողում է, ինչպես օձ,
 և կախվում ծաղիկների երազի վրա...
 Անձրևի բազմալար շնչառության մեջ
 ծնվող մեղեդի:
 Զայքայվող ժամանակ և... ճակատագիր:
 Սերը... գրկում է ինձ... ինքնությունից...
 Ո՞վ է կտցում բիրը Անորոշության
 դատարկության կարծր զսպանակի վրա:
 Ո՞վ է հանում թևերը հիշողության
 վանդակից Անհունի:
 Երկինքը հրեշտակ է:

17

Նստած եմ: Եվ
 հայացքով չափում եմ
 միտքը տարածության:
 Ես ինձ կախում եմ
 իմ արձագանքից:
 Անհունի հայելու մեջ
 գլխատվում եմ
 ստվերները ոխի:
 Իմ միջով բարձրանում է
 հայնցքը ծիլի:
 Ոգու մեկուսարան է
 այս ճանապարհը:
 Պատվանդանի լռության մեջ՝
 արյուն, փետուր, անդունդ:
 Նստած եմ՝ դրպես
 ընդհանրացում:

18

Չայացքը տարածությունն է
բառի,
որով բացվում են դռները կյանքի:
Աշխարհը
վերածնվում է գագաթներից ոգու,
որպես հավատի խարոյկ:

19

Ես իմ աչքերն եմ
կերտում
կավից ու հրից բառերի
և դնում
խոռոչներում Անհայտի:
Իմ գրչի երակով
բաբախում է ժամանակը:
Բառը փնտրում է
հասցեն տարածության
իրականության
շրջանակից դուրս...
Ճանապարհի հայացքը
թուխս է նստել
քարերի վրա
Անհայտության:
Ես իմ բառերն եմ
կերտում
կավից ու հրից աչքերի
և դնում խոռոչներում
Անսահմանի:

20

Չույսի դուռ է հայացքը ծառի, որից կախվում են
պտուղները մութի և ընկնում ճանապարհի անդորրի

մեջ: Այնքան
 փափուկ է հավում քամին ստեղծերին
 օդի, որ արթնանում են երազները դատարկության:
 Օրը աչքի պես հսկում է շարժումը կասկածի, որ
 քարշ է տալիս իր ետևից օձը: Խոտերը աճում են
 մենությունից դաշտի: Փետուրներ, որ թափվել են
 թռիչքից երազի: Լռության պատը շրջանցելով, փողոցը
 հատում է մի կատու: Մի թիթեռ կատա-
 րելով շարժումը վերջին՝ դառնում է մասնիկը
 պատմության: Իրական չէ
 կարոտը, որ բացում է աչիկները բողբոջների: Ե՞րբ է
 լուսանալու ցավը մրջյունի: Խոհի թևեր են տերևները,
 որ կարմիր, կապույտ, կանաչ երկինքներ են հանում
 արմատներից Միֆի: Կանչը,
 որ հասնում է ինձ խորքերից բրածո, շնչավորում է
 ներկան: Յուզի կամրջով
 անցնող քամին փաթաթվում է քարաժայռին:
 Յույսի դուռ է հայացքը ծառի, որից կախվում են
 պտուղները մութի և ընկնում ճանապարհի անդորրի
 մեջ:

21
 Ես հասնում եմ ինձ,
 թե իմ... անհայտին:

Դիմագծերի ձմեռ:
 Ձյունը բերում է հիշողության
 փաթիլներ
 և ծածկում դիմագծերը
 լեռան:
 Այսպես վերակերտվում է
 դեմքը տարածության:
 Ես քեզ հիշում եմ

ստվերիդ ամենօրյա պատարագով:
 Ապագան
 անտեղյակ է ցավից երկունքի:
 Երազը բերում է հիշողության
 փաթիլներ
 և կերտում դիմագծերը Անհայտի:
 Անդեն է բառը:
 Այսպես վերակերտվում է
 դեմքը հիշողության:

22

Սա իմ հետագիծն է.
 ծաղկած զրոյց՝
 Անհունի հորիզոնի վրա:

Ջարդանախշ չէ՛
 ոտնահետքս,
 այլ՝ ակունքը աղբյուրի:

Քառսը մարդն է,
 որ ինքն իրեն ընդառաջ է գնում...

Սիրտս սահում է երկնքից սիրո
 և հենվում ցողունին հեռավորության:

23

Մղձավանջի բիր՝
 խռոչներում ցավի: Լույսը
 հատում է ցանցը տառապանքի,
 որի մեջ մեռած
 թիթեռներ կան:
 Ճակատագիրն, ասում են, մի պատյան է,
 որ սպանում է (մերթ ընդ մերթ)
 իր մեջ բնակվող արարածին:

Երջանկության բակում
 գլորվող գնդակ է
 հայացքը Դիպվածի:
 Երկնքի և երկրի միջև:
 Չայացքի կամարներից հոսում է արյունը
 մեղքի: Մի թռչուն
 բախվում է պատուհաններին: Ես քո
 վարսերից կախել եմ գիշերներս
 զանգերի պես, և երբ
 հիշում եմ քեզ, գիրկս լցվում է
 դողանջներով...

24

Անտիկ աշխարհի շրնչն է փոթորկվում
 լաստերի վրա հորիզոնների:
 Ունայնի ցավն է դեռ թիավարում
 խավարի միջով:
 Այն աշխարհից
 այս աշխարհն է հասնում
 լրյսն Առաքյալի -
 կայծքարե մի բան,
 որ հրդեհվում է գազաթներին Լեռան:

25

Մահը՝ սառույց ողորկ,
 որի վրա սայթաքում է ճշմարտությունը:

Չիշատակի մոմ է այս ճանապարհը,
 որի բոցը ոչ թե լույս, այլ
 արյունն էր, արյունն, արյուն...
 Մասիսի ճերմակ օրորոցներում
 արթնանում է կանչն Անսահմանի:

Մի ձեռք
 հող է լցնում բիբերին իմ ցավի...
 Տառապանքն ինձ զրկում է տեսողությունից:

26

Դատարկվում է ճանապարհը
 ինչպես ոգի
 Պոեզիան իր ներքին լույսով է չափում
 վիհերը բառերի
 Ճակատագրի մութը դառնում է
 միջակետ Մեղքի
 Հիշողության զսպաշապիկից
 ազատվում է ժամանակը
 Միասնական ոգու բևեռների վրա
 քայքայվում է
 նշանն Ապագայի
 Անբռնակ վայրկյաններից կառչում է
 մթնոլորտը
 Ձայնի
 Հավերժության բարուրներում
 կայանում է
 ճիչը դատարկության

27

Քամի է ցավը, թե օրորոց...
 Երբ քո առջև սփռված ասպարեզը
 թուղթ չէ, այլ
 շնչառությունն Անհայտի,
 հավաքիր ստվերները մանկության,
 որպես սերմեր,
 և բուռ-բուռ ցանիր ակոսներում
 լուսաբացի:

Ջիշողության քարերից
բուսնում է ժամանակը՝
ինքնությունը տառի:
Տարածության լույս.
դեմք, որ ազատվել է
դիմակներից: Ակունք
է ճանապարհը,
ոչ թե՛ պատյան:
Ջացի փշրանքներ,
որոնցից ընծյուղվում է
երկինքը ճնճուկի:
**Ժամանակը տեսնում է
իմ աչքերով:**

28
Կես երջանկություն
կես քառս
կես բառ
Տեղափոխվում է քարտեզի վրա
կիզակետն Ամբողջի
Ձայները ուրվականի դեմքն են
վերականգնում
հնադարյան այս քարերի վրա
Պատմության կեղևը պատռոտում է ոգին
Քարե մի սարսուռ
թևավորվում է
կրակով Աստղի

29
Ներսը և դուրսը՝
երկու տարբեր բևեռ,
որոնց միջև անդրնդն է ներդաշնակության:

2. ԿՅԱՆՔԸ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ

Չուշարձանի
հայացքն իջնում է, ինչպես կացինը
դահիճի:



Իրականությունը մնում է ճամփորդի
հուշերում,
որպես պատանդ:
Երկիրը ուր որ է ծնունդ կտա մի նոր
փոխակերպության:



Ժամանակը մասնատող դանակ է
ստվերս,
որ կտրում - առանձնացնում է
չորչորուկ ճյուղերը
Երազի,
որոնցով վառում եմ խարոյկն իմ Մենության:



Մարմինս վարագույր է,
որ ընկնում է Ապագայի
անդունդների մեջ:
Չոգիս տիեզերքի բանալին է:



Ճանապարհն իր կորցրած դեմքն է
հանում
քարակույտերից:

Նռան հատիկ է
աչքը տարածության:



Չետո երազի ձնծաղիկները
կամացուկ կքսվեն իմ երակներին,
որոնց վրա գրված ճակատագիրը
անընդհատ կջնջի մի անտես ձեռք:
Ինձ կարթնացնի ոգին ճանապարհի:
Մի դուռ կբացվի դեպի լռության
արեգակը: Չիշողության լույսը կփաթաթվի
ոտնահետքերին իրականության:
Չետո բառերի լռությունը ինձ կմղի
դեպի գաղտնիքը ժամանակի,
և ես կդրոշմեմ լուսաբացի թերթերին
ոգու կարմիր կանչեր,
և կշոշափեմ Ապագայի հայացքը՝
որպես հասնող պտուղ:



Ստվերների ուռկանի մեջ
թփրտում է
հորիզոնը ծառերի:



Ինչ-որ մեկը
վերածնվում է (որերորդ անգամ)
և գնում դեպի անհայտություն:



Չամբույրների հողից
ժայթքում են
ծաղիկները:

Ես իմ երազի պատանդն եմ դեռ:

Անսպասելի փոթորիկից
 տապալվում եմ
 ամբարտակները ոգու:
 Վերևն ու ներքևը
 միավորվում եմ
 ճյուղին բալենու:
 Ինձ շրջանցում է
 հավիտենությունը՝
 մասնատելով դեմքը ճշմարտության:
 Դեմքս
 միավորում է լռությունը
 ամենայն Սկզբի:
 Շուրթերս մոխիրներ են,
 որ բոցավառվում են կրակից առեղծվածի:
 Ոտքերս
 սյուններ են,
 որ մխրձվել են անցյալի
 պարիսպների մեջ
 (ձևափոխվում է Ապագայի
 դեմքը:
 Ներկան է միայն,
 որ դեռ չի ելնում
 պատյանից
 Ստվերի):



Իրերի մերկ շրջանառության վրա ծավալվող
 հորիզոն: Ճառագայթի կորիզ,
 որ ծլում է ակոսից Երազի:
 Ինչ-որ մեկը իմ հավանտն է կոխկրտում,

և իմ աչքերից հոսում է արյունը
ճանապարհի:



Տանիքներին ծալծլվող
Երկինքը
մանկության համ ունի:



Սովերս ցնցվում է.
տանջանքիս աչքերն են
հրաբխով լի:



Այս լեռնաշխարհը
զսպաշապիկն է կորուստների:
Երկնքի հրե տերևներն են բխում
սալաքարերից:
Թռչուններն իրենց օրերն են կտցահարում՝
փետուրներ սփռելով ճանապարհներին:



Պատմության անդունդի վրայով
թռչում են սերմերը,
ինչպես ասուպներ:
Բառերի հրալեզու շնչից
բացվում են թևերը հիշողության:
Իմ մենությունը
պտտահոնում է:
Ես իմ հիշողության երևացող մասն եմ:
Իմ և իմ միջև

սավառնում են հանգրվանները
տիեզերքի:
Բառերը հոգուս բանալիններն են,
թե...ընկնող վարագույրները ժամանակի:
Դատարկության զսպանակ է փողոցը:
Ապագայի կեռից
կախվել է
նորօրյա Ավետիսը:

Մեկն իր երազի կայծերն է ներքաշում
պորտալարով Անհունի:

Ես ուր որ է կհասնեմ անդունդին
Ոգու:

Վանդակավոր է ազատությունը հայացքի խորքում:
Վանդակավոր է ազատությունը հավատի խորքում:
Վանդակավոր է ազատությունը երազի խորքում:
Արցունքները
ճիչեր են
ազատության,
որոնցով ձեռքվում են անապատները
ոգու: Ճակատագրի կարմիր
լեզու, որով գծագրվում է ճակատի
հորիզոնը: Քարաժայռից կախված
մտքեր, արյուն, հավատամք: Սերը
օազիս է հիշողության անապատներում:

Հիշողության թևերը բարձրացնում են
ճիչերը
անապատի:

Եվ վանդակներ են թափվում թևերից հրեշտակների...



Առանց երազի ես լրկ ստվեր եմ՝
մութ ու անպատուհան:

**Բառեր ընտրելիս՝
չեմ տրորում ոգին նախնական:**

Անունս

ծաղկում է՝ որպես տարածության սկիզբ,
ուր վառվող մոմերից հոսում է հայացքը
Աստծո:



Ցավի խորանում վառում եմ մի մոմ,
արցունքիս լույսն է կաթում տերևին,
հոգեդարձության սահանքների մեջ
փոթորկվում են դեռ կարոտները իմ:
Թախիծն է կառչում կոպերից սիրո,
դեռ ցուցլում է աստղը պատրանքի,
բոցավառվում են մարմնիս հուշերով
խև ասուպները իմ տառապանքի:



Մարդը մի կենտ է:
Սիրո մի հանգույց:
Հավիտենության մի եզր:



Ես վառում եմ լապտերը,
որպեսզի մարդկանց դեմքերից
ընկնեն
շերտերը հուշի:



Իմ ճանապարհը ապաստարան է:



Ես արթնանում եմ
 ծառի բողբոջից
 մինչև տարածության բաբախող դողը:
 Ջարդե՞ք անխնա
 սովորության հին զսպանակները -
 և ձեր Անհունից
 կթափվեն հողի առասպելները...



Երակներիս միջով հոսում է ոգին Անհունի
 և տիեզերքը դառնում է Սիրո շնչառություն:



Խիզախության
 էջ է հոսանքը գետի,
 որի ծալքերում ձկների փայլատակումը
 շարունակությունն է
 ակուններից բխող հորովելների:



Քարերի վրա ծաղկում է շնչառությունը հողի:
 Յուրի լապտերը
 լուսավորում է խորխորատը ցավի:
 Յամբարձվում է ծառը:
 Ցավ, Ցավ, Ցավ:
 Յիշողության վրան
 է այս բառը՝ սեր,

որի մեջ կեղևաթափվում են ծանապարհները:
 Չամբարձվում է ժամանակը:

Քո շուրթերից ընկնող բանն են, հո՛ղն են, դո՛ղն են...

Քո թևերը գգվող եզրագծերն են այգաբացի,
 որոնցից լսվում են
 նվագներ ջութակի:
 Չամբարձվում է երազանքը:



Որոնման կետ է իմ դեմքը:

Ես տեսնում եմ շարժումը
 տիեզերքի: Մոխիր, մոխիր:
 Փոթորկված ծովն իր ավերն է
 շարտում
 իրականության սահմաններից դուրս:
 Ծաղկամանում
 չեն տեղավորվում արմատները
 Երկնքի:

Որոնման կետ է... իմ դեմքը:



Գրիչ: Տեսիլքի դուռ, որով
 մտնում եմ ամեն Աստծո օր
 և հայտնվում խորանում ինքնամաքրման:
 Գրչիս շնչառությամբ
 հաղթահարում եմ անդունդը ճակատագրի:



Քայլերս
օրհներգն են կորած արմատների,
քայլերս չեն կորչում.
հողի մեջ դառնում են
լուսաբացի սերմեր...



Լռության կարկինը չափում է խորհրդոն իմ Գոյության:



Երազներս-
զոհասեղան,
ուր ծնունդ են առնում երկինքները
քարերի:
Չայաստան:
Վանդակում կծկված
անսահմանություն:
Ճեղքված նուռ է պահը,
որից հոսում է ծիածանը
Խղճի:
Ժամանակի փակուղին պայթեցնում է
իմ դեմքը: Մի մրջյուն տանում է
բեղուն պատառիկը անսահմանության:



Որտեղ կյանք կա, այնտեղ մահն է ասպատակում:



Իմ մեջ բաբախում է հորիզոնը ծառի:



Չետքերիս շունչը
նռնենիների ծաղկած զրույցն է,
լրյսը լռության:



Ով նայում է բիբերի մեջ ճանապարհի,
դառնում է խարոյկը Մենակության:



Բառերը տարածությունն են չափում
հակասության:
Անդրնդը լույսի:
Մայրս:
Չուշերիս մեջ կանգնում է տեսիլքի մի համր կերպար,
որ քայքայվում է հարվածից կյանքի:
Իսկ լռությունը ծանրանում է,
ինչպես երկնքի փեշերը՝ անձրևի
բազմաձյուն ներգործությունից:
Անձրևի ճյուղերը ծաղկում են՝
տառապանքի շշուկներ սփռելով
ոտքերիս շուրջ,
ուր ամենագոր Մահն է...
Ծառերի ներկայությամբ ընդգծվում է լռությունը հողի:
Երկնքի լազուրով ընդարձակվում է մենակությունը քարի:
Երազի թևերով սլանում է տարածության հոգին:



Բացակա է... ժամանակը:
Բացակա է... ընթերցողը:
Բացակա է... հիշողությունը:



Պատանդ է ժամանակը հիշողության
որից արյան պես հոսում է ազատությունը ոգու
և ճյուղավորվում
Անհունի հորդաբուխ կանչերի վրա
Զսպաշապիկ է վայրկյանը Երկրի
որից ազատվում են ճանապարհները
Ոտնահետքերից բխում է լուսաբացը
Միֆի



Տողս դարձել է ճակատն հորիզոնի,
որից ընկնում են հետքերը կուռքերի:
Անդրժամանակի կեղևների տակ
արթնանում է լույսը -
ծաղիկը Ոգու:



Հայրս:
Ծաղկանձ ծառեր: Փարթամ
խոտերի մեջ ընկղմված գերեզմանաքարերը
մեղվափեթակներ են:
Ուրվականների քարե ուտերով
տեղաշարժվում է իմ անցյալը:

Լույսի բիրերում
քայքայվում է պատյանը գիշերվա:

Հիշողության ճյուղերում հոսում է
իմ դեմքը: Գիշերը
իմ սև երազն է: Իմ
սպիտակ մահը:



Վիհերի վայրկյաններն են կախվում
գազաթներից:



Բառերից
հորդում է լռությունը
տիեզերական,
որը շրջելով աշխարհից-աշխարհ,
վերադառնում է դեպի նույն
կետը՝
սակայն այլևս գոյություն չունեցող...



Բացակայում է ժամանակը:



Ես առնչվում եմ տիեզերական Ելքին:



Յիշողության լեռներից
կախվել են բները համբույրների:
Անորոշության քամի: Ցրում է
հրեշտակը
արևի վերջին ժպիտները
իմ դեմքի վրա՝
կեղևին հիշողության:



Ես իմ ժամանակն եմ:

3. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

1

Չայացքս ընկնող վարագույր է:

Անսահմանության սյուների վրա
բնավորվում են
հղացումներս:

Դեմքիս ծնունդն է համբուրում օրը:

Կեղևաթափվող աչքերում ժամանակի
բողբոջում է
լույսը...

Ծամում եմ շողը՝ որպես հացի փշրիր:

Երբեմն բռնակն եմ դառնում տարածության,
որով բացվում են
հոգեվիճակները...
Ջրասույզ լինող զանգը հաղորդության
իմ հոգու ձայն է...

Գաղափարի դիակների վրա
նստում է մառախուղը
Անհայտի...

Վերքերի ոռնոց ժամանակից դուրս...

Տառապանքների լապտերի վրա
ստվերս է դաջվել,
որպես հուշաքարին փորագրված ապսպրանք...

Ինձնից կառչում են անդրադարձները ոչնչի...

Կարող եմ ասել,
որ իմ մեջ է դուրսը:
Կարող եմ ասել՝
ինձնից դուրս է ներսը:

Իմ ձեռքերից
կաթկթում է լուսաբանող անդրաշխարհի...

Աստղի դիմագիծը աղավաղում է
երկինքը կայծակի:
Ցավը հաղթահարում է իմ բարձունքները:

Ձկան խայտանք է ալիքը ծովի:

Բացում եմ փեղկերը տողի՝ հառաչում է
հողը:
Անապատների ծարավն է բխում
ընդերքից բառի:

Լույսի ձեռքերով
կառչում է կյանքը ճյուղից Անհունի:

Ես խոսում եմ,
որպեսզի դատարկության շերտերը լցվեն
լռությամբ ծաղկի:
Ես խոսում եմ,
որպեսզի հաղթահարվեն վարքը աշխարհի
և ընթացքը սովորույթի:
Ես խոսում եմ,
որպեսզի հասունանա միտքը Յորիզոնի:

Ճանապարհի ճիչը բախում է դռները անհայտության,
որ (իմ առջև) բացում է... Աստված:

Արժե՞ ազատության վրձնահարվածով նկարել դարի
ստրկամտությունը:

Մոռացության փոշի:

Արյունոտ պատրանքներ:

Դարաշրջանի կոկորդ:

Մթնում է (հետզհետե) հորիզոնը ճակատագրի:

Խոսքը ցանկապատ չէ:

Խոսքի հետ նաև վերածնվում է

դեմքը ժամանակի:

Կյանքի յուրահատուկ հաղթահարման ձեւ է

այս միջակետը.

վիրավոր ոտնահետքս ծածկվում է խավարով

հուշի:

Մոխիրներից շատրվանում է ազատությունը հոգու՝

հատելով սահմանը խղճի:

Չույսի ոտնահետք: Արևի աղոթք: Դողի ճանապարհ:

Անտարբերության պարիսպների տակ

ճչում է շեմը

լույսի...

Սանրում եմ գլխիս մոխիրները շերտ-շերտ

և լսում հառաչանքը

ծիածանի...

Անդունդ: Երազ: Կյանք:

Շողշողում է երջանկությունը
թարթիչներին մահի:

Մտքի սահմանը հատում է
մի երեխա
և մոտենում ցայտադրյալին խաչմերուկի:

Աղավնիներ: Խորհրդանիշներ:
Պատկերամտածողության
հեղաշրջումներ:

Նստարանի վրա
փաթիլվում են շերտերը լռության...

Իմ ձանապարհը ապաստարան է:

Արդեն հասել եմ՝
իմ մեջ է դուրսը:
Հաղթահարել եմ՝
ինձնից դուրս է ներսը...

2

Ինձ առաջ է տանում հավատը:
Իմ երազների կեղևից կաթում է արցունքը
աստղի:

Խղճի անապատներում փոթորկվում են
հավատի հորիզոնները:
Երկինքները փետրավորվում են սյուներին հույսի:
Ես համբուրում եմ երակը հիշողության:
Եղեռնի ձիչերով նժարում եմ վայրկյանները:
Իմ ժամանակը կայծակի շեղք է,

որ հողից հանում է կանչերը երազի
և ճյուղավորում թևերում Անհունի:

Ինձ առաջ է տանում հավատը: Ձայնս
միավորում է բևեռները:

Ճանապարհից բխում է հայացքը պատմության,
ինչպես աղբյուր, որից ծարավի շիթեր է
պոկում հասա-
րակությունը: Ոտքերս ճեղքում են
ժայռերը անորոշության:
Մասիսի ձյուններում փայլվիլոդ
աչքերս
հավատի խորաններ են...

Ինձ առաջ է տանում հավատը:

3

Լույսը ապրում է գագաթների հոգեվարքը...
Այս կյանքը
Ճակատագրի խարխափող ուրվականն է...
Երազի դրոշ,
որ հայրս բացել էր մի օր
դեպի շիկացած անապատները ներշնչանքների...

Ես քայլեցի,
որպես ինքնահաստատման այգաբաց,
լուսավորելով ընդերքը բառարմատների...
Մայրս
հայացքիս մութ խոռոչներում բյուր մոմեր վառեց,
և աղոթքների սյունը բարձրացավ
երկնքից-երկինք...
Իմ դեմքը

լռության շատրվանող
 ոգին է,
 որ ծաղկում է լուսատենչ աչքերով
 և բուրում
 համբույրներով Անհայտի...

4

Ընկնող վարագույրների միջև ծնվում են տողերս
 և կառչում կամուրջներից տեսիլքի,
 որոնցով միաժամանակ անցնում են
 անցյալը, ներկան, ապագան,
 հաղթահարելով կաղապարները անհայտության:

Ինչքան ազատվում եմ հանգերից, ռիթմերից անհարկի,
 այնքան մոտենում եմ ոգուն ազատության:

Պատմության փոշին լցվում է աչքերը ճանապարհի:

Աշխարհի ամեն կետի վրա ազդող հայացքս
 ծակծկվել է զինվորի վերնաշապիկի պես,
 և վառողախանձ անցքերից ելնում են վարդերը
 խաղաղության:
 Երկինքների համբույրից ծնվում է մի երանգ...

Իմ ամեն քայլը ինքնաբախում է...

Քարերը հասցեներ են նորահայտ աղբյուրների...

Հայացքս դռներ է բացահայտում տարածության մեջ
 և որսում ռիթմերը ժամանակի...

Ունայնության
 շերտերի միջև սլացող ճանապարհները

մտահղացումներս են...
Ընկնող վարագույրների միջև ծնվում են
տողերս...

5

Երազի միջով քայլելով՝
ես առնչվում եմ ոգուն բառերի,
որ կայծքար է՝ մութի
շեղբերին բախվող:

Ներդաշնակության սահմանին
բուսել է մի ծառ:

Մի բույն
թռչում է դեպի անսահմանություն:

Արցունքս
լույս է,
որ լուսավորում է խորանը Ցավի:

Երակներիս
միջով անցնում է
զիզանգը
հիշողության,
հայտնաբերելով ծաղիկներն Անհունի:

6

Ճանապարհը,
որով հաղորդվում են
Անհայտի աշխարհները,
իմ գրիչն է,
որի ծայրին կայանում են լույսերը հոգու:
Երազում տեսած ծառի ճյուղերին

տեղադրում եմ մի բույն,
որ իրականության երևացող մասն է...

Ճակատագիրը ջնջոցով մաքրում է հետքերը
հրեշտակների...

Արարելու համար տարածությունն է պետք ...

7

Ես ինձ չեմ հասնում: Անհայտից այն կողմ -
հորիզոնի ճյուղն է:

Տարածության բիբերում բոցկլտում են հույսերը
թափառաշրջիկի:
Հոգուս անկյուններում բուսնում են թաքուն
արևածաղիկներ:

Ես ինձ չեմ հասնում: Հասնում եմ աստղին:

Անհայտից այն կողմ -
երգի անդունդն է,
որի մեջ կաթկթում են արցունքներն Աստծո
և բացահայտում խավարը հղճի:
Ես ինձ չեմ հասնում: Հասնում եմ հույսին:
Ճանապարհը
պառկել է ճյուղերին հորիզոնի
և բողբոջներով համբուրում է
երկրային հույսի գիզագները...

8

Այսօր իմ խոսքը ներշնչանքի փակուղուն է բախվում
և ընթանում դեպի անդունդը հրապարակա-
խոսության: Այնինչ կա մի ծանապարհ,

որով առաջանալով՝ ես հայտնվում եմ
 իմ տեսողության սահմանից այն կողմ...

Ես ինձ չեմ շրջանցում: Ես ինձ հաղթահարում
 եմ արյան կաթիլներով,
 որոնք որոնող աչքերն են
 իմ ճանապարհի:

Ոգու

թելերով առնչվում եմ հասարակության
 կյանքի քառսին՝ բացահայտելով ակունքները
 զգացողության...

Մարդը... Ահա իմ երազը

և դուռը իրականության...

Անհայտը

իմ բառերի հասցեն է, որ ջնջվում է հաճախ

ճառագայթով

ներշնչանքի...

Այսօր իմ խոսքը փակուղուն է բախվում Անհայտի...

Անցնող վայրկյանները քանդակում են

հմայքները

Ապագայի...

Այսօր իմ խոսքը ներշնչանքի փակուղուն է բախվում

և ընթանում դեպի հայացքը

ճանապարհի:

Բառերը հիմա շրջանցում են ինձ

ու իմ լռությունը

և խառնվում կյանքի հարահոս երթին,

ինչպես անցորդներ - կերպարներ անհայտ,

որպեսզի հեռվից կերտեն իմ շրինջը,

իմ ձայնը, վարքը, հաղորդությունը...

Այսօր իմ խոսքը...
 Մկրատով կտրատում են անսահմանությունը
 և ամեն պատահիկը կոչում... բանաստեղծություն:
 Այնինչ Ոգու մասն է ճերմակն առասպելյալ,
 որին թուղթ ենք կոչում:
 Գրիչն այս կողմնացույց է,
 որով կողմնորոշվում են լաբիրինթոսում...

Իրականության բաբախող շերտ է իմ անունը,
 որ հանում են ամեն օր մոխիրներից Ոգու
 և տեղադրում ծառի ճյուղերին,
 բույնի՛ պես:

Այսօր իմ խոսքը բախվում է իրականության պատերին...

Չայացքս,
 գլորվելով իրերի բիբերի վրայով,
 հատում է սահմանը տեսողության:

9
 Ոգու սահմանի վրա
 Արծիվները կտցում են Քիրսի ուսերից
 վեհությունը լույսի
 և սլանում կապույտի հորիզոններում
 Մեռյալ աշխարհի ուրվականներից
 պոկում են
 իրենց թևերը հուժկու
 և ճախրում Ոգու սահմանի վրա


10
 Չայացքս ընկնող վարագույր է
 Անսահմանության սյունների վրա
 բնավորվում են

հղացումներս
Դեմքիս ծնունդն է համբուրում օրը
Երբեմն հայացքն եմ դառնում տարածության
որով հաղորդվում եմ
հոգեվիճակները
Կեղևաթափվող աչքերում ժամանակի
բողբոջում է
լույսը

Արյունս ճանապարհին է իմ
և իմ... Ապագան...



Նկարը՝ Արշիլ Գորկու



Նկարը՝ Համբարձում Բաղդասարյանի

**Ես առաջ եմ գնում անթափանց մութի մեջ
և նշաններ տնկում:**

Օկտավիո Պաս

ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԼՈՒՅՍԸ

1

Երակներին միջով կրակ է հոսում: Նայում եմ,
բայց չեմ տեսնում...սենյակը, պատերը, սե-
ղանը, գրիչը (գրիչը դեռ ինձ պետք չէ):
Ուղեղիս ծալքերում լսվում է մի հեռավոր
թևաբախում: Դա ապրումների երամն է,
որ գալիս է դեպի ներշնչանքի լույսը:
Յեռվում երևում է բանաստեղծության ե-
րազը: Գրվող բանաստեղծությունը նրա-
նից անպայման տարբեր կլինի: Տարբեր
կլինեն նաև բանաստեղծության ապրումներն
այն ապրումներից, որ ստեղծագործելու
պահին ուղեղիս փեթակի դիմաց խառնի-
խումն հավաքվում, մրցում են կատաղորեն,
պայքարում իրար դեմ, երբեմն էլ՝ ոչնչաց-
նում իրար: Նրանցից միայն մեկը կամ
մի քանիսի միասնությունը կկարողանան
մտնել... Մնացածները (որպեսզի չոչն-
չանան) ետ կդառնան դեպի հիշողության
ելակետերը...

2

Խմորվում է նյութը, որպես հրե գունդ, որից
առաջին տողերն են թռչում ճառագայթ-
ների պես: Պայքար կսկսվի բառերի,
գույների և լռությունների միջև... Ուժեղը
դուրս կմղի թույլին, հիմնականը՝ երկ-
րորդականին: Դուրս մղված տողերը
կմնան կախված ձակատագրի թելից:

3

Եթե մի օր համոզվեմ, որ գտել եմ ինձ, որ ես
այս պատկերն եմ, այս տողը, այս նվագը,
դա կլինի իմ սկիզբը և վախճանը միա-
ժամանակ, որովհետև ես իմ...հեռուն եմ,
ես իմ... անսահմանությունն եմ...

4

*Բանաստեղծիս մտահոգությունն է՝ ազատա-
գրել ինձ... իմ իսկ բանտից: Թղթին շնչող
բանաստեղծությունը ազատագրված իմ եսն է
(նաև՝ քո), որ երկար տառապանքներից հետո
գտել է մի նոր գոյավիճակ... Իսկ իրականում՝
նա մի բանտից ազատվելով՝ մտել է մի այլ...
բանտ: Դա բառերի բանտն է: Մինչև
վերջնական ազատագրումը... Իզուր չեն ասում.
բանաստեղծությունն առանց բառերի էլ գոյություն
ունի: Իմ ձգտումն իմ բանտն է: Իմ սերն իմ
բանտն է: Իմ մահն իմ բանտն է:*

5

Ներշնչանքի լույսը... Անհունի թևերն են գուրգուրում
բառերի աչքերը... միտքը... Ծնվում է... Անսահմա-
նությունը: Լռությունը հաղթահարում է ինքն իրեն:
Գալիս է մի պահ, երբ ես կարողանում եմ բարձ-
րանալ ինքս ինձանից: Այդ պահից սկսած՝
ինքս եմ իշխում տարածության վրա... Կարողա-
նում եմ կոտրել սովորույթի ջիթմը, փոփոխել ե-
րանգները լույսի... Կարողանում եմ բառն այնպես
ջնջել, որ թղթին մնում է միայն նրա... հոգին...
Ներշնչանքի լույսը...

ԱՆԱՎԱՐՏ ԵՐԹ

Եղիշե Չարենցին

Վերում՝ մի նոր Անհայտի շեն, վերում՝ կամար:
 Վերում՝ անհուն մորմոքների մի հրվանդան:
 Ես երազի զսպաշապիկն եմ ակամա
 Յագնում: Դեմս՝ Անսահմանի հրե վանդակ:

Դեմս՝ կրքի հովազներն են դեռ հոշոտում
 Երկնի կապույտն ու ժապավենն առեղծվածի,
 Իմ ստվերը քառսի տաք հետքը հատում,
 Սարսռում է՝ որպես զարթնող Անհունի ծիր:

Իսկ հետքերի վրայով իմ ճանապարհի
 Գլորվում է իմ արյունը վերևից վար,
 Եվ որտեղ որ կանգ է առնում՝ իմ անցյալի
 Նշխարներն են դառնում ավար:

Եվ որտեղ որ կանգ է առնում՝ անապատի
 Սողուններն են իմ ետևից բարձրանում վեր.-
 Փլուզվում է սահանքներում ձակատագրի
 Յորիզոնը՝ իմ տենչերի դռնակն ավեր:

Ժամանակի տիտանային մամլիչի տակ
 Իմ արցունքն է դառնում ահա երազի վիհ,-
 Մինչ մղվում եմ ես դեպի վեր՝
 Ընկնող մի թագ
 Արյան մեջ է ուրվագծում
 Պատկերը իմ...

ՀՈԳԵՎԱՐՔ

Գործարանի ծուխը՝
 իմ և բնության միջև ձգվող
 հո-գե-վարք,
 որի մրուրն է նստում թախծի պատերին,
 հին անունների լուսամուտներին
 և...
 մարմնից զատված հոգիների վրա...
 Ջրհորդանից ընկնող կաթիլները
 տանում են մրջյունների դիակներ.-
 օ, Աստծո պատռված վերքերից
 կաթկթող արյունն է դա,
 որ անցնում է՝
 բացելով կյանքի նշաններ
 երազներիս խավար անապատում:
 Ես ինձ չեմ հիշում.-
 ծառի կեղևի տակ մոխրանում են
 վաղվա երկինքները,
 արյունս կորցրել է իր երբեմնի ուժը,
 մոռացել իր գույնը,
 աղբյուրի ձայնը
 ծածկվում է հետզհետե
 թանգարանային խորունկ լռությամբ,
մի երեխա փախ-չում է իր մոխ-րա-ցող ստվերից,
փո-ղո-ցը
ա-սես օ-րո-րոց լի-նի՝
շըր-ջը-ված հու-շե-րի դա-տար-կու-թյան վը-րա...

ՊԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

1
 Փողոցներում քո
 պտտվում են աշխարհի ամենածանր
 անիվները,
 որոնց տակ փետրահան է լինում
 ժամանակը...

Իմ մանկության ճանապարհների
 երակներն են պայթում,
 և օրորոցներ են լողում արյան ծովի վրա...

Յողը
 ծվեն առ ծվեն
 ներթափանցել է
 մեռյալների թափառիկ էության մեջ,
 որ չսրբապղծվեն հիշատակները նրանց:

Քաղաք իմ,
 ճակատագիրը այս պատուհանն է
 թողել միայն՝
 քեզ տեսնելու համար...

.....

Դիմացի շենքում
 մի մարդ
 անհանգիստ
 հանգրեց լույսը՝
 մարելով իր հոգու երևացող
 թիրախը...

2

Ահա սենյակս: Նայողը կկարծի,
թե ես քայլում եմ: Մինչդեռ իրականում՝
ես ներքաշում եմ իմ մեջ քայլերս...

Խոհերս կտրտվում են՝
հասնելով սենյակի անկյունագծին,
և ընկնելով հանկարծ հատակի վրա՝
շարունակում են բնագործ շարժվել,
ինչպես... մողեսի պոչը կտրված...
(Ինձնից խլված է հիշողությունս...):

Քնած երեխայի
մաշկի վրայով
վազվզում են ահա
կիսատ-պռատ խաղեր: Մահձակալից կախված
նրա փոքրիկ ձեռքը
հանգստանում է ժամանակից դուրս...
(Ինձնից խլված է հանգստությունս...):
Վաղուց, շատ վաղուց չի այցելում ինձ
մենակությունը. գուցե սպանվել է
երկաթե շքերթների մամլիչների տակ:
Երակներս ի վեր չի բարձրանում վաղուց
իմ տխրությունը: Սպիտակել եմ ես
այս պատերի չափ: Ավելին: Կոշիկներս
ինձնից ազատվել են: Ես եմ, որ
ազատ չեմ: Նայում եմ
պատշգամբից-
ինձնից տարանջատված լուռ փողոցներին,
որ արնաքամվրդ երակներ են կարծես...
Դռան զանգը: Ահա: Միակ իմ այցելուն,
որ մտնում է միշտ տուն,
ինչպես ինքնաձիգի չպարպված մի փող...
(Ես խղճում եմ իմ մեջ երբեմնի տանտիրոջը):

ՅՐԵՇՏԱԿ

**Վաղամեռիկ ընկերոջս՝
բանաստեղծ Միքայել Գասպարյանին**

...քեզ շրջապատող
զրուցասեր իրերը
աշխարհիկ կյանքի խորհրդանիշներ էին միայն,
փոթորկից հետո ափ շարտված նավի բեկորներ՝
ավազների վրա պատրանքների բոցերը լիզող...
Ի՞նչ ուժ էր ձգում քեզ դեպի զրուցակիցդ.
շուրթերիդ վրա հանկարծակի զգացած բառերի
համը, բու՞յրը,... Դու... համառորեն խուսափում
էիր «մահ» բառը գործածելուց և պահում էիր
նրան քեզանից որոշակի հեռավորության վրա:
Սակայն հեռավորությունը
(ես դա զգում էի իմ մաշկով)
անընդհատ կրճատվում էր,
կրճատվում էր ապրելու, կարոտելու, ստեղծելու
տարածությունը, և դա ավելի էր անհանգստացնում
քեզ, մղում վայելելու խարխլված կյանքիդ վեր-
ջին տրոփները, զգալու լույսի վերջին խուտուտները,
*գրելու վերջին տողը, խմելու վերջին բաժակ ջուրը...
վերջին... վերջին... վերջին...*
Սակայն վերջը... չկա՛...
Տանջանքն անսահման է...
Երազն անսահման է...
Մահը՝ անսահման...
Ահա դու. դողդողացող ձեռքերով գրկած Մենակու-
թյան սառը ուսերը՝ երազներիդ ջերմությամբ, քո ցավե-

րով, հույսով ներծծվում ես նրա անհագ մարմնի մեջ
և չի՛ լցվում այդ մարմինը, ինչպես քարանձավը՝
հողի միջով ներծծված անձրևի կաթիլներով, չի՛
լցվում, բայց խաղաղեցնում ու հանգստացնում է քեզ...

Դու դեռ շարունակու՞մ ես
ինձ լսել, օ, դու հեռավոր իմ ընկեր,
դու դեռ շարունակու՞մ ես լինել...:

Թվում է, թե անշարժ են շուրթերիդ բառերը,
չեն հաղորդակցվում իրար հետ, ինչպես գերեզմանոցի
հիշատակի քարեր: Եվ երբ շուրթերիդ վրա լույսի պես
սփռվում է հրեշտակի հայացքը-բառերը կենդանա-
նում են և նկատվում են բառերի վրա փոքրիկ սպի-
ներ, որոնք, հավանաբար, առաջացել էին դեռևս
այն ժամանակ, երբ ձակատագիրը դանակի թեթև
շարժումով կտրել է
կյանքիդ թելը,
չդիպչելով
միայն...
քո... Յոգոն:

* * *

Չամոզված եմ, որ
նորածինների ուսերն էլ, Տեր իմ,
չեն ազատվելու ուտայնից ոխի:
Մասիսի ձյունը նրանց ձակատի
բիծը կմաքրի:

* * *

Կյանքի և մահի արանքում չկա
կարծես թե միջնորմ,
մահը հատակ է՝ տառապանքների
մեխերով պատված,-
մտիր. երագիդ երկինքն այսուհետ
տանիք է մի նոր,
հավատդ լույս է, ընթացքդ՝ մեղքով
միշտ անապատված...

* * *

Լուսաբացի ներշնչանքի տիրույթի մեջ,
ուր վայրկյանը հրե ցատկ է խոլ հովազի,
ուր իմ իղձն է հիշողության լույսին հենվում,-
ծխում եմ ես ավերակներն իմ երագի,
և իմ ամեն տողից ցավի ծոփս է ելնում...

ՔԱՆՍ ԵՎ ԼՈՒՅՍ

Թաց փողոցներից չքացել են կարծես
փոշու նստակյաց ժամանակները.
օրորվում են փոշուց խեղդված ոգիները

ջրափոսերում:

Թփրտում է խոտը:

Կյանքի խաչմերուկում

կծկվել է հոգսը`

որպես խոշտանգվածի

աչքերից կաթած

խավարած արյուն:

ժամանակի ոգին`

մեղքի վարագույր,

որով ծածկվում է քայլերիս անդունդը:

Եղերական սպունգներում`

Անհունի ճիչ:

Նախնիներիս ձայնի սկավառակի վրա

պտտվում է իմ հիշողությունը,

երազներով լցնում

ոտնահետքերիս սրբարանները...

ՀԱՏՎՈՂ ԳԾԵՐ***Լևոն Անանյանին***

Լեռնագագաթների բռնկուն լույսն է
շարժվում մանկության ակնախոռոչում...

Լռությունն իր ձայնից անընդհատ տաշվում է
թղթերիս ձերմակ հարթության վրա:

Տեսողության բոյնն է սլանում քառսի փրփուրների վրա...

Արձագանքներս բեռնակիրներ են:
Իմ պապն ու տատը արթնանում են իմ մեջ,
որպես զրույցների եղեմային երկիր:

Առասպելից պոկված վայրկյաններն են նստում տանիքների վրա...

Լույսի և մութի տարածքների միջև հոգեվարորդ
ճակատագիրն է...

Այնտեղ պարզությունն է մեռնում դիմակների որոգայթի մեջ...

Եվ գերության փառը պատռող մանկան ձիջ է
լեռնագագաթների բռնկուն լույսը...

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Փողոցում, ուր շոգն արդեն հասցրել էր լցվել բոլոր ձեղքերը, չանտեսելով անգամ խոնավ մրջնանոցները, որ փոքրիկ թագավորություններ են. ուր ծաղիկներից անջատված զգլխիչ բուրմունքները անցորդներին մի պահ հանելով հոգսերի ցանցից, նրանց մեջ կարծես վերաթարմացրել են Անսահմանության զգացողությունը, հանկարծ լսվեցին մի քանի կրակոցներ, որոնք ավելի հիվանդագին ներգործեցին ծառերի, օղի, շոգի ու ստվերների վրա, քան... անցորդների, որ փաթաթված իրենց հոգսերի մեջ, զլացան անգամ մի պահ կանգ առնել՝ ի նշան հարգանքի հեռվում մեռնողի...

Օ՛, մահ, դու դեռ չե՞ս ընկել ինքդ քո աչքից...

Կար ժամանակ, երբ քո այցը համարվում էր օրինյալ... Անցել են քո դրական հատկանիշները...

Խորթ ու անբնական, նողկալի ու ստոր...

Բնության օրենքներից արտաքսված ճիվաղ: Երբևէ դու քեզ տեսել ես այսքան խղճուկ-մատնված սոսկալի անտարբերության...

* * *

Հիշողության անապատի միջով
քայլում է մեկը.-
այդ ես՝ եմ Ջրհեղեղից հետո...

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ

1

Ժամանակի մաշկը՝ կորուստների քարտեզ,
 Ուր նշվում են բոլոր անկումներս հերթով,
 Պատուհան է բառը ոգուս համար անտես,
 Լուսանում է հողը իմ աստղային երթով,-
 Քարը մաշկիս նման սարսռում է ցավից,
 Շունչս երկինք է, թե երազների ճակատ,
 Որ զատվում է մութից և կրքերից դավի,-
 Տարածքների միջև տողի լրյսն եմ փրկված...

2

*Մանկությունս աստղասլաց մի բարդի էր,
 Արցունքներս՝ ձռվողյունով լցված բներ,
 Որոնք սահում հևոցի մեջ ծանապարհի,
 Տենչում էին Անհունի մերկ աստղը բռնել:
 Քրքջում էր անապատը իմ երթի մեջ,
 (Օ՛, արյանս անապատը չի նվազի),
 Տոն օրերի զսպանակված շքերթի մեջ
 Խեղդվում էին հայելիներն իմ երազի:*

3

Մենախոսությամբ հագեցած օրեր,
 Դեղնում եք մայթին տերևների պես,
 Ձեր ավյունը, չէ, հզուր չի կորել-
 Բանտերի օդն է ձեր շնչից եփվել,
 Յետո հորդացել նման հեղեղի,
 Երկիրն այս հանել զսպաշապիկից,
 Դռների միջև փլվող երգերի
 Ճոճվում է հոգին-հար անկարեկից:

Գևորգ Էմինին

4

Մայր բնության ամեն շնչող մասնիկ ու տարր
 Իրենց գոյության կերպն են որոնում
 Քո մեջ, որտեղ ինչքան երազների վթար,
 Ինչքան ծնունդ ու մահեր են լինում-
 Ողջը մոխրանում է, փաթիլ-փաթիլ իջնում
 Անորոշության վիհերի վրա,-
 Մասիսն հավերժության մութ բծերն է ջնջում.-
 Յոգիդ սուրացող գագաթն է նրա:

5

Դաշտ են դուրս եկել՝ ոմանք պատկերի
 Վահանիկներով, ոմանք՝ անվահան,
 Քառատրոփը խեղճ դարձվածքների
 Փոշով է լցնում գիրք ու բառարան:
 Ինչքան երազներ՝ արևին կապկող,
 Մտքի խորխորատ ու տենչի ական,-
 Այդ խոյանքներում կամ օղակ կապող-
 Անհասությո՞ւնն է տիեզերական:

6

*Օ՛, երազի հոգեվարք... Յրմշտոցում երթերի
 Ինչքան ցավեր են կծկել իլիկով խն ոտքերիս,-
 Յիմա ինչպե՞ս ես նայեմ երազի կոնյր բիբերին,
 Երբ միջնադարն է հառնում ժամանակի վիհերից:
 Փակիր կոպերս՝ թեկնիզ հառաչանքով զոհերի,
 Որ իմ հոգին չհամբարձվի՝ որպես խղճի պատարագ,-
 Վերք տուր, միայն չնայեմ երազի կոնյր բիբերին,
 Երբ միջնադարն է հառնում ժամանակի վիհերից:*

7

Ազգահավաք կանչ ես ու շունչ աստվածային,
 Քո կանչի մեջ Յայկն է իր աղեղը լարում,
 Ցորեն հասկի հուրն է ոգու կատարներին.-
 Պողպատի և հողի սրբազնագրյն այրում...
 Արցախ, դո՛ւ ես սերը և խորհուրդը լույսի,
 Քո մեջ արարումն է ապրում որպես Աստված,
 Դու ծաղկունքի օրրան. դու շյուղերով հույսի
 Փայփայրում ես սուրն ու անդաստանդ փրկված:

8

Խրամատը՝ հայոց երազանքի Տապան,
 Որ փրկում է մահից, նաև վերածնում,
 Շունչ է տալիս հողին, երգին՝ մի նոր ծնունդ,
 Խրամատը՝ հայոց երազանքի Տապան:
 Յսկիր անդունդներին, հսկիր ջրին, ապա
 Տնւր քո երկրին, զինվոր, խղճիդ խնդությունը,-
 Խրամատը՝ հայոց երազանքի Տապան,
 Որ փրկում է մահից, նաև վերածնում:

9

Իմ երդումների արյան դրոշն է
 Փողփողում լույսի սառը կատարին,
 Երազն իմ տողով մագլցում է վեր,
 Ասքեր են ելնում ցավի անտառից...
 Երկիր իմ սիրո, լուսավոր կամքի,
 Քո բիբլիական դեմքն եմ փայփայում
 Տողերիս ակում, գրերում վանքի,-
 Դեպի վեր... խղճիս խանչն է բարձրանում...

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ես իմ խոհերով կեղևապատ եմ:

Իմ աչքերի մեջ, իմ աչքերից դուրս
փռված է դարձյալ անշունչ, անկենդան
մարդկային խղճի նոյն անապատը:

Մեղքը կարմիր է
ու նաև սև է:

*Առաջին բանտը շուրթերն ունեցան.
այնտեղ հանգչում են խոսքի աճյուններ՝
պատված ապրումի ոսկրափոշով:*

Կործանումների շերտերից վերև՝
օրորվում է իմ հիշողությունը,
որպես նորօրյա մի Նոյյան տապան:

Հոգին բառի մեջ:
Հոգին բառից դուրս:

Ինչքան կտևի
իմ և քո միջև արարվող խոսքը:

Երգն այս շուրթերիս՝
ես կհեռանամ այս մեղկ աշխարհից,
և իմ Երազի հետքը կծածկվի
մի հազարամյա լռության շերտով,
ուր անցորդի պես կանգ կառնի
օրը
(հանուն մի վերին հաղորդակցությամբ)...

Մտեք դուք օրվա
միջով, թռչուններ,
այլ տեղ մի փնտրեք
շեմն Անսահմանի...

ԲԱՌԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Բառի բարձունքներում մրսում-կծկվում է հոգիս,
 ներքևից բարձրացող մառախուղը
 ուրվականներ ու խաչեր է բերում,
 արցունքի ոսկորներից կաթկթող լույս
 և մոխիր, մոխիր, մոխիր...
 Այլայլված երազներս է բերում,
 հայացքների կախաղաններ, որոնց շուրջը
 հույսերի քառսն է եռում,
 շուրթերի բանտախցեր,
 ուր ոռնացող ցավն իր աչքերն է կորցրել-
 և խարխափողը`
 Ես եմ...
 Ամեն օր
 մահիս միջով
 դեպի քո շնչառությունն եմ գալիս...
 Ինչպե՞ս հասնեմ հոգուդ աստղին,
 որ մահս մնա
 իմ ետևում...
 Ինչո՞վ ծածկեմ, Բան, կեղևդ աստվածային,
 իմ հայացքո՞վ,
 դեմքո՞վ,
 թե՞... իմ ճակատագրով,
 որ արյան մառախուղը չներծծվի
 հանկարծ
 կեղևից ներս,
 չդարձնի քեզ քարայր,
 իսկ ինձ` արցունքի ոսկորներից կաթկթող լույս...
 Ապագայի տանջանքներս են օրորվում
 Անհունի կամուրջների վրա...

* * *

Անդեմ լռության պտտահողմի մեջ
հիշողությունն իր աչքերն է թարթում.
մեր ազնվական պատկերը արթուն
կայծակող սրի շեղբին զուգընթաց՝
վերսկսում է երազների վեժն
անդեմ լռության պտտահողմի մեջ:

Տափաստանների հողմերը անթամբ
հորիզոնների վահանին զարկվում
ու փշրվում են, մաղվում անընդհատ,
որպես խոլ տենդի մի սև բռնկում,
ու բեկորի պես կծկվում են վերքում
տափաստանների հողմերը անթամբ:

Կարծես մարտադաշտ-սպունգն է հոգնում
բախումից արյան ու մղձավանջի,
մեր բազուկն Չայկի շառափն է գտնում
հոլովույթի մեջ «Սկիզբ ու Վերջի»,
որ վերսկսում է երազների վեժն
անդեմ լռության պտտահողմի մեջ:

ՊԱՏԳԱՄ

Հաղթահարումն է սերը երկրի...

Պատմության երազի միջով ձգվող մարդկային հոսքը լույսի ծվեններ էր պոկում Անհայտի հորիզոնից:

Չկար մի ձեռք, որ կանգնեցներ տառապանքի ընթացքը և ժողովրդին տաներ Ոգու ցերեկների միջով:

Հայր երազանք, որի մեջ ցորենի դեղին երկինքն էր խշշում՝ հատիկ առ հատիկ թռչելով ձյունաթագ Մասիսի երակներն ի վեր:

Նահապետ լեռան ոտքերի տակ արյան տեղ մի օր բախտն է ծովանալու:

Այս միտքն է դառնում օրհներգ մանկան քայլերում, կայծակի պես անցնում լեռների գագաթների վրայով, վառելով հավատի ջահերը:

Եթե մենք այսօր հաղթում ենք Արցախում, միաժամանակ հաղթում ենք և Անիի պարիսպների տակ:

Պատմության կոպերը բացվել են... և փայլող բիբերից այգաբանցն է հոսում բիբլիական հողի վրայով... Վերցրո՞ւ հղացումների մի ծվեն և շարունակիր ճանապարհդ: Բաց արա դուռը օրվա. ներսից ոչ թե մահը, այլ քո իսկ երազանքն է փարվելու քեզ, Հայ:

Խեղճությունդ, որ ստվերի պես քարշ էր գալիս քո ետևից դարեր ի վեր, կոխկրտիր ոտքերիդ տակ, խրամատներում, պարտված թշնամուդ բիբերի վրա...

Լինել, լինել, լինել...

Մի զգացում, որով ազատության աստղային ժամին է սպասում բիբլիական մի Ազգ:

Մի զգացում, որ օջախի ծովն է դառնում, մանկան օրորոց, պատմության մղջավանջից դուրս գալու Ելք...

Պարզիր քո ձեռքը, Հայ, և այն կդառնա Ապագայի հանգրվան:

ՆՈԱՆ ԿԵՂԵՎ

Իմ մահից հետո
լույսը կքերի խավարի կողերը,
ստվերը ստվեր կփնտրի
ստվերի մեջ:

Իսկ իմ ստվերը կխտանա հեռվում,
որպես նռան կեղև:
Ես իմ Երազը կգտնեմ
հղացումներիս դարպասների մոտ:
Վարդը՝
տարածության առինքնող հպում:


Ես չեմ ծածկվի մոռացության շերտերով:
Ինձ ծածկող ամենամոտիկ շերտը կլինի
քո վերջին համբույրը:
Աստված կլինի ինձ այնքան մոտիկ:

Ելքը կմոտենա ինձ
իբրև ծաղկավաճառ,
կակնարկի՝ որ գնեմ իր համբույրներից
մեկը.-
և կշարտեմ նրա դեմքին այն պատրանքները,
որ ես ստացել էի այս երկրից՝
իմ ավյունի՞ դիմաց:
(Արյուն, թախիծ, երազ):

Հիշողության մի դուռ կմնա միշտ բաց.
դա իմ մանկությունն է:
Բոլոր փակված դռներից
կհավաքի
Աստված

իմ կապանքները,
որ չսարսափեն
դեռ նոր աշխարհ մտնող
երազողները...
Ես կլինեմ գոհ:

Ստվերը ստվեր կփնտրի
ստվերի մեջ:
Իսկ իմ ստվերը կխտանան հեռվում,
որպես նռան կեղև:



ՃԱԿԱՏԱԳՐԻ ՔԱՌՍԻ ՄԵՋ***Էդվարդ Գոլսեփյանի հիշատակին***

1

Գյուղի ճանապարհը
 ընկել խաչի նման
 և տրորվում է ստվերների պայտերի տակ:
 Պահը սարսռում է:
 Կանաչների վրա
 անշարժացած ափդ՝
 մորթված եղնիկի երազկոտ հայացք...

Ժամանակը-
 թոնիր,
 որից անզոր ենք մեր հանցը հանել,
 քանզի մեր աչքերը լիքն են արցունքներով:
 Ո՞ւր է Հավատը:
 Նետ,
 որ սլանում է դեռ խղճի գիշերներում:

2

Գյուղի ճանապարհը
 ընկել խաչի նման
 և տրորվում է ստվերների պայտերի տակ:
 Օ, Պահն այս
 կառանձնանա միշտ էլ
 իր կարմիրով,
 ինչպես աքլորի
 խոտերից վեր շարժվող կատար:

Կոկորդում՝ ճիչ:
Անէության միջով
նշաններ հոսող:
Մի դուռ,
որ բացել է գերեզմանիդ փոսը
երկնքի մեջ-
պոկելով նրանից
հասակիդ չափ
մի կտոր
պատանք...
Գերեզմանդ նավ է,
որ լողում է հիմա
ձակատագրի անհուն քառսի մեջ...

* * *

Ծովն իր ափերը սուզեց
հատակից-հատակ:
Ես
կառչելու մի բան փնտրեցի.-
բառը-Նոյյան տապան:

ԵՍ ԻՆՁ ՀԻՇՈՒՄ ԵՄ

Ես ինձ հիշում եմ,
 որ իմ աչքերի դատարկությունը
 չօրորվի կյանքի ճանապարհներին
 կախաղանի պես:
 Ինձ կլանում է հուշը սպունգի նման:
 Իր շեղբով հայացքս զատվում
 մաշված ու քամված ժամանակներից,
 շնչում է ազատ: Այդպես զատվում է
 կտավին ներկը
 իրեն կերպարանք տվող վրձինից:

Ես գնում եմ: Ձայնիս
 արձագանքը հեռվից
 հարվածում է ինձ,
 և հույսերս տափակում են հոգուս պատերին,
 որպես... բրածո մի աշխարհ:

Յետքերիս ճիչը
 բանտարկյալի նման
 խցից-խուց է տարվում,
 և չի սպառվում առասպելական
 պաշարները նրա:

Ճանապարհս կարծես...
 լինի խեղդվող երազ...
 Նարնջագույն օդում
 իմ խոհերի օղակները մեկմեկու զոդում
 (թեև խարտվելով՝ մաշվում է անվերջ),
 Անհայտի հետ էլի իր զրոյցն է սկսում
 ստվերս կայծքարե...

ԼՌՈՒԹՅՈՒՆՍ

Լռությունս թե դառնա բարձ`
 իմ ցավերի փետուրները զսպած իր մեջ-
 ես կնիրհեմ ծնկան վրա
 այս գիշերվա
 ու... կլսեմ շնչառությունն Անսահմանի:

Մորս նման քունս հսկող ժամանակը
 Անսահմանի շնչառության վերելակով
 կբարձրանա

դեպի անհաս կամարները
 երազներիս,

կսահի վար`

դեպի վշտիս հատակը խուլ,
 ուր դարերի մեղքն է դարսվել
 իրար վրա
 և... մխում է...

Եղերական ծխից հանկարծ
 թե կանգ առնի
 վերելակը-

տազնապահար փետուրներով
 կլցվի իմ քունը կիսատ,

ես կարթնանամ-

և շուրթերիս անդունդը խոր
 կծածկվի...
 լույսի խավար
 արցունքներով...

* * *

Հայացքս՝
հղկվող մի հուշաբեկոր,
որ ինձնից անկախ իջնում է
հողին,
բացում խորհրդողջ անսահմանության:
Ծառի ստվերը
խտանում է իմ շնչառության մեջ
հուղարկավորի տխրության նման
և անդրադառնում հեռվում նշմարվող
պարսպի վրա:
Շենքեր՝ լվացքի
պարանով իրար հետ հաղորդակցվող:
Պատռոտված,
խոցված
մտքերս կախեմ ես այդ պարանից,
որ մաղվեն ցավիս մոխիրները տաք
ճակատագրի ստվերի վրա:
Ճակատագրի ստվերի վրա պառկեմ ես մի քիչ
ու հանգստանամ.
հետո ճանապարհ ընկնեմ.
օրը դեռ
նոր է բարձրանում...

* * *

Ես հասա այստեղ: Օրը բարձրանում էր:
Շուրթերիս լռում էր Աստված մի բարի:
Իսկ երակիս մեջ անվերջ ծանրանում էր
Հիշատակի նժար երեսուն տարիս:

Ու ցեղիս արյան փոշոտ քարավանը
Անցնում էր անել լաբիրինթոսով ցավի.
Նրա ետևից քարշ էր գալիս ծանրը
Երազների վթար երեսուն տարիս:

Քանիչ էր գալիս: Եվ... տարածքներում անօդ
Ջոհասեղան էր լռությունը բառի,
Ուր խոցոտվում էր եղերական ձայնով
Կորուստների նժար երեսուն տարիս:

Բախտի դարպասները (չհասա նրանց)
Ճռնչում են դեռ խորքում ավազների,-
Կրկին ինձ է փնտրում - իրանս տանջված...
Իր պատյանը լքած երեսուն տարիս:

* * *

Անցորդի պես
շուրթերիս փողոցով անցավ
մի անծանոթ բառ.
չհասցրի անգամ իմանալ անունը՝
երբ մութը ընկավ:
Եվ սառցապատվեց
իմ և Անհայտի միջև ձգվող
հաղորդությունը:
Յեռվից կանչում է ինձ
հույսի լապտերը:

* * *

Երբ սեղմում եմ իմ բռան մեջ
Արցախի հողը
տաք,
կարծրանում է բառը,
ինչպես...
զրահ...

* * *

Տերևները
 Աստծո համբույրների նման
 ծածկում են անտեր սպիները
 օրվա,
 և խրամատից բուսած հառաչանքը
 խոնավ
 գլորվում է՝
 իբրև մայրական արցունք
 անհայտ Երազողի շիրմաթմբի վրա...

* * *

Եվ ոգին է տափակում ամենօրյա դիպվածի,
 շունչն է հատվում երգերի, և տապանաքար է դառնում
 քո շրթունքը, Երազող, երբ այն պարզում ես լույսի
 խայտանքներին ընդառաջ,- միտքն է դարձյալ գլխատվում
 շեղբով հոսող Ավագի,
 որ խորհրդանիշ չէ միայն
 դատարկության կամ վախի.
 նա պատվանդանն է անհայտ
 ժամանակի: Բայց ճամփաս
 հույս է կծկում ու երազ
 հատու քայլով զինվորի.
 և պատուհանն է բացվում,
 ուր իմ մահն է բացակա.-
 վերքիս ճրագն են մարում...
 արցունքները աղջկա...

Կարեկրն

Պե՛տքիս լուսարեանը
 ջրբուսակ և կարճեա
 որչա՛ս շեղեցում:
 Վե՛րսակներն են կնճած
 արցունքներդ հոսչի:
 Ժամանակը նսրացում և
 կորացի կարծիք չպահանջեցում...
 Դո՛ւք արջազենի և
 հրշոջարջան շուռք...
 Միայն թի շեղի
 ջարսաթարջան շարժն և:
 Չես ջիւժ համբախում և նրա ծանրանկար
 հրշոջարջանը
 կանգի ճայտեցիք
 և կարծում այունք ջրայջանքներ,
 որպէս լայնելը:
 (Ես կարջազարի օրն և անպատճա՛ր):
 Որչա՛ս բառելը
 հրշաջակի խառնել...
 Ես փայում եմ նրա կանաչ ու
 կարծիք հեղեցում,
 և խառնելիք համբախում եմ համբույրները:
 ջրբուսակի:

Ռ. Կառլյան 7.12.2014ր.

«Նարեկին» բանաստեղծության ինքնագիրը

* * *

Դ՛ն Ես
 վառում
 ծրագր
 իմ երագի: Ցանկապատի վրա
 մի կարոտ է թռչկոտում՝
 դանդաղ բացելով
 հայացքը հուշի: Դ՛ն Ես
 փայփայում
 դեմքիս
 ավյունը՝
 մաս-մաս ըմպելով թարթիչներով
 սիրո,
 դու Ես հիշողության ծովի ամենահորդ
 ալիքը
 և տոչոր ափը իմ հավատի,
 դու Ես
 մատներիս ծայրերին բաբախող ոգին
 և մանրահատիկ ավազները
 հուշի...
 Ես քայլում եմ դեպի ափերը իմ երագի՝
 մաս-մաս ներծծվելով
 կեղևի մեջ
 Ոգու:
 Դ՛ն Ես անդրադարձնում տարերքն իմ
 իրական,
 դու՝
 հիշողության ափը
 և ծովի ոգին:

ՌԵՔՎԻԵՄ

***Քանդակագործ, Արցախյան գոյապայքարի նվիրյալ
Արմեն Հակոբյանի հիշատակին***

Ստրկահաճ գնդակը այդպես էլ չգտավ
 քո աստվածընծա կաղապարի մեջ
 քեզ: Նա ուշացել էր: Դու արդեն
 ճախրում էիր հրեշտակի թևերի մեջ,
 որպես հիշատակի երկինք,
 Շուշիի ավերակների մոխիրները
 փռելով Հավիտենության այն դատարկ
 անցքերում, ուր Խղճի հալածված ուրվականն է
 թաքնվել: Աստված
 ծածկեց իր դեմքը՝ տեսնելով
 քեզ, քո երակները.
 «Գեղեցկության այսքան
 շտեմարաններ՝ դեռ չսպառած,
 ղվ է, որ երկինք է ճամփել:
 Միթե՞ երկրի վրա իմ անդրադարձը,
 որ լույսի ստինքն է, դողն ու ավիշը,
 ավելի զորեղ չէ,
 քան... Մահը,
 որ դիմակների կատաղի հռհռոցով
 ուզում է իմ Պաշտամունքը խլացնել
 կախաղաններին ճոճվող մահկանացուների
 շուրթերի վրա:
 Եվ եթե ես եղել եմ,
 ու համարում եք, որ այլևս-
 չկամ,

ապա ով ինչո՞վ է լցնելու
 իմ դատարկ տեղը,-
 եթե պատանդ է երկրում և սրբազան Ջավատը»:
 Աստված ծածկեց իր դեմքը՝
 տեսնելով քեզ,
 քո երակները՝
 գեղեցկության չսպառված շտեմարաններով,
 քո աչքերը՝
 Ճշմարտության անխնա ծեծված սալեր:
 Դու-թևերը բաց հրեշտակի պես-
 մնացիր կախված
 Արդարության անդունդի վրա,
 որից դարեր ի վեր տառապյալների
 հառա՛չն է ելնում
 մարդկային ճակատագրերին ընդառաջ:

* * *

Տեսնես Ոգու ռ՞ր աստիճաններից
 ընկած երազի կորուստն է սգում
 բառս
 ցավակիր,
 որ արցունք ունի
 կորիզի՞ նման.
 պայթում է հողի խուլ շերտերի մեջ
 ու ելնում՝ որպես ընձյուղը հույսի...

* * *

Ես դեպի տուն եմ գնում: Քայլերս
չեն բեկում սովորության շրջագիծը.
Կարծես լրացնող մասնիկներն են նրա:
Մտքիս մեջ գիշերում է առեղծվածը:
Մի հրեշտակ հուշերիս լապտերով
շրջում է իմ էության մեջ՝
ինձնից թաքուն
փակելով ինքնատարման ամեն մի
փեղկ: Ես միացած եմ տան լռությանը՝
որպես դուռ,
և միացման կետը չի՛ գտնում անգամ
ճակատագիրը...

ՃԵՐՄԱԿ ԵՐԳ


Աչքերիս մեջ ձյունի՜ր,
ձերմակ երազի թև,
որ ես ելնեմ վերև
խավարացող հունից,
ելնեմ որպես ծաղիկ՝
ճառագայթից բռնած,
որպես կարոտի շրճ,
պատուհանի բռնակ,
ելնեմ, ելնեմ, ելնեմ-
դառնամ օջախի ծուխ՝
կապույտի մեջ հալվող,
լսեմ դռան ճռի՛նչ՝
կարոտներս առնող...
Աչքերիս մեջ ձյունի՜ր
ձերմակ երազի թև,
թեթև, թեթև, թեթև...:



Նկարը՝ Արշիլ Գորկու

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

**ԲԱՌԸ ԴԱՐՁՆԵԼ ՈԳԻ ՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ
ԵՎ ՆՐԱՆՈՎ
ՍՐԲԱԳՈՐԾԵԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՅԸ**



Ոգեղեն արժեքներ ստեղծողին հետամուտ ներքին անհանգստության հենքում ժամանակի սրբագրումներին հասու լինելու ձգտումն է, որն էլ ստիպում է փորձել առաջ ընկնել նույնիսկ իրեն ոչ տեսանելի ժամանակի



արարից ու ներկայացնել սեփական գնահատականը: Գուցես դրանով արվեստագետը փորձում է ինչ-որ տեղ իր ստեղծագործության ճակատագիրը նախանշել՝ դառնալով ժամանակի հուշարարը:

-Պարոն Եսայան, ժամանակը արագընթաց է, շուտով այս դարի առաջին տասնամյակը պատմությանը հանձնենք: Անցած հարյուրամյակը գրականության իր փուլն ավարտեց՝ նոր, ուրույն ժամանակաշրջանի համար տեղ բացելով:

- Ուզում եմ իմ պոեզիայից միայն երկու բնորոշում մեջբերել.

1. Ժամանակը ջերմաչափ է՝

հրված կողը ամեն երկրի...

2. Ժամանակը խաչքար է,

որով հաղորդվում են ճա-նա-պարհ-ներ-ըր...

Ժամանակի առաջին բնութագրությունը հղացվել է 1986 թվականին, իսկ երկրորդը՝ 2004-ին: 18 տարվա ընթացքում իմ հոգեաշխարհում և մտածողության ժապավենի վրա ժամանակ-ջերմաչափը դարձել է ժամանակ-խաչքար: Տեղաշարժը, կարծում եմ, հսկայական է: «Հասարակարգից-հասարակարգ փոխանցվում է թափոնը օրենքների»: Այնուամենայնիվ՝ փոխվում է մտածողությունը, փոխվում է մարդը: Սոցիալիստական հասարակարգից հայ մարդը դուրս գալով, ներխուժել է Ազգային ոգու և մտածողության տարածք՝ դեռևս կրելով իր

մեջ նախկին հոգեբանության ծանր մնացորդները: «Շղթայի հետքը ծանր է ավելի, քան ինքը՝ շղթան», - ասում է մեր ժամանակի նշանավոր բանաստեղծներից մեկը՝ Վարդան Հակոբյանը:

Արցախյան շարժումն ազդարարեց Նոր մտածողության սկիզբը: Փոխվեցին ոչ միայն մարդկային մտածողությունն ու վարքը, այլև... իրերը միանգամից կորցրեցին իրենց նախկին իմաստն ու արտահայտությունը: Աստված, մարդ, հայ, ճանապարհ, երազ, հավատ, տուն... բառերը դարձան ներգործող երևույթներ՝ ձեռք բերելով նոր իմաստ ու հնչեղություն: Ոչ միայն մարդը սկսեց նոր հայացքով նայել իրերին ու բնությանը, այլև իրերն ու բնությունը մարդու միջոցով սկսեցին նորովի մտածել... Ամենամեծ նվաճումը նոր ժամանակաշրջանի այն է, որ արմատապես բեկվեց Սովորույթի ուժը: Արվեստագետն իրեն զգաց ազատ, ինչպես քամին, փոթորիկը, ինչպես երազն ալպիական սարերի:

Դեմքս բացահայտվում է

ծաղիկներով անձրևի

և բուրում լռության ճիչերի վրա:

Անհայտության ճակատից ընկնում է բառը՝

ինչպես աստղ:

Այս հոգեպատկերին ես հասա՝ անցնելով տարիների հոգեբանության միջով: Իմ հետևից ես քարշ տվեցի երազների և մտապատկերների երամները, լռության և խոհերի անտառները, բայց ոչ... ընթերցողին: Ընթերցողը ժամանակն է: Ընթերցողը ճանապարհն է: Ընթերցողը ինքնահանդիպման անորսալի աստղն է: Ստեղծագործությունն ինքն է ստեղծում իր ընթերցողին:

Նորեկ Գասպարյանը պոեզիա բերեց ազատության հոգեբանությունը: Նրա բանաստեղծությունները դարձան մարդու հոգեաշխարհի նորահայտ շարունակությունը: Պոեզիան նույնացավ կյանքին, ժամանակի շնչառությանը, տիեզերքի ոգուն: Ելակետում մենք ունեինք ներշնչանքային հզոր ուժեր (Սիամանթո, Դանիել Վարուժան, Եղիշե Չարենց, Պարույր Սևակ), որոնք ուրվագծում և անհողողող էին պահում վաղվա (հիմա՝ այսօրվա) պոեզիայի չափանիշները: Նոր ժամա-

նակը բերեց նոր հեղինակներ (Յենրիկ Էդոյան, Արտեմ Չարությունյան, Յովհաննես Գրիգորյան, Արմեն Մարտիրոսյան, Դավիթ Յովհաննես, Յրաչյա Սարուխան), որոնց պեղծական, լինելով «պատանդ» հին հասարակարգում, նոր շնչառություն ու թափ ստացավ՝ լցնելով մթնոլորտը կյանքով ու խնդությամբ: Ազատության սերունդը ժամանակից առաջ էր ընկել և նրա խոսքը (որ հոգևոր հայտ էր) բզկտվում էր անխնա չորս կողմերից: Գրական այս սերունդը աճեց ինքն իրենից, ինքն իրենից վեր բարձրացավ, հասունացավ ու ամրապնդվեց հավատով ու ոգով:

Գրական փորձը առաջնդման ուժ էր դառնում նաև: Մեր ամեն քայլը սկսվում էր տողի հոգեբանությունից: Մաքսիմ Յովհաննիսյանն իր «Չաստվածների խնջույք»-ով ամբողջացրեց ժամանակի փիլիսոփայության պատկերը: Իսկ մինչ այդ՝ Վարդան Յակոբյանն իր «Թևերի հեռուն» գրքով ազդարարեց Նոր մտածողության և հոգեբանության զարթոնքը և իրար ետևից լույս ընծայելով «Քարի շնչառությունը», «Բանաստեղծությունը սահմանից դուրս», «Պոեմ իմ մասին կամ 24-ն անց 81-րոպե» գրքերը, կատարեց խոր ու անակնկալ բացահայտումներ: Պոեզիան դարձավ ոչ թե ուղեկից, այլ՝ ապրեցնող, ոգևորող ուժ: Գուրգեն Գաբրիելյանի «Յորովել»-ը, Յրաչյա Բեգլարյանի «Ղարաբաղցին», Մաքսիմ Յովհաննիսյանի «Տերունական Աղոթք»-ը, Վարդան Յակոբյանի «Քրիստոսի ծաղիկներ»-ը, Արտաշես Ղահրիսյանի պատմվածքները, Յամլետ Մարտիրոսյանի «Յրեշտակին այցելում են գիշերով», Ժաննա Բեգլարյանի «Բվի կռինչ»-ը ստեղծագործությունները ժամանակ և տարածություն չեն ճանաչում, առնչվում են տիեզերական հաղորդակցության ելքերին և դառնում նոր (գրական) իրականություն:

- Ինչպիսի՞ խառնվածք, որակ և դիմագիծ ունի Արցախում ստեղծվող գրականությունը՝ հայ գրականության համայնապատկերում:

- Արցախում ստեղծվող գրականության հիմքում բաբախում է դիմադրության ոգին, ինքնության հաստատման և հայ ցեղի պահպանման խնդիրը: Ամբողջ 20-րդ դարը Դիմադրության ու Պայքարի ժամա-

նակաշրջան է: Եվ, բնականաբար, այդ ժամանակաշրջանում ստեղծված գրականությունն էլ կարելի է անվանել Դիմադրության ու Պայքարի գրականություն: Դրա խոսուն վկայությունն են Գրիգոր Ներսիսյանի, Բագրատ Ուլուքաբյանի, Բոգդան Ջանյանի, Սուկրատ Խանյանի, Մովսես Յախշունցի, Նվարդ Ավագյանի ստեղծագործությունները: Գոյատևման ու լինելության պոռթկման անկունքից են ծնվել նաև Գուրգեն Գաբրիելյանի «Այբուբենը երգերի մեջ» գիրքը, Յուզյա Բեգլարյանի «Արցախ-նամե»-ն (բանաստեղծությունների ժողովածուն), Մաքսիմ Հովհաննիսյանի «Մենք»-ը, Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» պոեմն ու «Սոսե» շարքը, Կոմիտաս Դանիելյանի «Արցախը՝ չսանձված նժույգ» հերոսապատումը: Հայոց բանակի ռազմարվեստը և մարտական ճանապարհը ներկայացնող լավագույն ստեղծագործություններ են Սենոր Հասրաթյանի գրքերը («Գոյամարտ», «Ղարաբաղյան պատերազմ», «Գաղափարի զինվորը», «Մարտանցում», «Գեներալ Իվանյան», «Մենք՝ հայերս...»):

Ժամանակի տարեգրության համապարփակ ու հիշարժան փորձեր են Նվարդ Սողոմոնյանի «Կուլցո»-ն, Վարդգես Բաղդյանի «Արցախյան ֆենոմեն»-ը, Արիս Գրիգորյանի «Արաքսի ջրերը», Միեր Հարությունյանի «Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը», «Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին», Դավիթ Միքայելյանի «Ծաղկել է ձորի խնձորենին», գրքերը, Սիրվարդ Մարգարյանի ակնարկները:

Արցախը նաև լինելով աշխարհի ամենաթեժ երկրամասը, միաժամանակ հանդիսանում է Նորի հոսանքակիրը: Արցախում ապրող բանաստեղծներն ու արձակագիրները նոր մտածողության ու գրական նոր տեղաշարժերի սկզբնավորողներն են և իրենց ինքնատիպ ստեղծագործություններով առանձնանում են համահայկական գրական դաշտում: Վարդան Հակոբյանի ստեղծագործությունը նոր երևույթ է և մեծ ընդունելություն է գտնում հատկապես Հայաստանի և Արցախի երիտասարդության շրջանում: Ժաննա Բեգլարյան, Համլետ Մարտիրոսյան, Նորել Գասպարյան, Հրանտ Ալեքսանյան, Կիմ Գաբրիելյան... Սոսկ անուններ չեն, այլ... գրական անհատականություններ:

Մտածողության ինքնուրույնության և նոր պատկերավորության վկայություններ են և երիտասարդների (Տաթևիկ Սողոմոնյանի, Վիտալի Պետրոսյանի, Ալիսա Բաղդասարյանի, Սոնա Չամբարձումյանի) ստեղծագործությունները:

- Մեր օրերում արժարժվում է այն միտքը, որ տեղի է ունեցել արժեքների անկում, հաճախ խոտանը ներկայացվում է որպես գրական լուրջ ձեռքբերում, դրանով էլ ավելի շփոթության մեջ գցելով առանց այդ էլ գրքից հեռացած ընթերցողին: Հաճախ հետևելով իրարամերժ գնահատականներին, թվում է, հայտնվում ես լաբիրինթոսի մեջ, որից դուրս գալու ելքը կրկին պետք է գրականությունը ուրվագծի: Ձեր դիրքորոշումը այս հարցում, ինչ անել գրական գորշության մեջ չհայտնվելու համար:

- Ես կարծում եմ, տեղի է ունենում ոչ թե «արժեքների անկում», այլ վերարժևորում: Նոր հայացքով ենք նայում գրական ձանապարհին, փորձում ստեղծագործությունը մի պահ անջատել ժամանակի խթանից արահետներից, որպեսզի տեսանելի լինի նրա ազատ թռիչքը իրականությունից այն կողմ: Գնահատականների լաբիրինթոսից ոչ ոք չի կարող դուրս հանել ընթերցողին, բացի՝ իրենից: Ընթերցողը պիտի խնայի նաև ինքն իրեն՝ չընթերցելով պատահաբար ձեռքն ընկած «ապսպրանքը»: Գիրքն ընտրել է պետք՝ ընթերցելուց առաջ: Ընթերցողի և գրքի հանդիպումը պիտի լինի զարթոնքի պես մի բան: Գիրքն ընթերցելիս պիտի վերափոխվես ու վերածնվես: Ոգևորիչ էր ինձ համար Յերման Չեսսեի «Ներսը և դուրսը» գրքի ընթերցումը: Դա կարելի է անվանել ներքին վերափոխություն ու վերարժևորում: Հայտնություն են ինձ համար նաև Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկներ»-ը, Մաքսիմ Հովհաննիսյանի «Չաստվածների խնջույքը», Նվարդ Ավագյանի «Միջնորմ»-ը, Հրանտ Ալեքսանյանի, Նորել Գասպարյանի բանաստեղծությունները, Համլետ Մարտիրոսյանի «Հրեշտակին այցելում են գիշերով», Արտաշես Ղահրիյանի պատմվածքները:

Դուք ձիշտ եք նկատել նաև, որ գրականությունը պիտի ուրվագծի նոր չափանիշը:

Իսկ եթե ընթերցողը նաև ստեղծագործող է, մեկ-մեկ էլ կարող է թույլ գործեր ընթերցել, որպեսզի իմանա, թե ինչպես չպետք է գրել...

- Գրականությունը հավերժական է իր տիեզերականությամբ: Դարը լուր ակնթարթ է, միաժամանակ՝ գրականության մեկ օրը կարող է դարից երկար ձգվել: Որպես գրող, ստեղծագործող անհատ, Դուք Ձեզ որ ժամանակում եք տեսնում՝ ակնթարթում, թե երկար ձգվող օրում:

- Մի բանաստեղծության մեջ այսպիսի տող ունեմ. վայրկյանի դարավոր կեղև: Պոեզիայում իշխում է ակնթարթը. «Կանգ առ ակնթարթ...»: Վայրկյանը կամ ակնթարթը անմիջականության խորհրդանիշն է: Այն կարծիքին եմ, որ Վահան Տերյանն ու Միսաք Մեծարենցը միանգամից են գրել իրենց անմիջական ու ցողաթաթախ բանաստեղծությունները: Վայրկյանի թելադրանքով: Ճիշտ է, հետագայում որոշ բառեր փոփոխել են, բայց վայրկյանի կամ ակնթարթի բաբախուն ոգուն ձեռք չեն տվել... Հավերժական է դարձել ակնթարթը Տերյանի և Մեծարենցի գրչի տակ... Հավերժական՝ նաև անզուգական լեզվի և անաղարտ ոգու շնորհիվ: Կան բանաստեղծներ էլ, ինչպես Վահագն Դավթյանը, Պարույր Սևակը, որոնք տարին ու դարն են խտացրել վայրկյանի մեջ և վայրկյանը դարձրել ծանրակշիռ... Իսկ Համո Սահյանի բանաստեղծության մեջ հուշը հանդես է գալիս՝ որպես անմիջականության այրում... Հեղինակը հուշի անմիջականությամբ (սարսուռով) ազդում է ընթերցողի վրա՝ նրա մեջ բացելով ապրումների նոր հորիզոններ:

Ուզում եմ այս հարցին պատասխանել՝ իմ հոգեաշխարհը ներկայացնելով մի բանաստեղծությամբ.

ԴԻՊԿԱԾԻ ՁԵՆՔԲԵՐՈՒՄ

Երազը փայլատակում է ցանցում գիշերների,

ինչպես լուսայգի շերտ:

Ինքս ինձանից դուրս եմ մի հայացքաչափ:

Դաշույն են թևերը

լռության:

*Պատմության լույսերը ընթերցում են
լռությունները հավիտենական:
Դիպվածի ձեռքերում
հավատս խաղալիք է,
մի խեցի,
որից լսվում է հառաչը ծովերի:*

- Ի՞նչ հետաքրքրություններով է կազմված գրական մշակի Ձեր օրը: Ստեղծագործելու ստորջրյա խութերը ինչպե՞ս եք հաղթահարում և նավակը տեղ հասցնում:

- Տարվա ընթացքում ստեղծագործում եմ (բանաստեղծությամբ) երկու կամ երեք ամիս, մնացած ամիսներին զբաղվում եմ ստեղծագործությունների մշակման աշխատանքով:

Ներշնչանքը կամ ստեղծագործական օրը կարող է նաև մեկ կամ երկու տող բերել. դրանք պիտի պահել սրբությամբ: Ճիգով չպիտի ստեղծագործել: Բայց երբեմն տարվում եմ «դժվար վարժությամբ»: Աշխատանքը իմ տարերքն է: Վերջում պիտի զատես նաև սերմը՝ թեփից: Պոետական կրակով վառված «թեփն» էլ ավելորդ չէ. նրանից կարող է կրակ բռնկվել... Տողերը միմյանց լիցք ու ջերմություն են փոխանցում և հարստացնում զգացողության դաշտը: Պիտի թողնել՝ որ ծնվի անակնկալը:

- Ձեր նվիրական երազանքը՝ որպես բանաստեղծ:

- Իմ նվիրական երազանքն է՝ բառը դարձնել ոգի ու հաղորդություն և նրանով սրբագործել մարդկային ճանապարհը:

*Երազի ակունքներին սեղմվում են
հրեշտակները
և աղբյուրներ են հորդում լեռնագագաթներից:*

Ահա՛ իմ Ոգու լույսը...


Ճանապարհը նաև իմ Ոգու բռունցքն է, որով և ծեծում եմ Անհայտի դուռը...

**Հարցազրույցը՝
Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ**

-
- * 1998
 «»
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999
- * 1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՐԵՇՏԱԿԻ ԹԵՎԵՐ	3-40
ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՂԹԱ	41-190
ՔԱՈՍ ԵՎ ԼՈՒՅՍ	191-226
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ	227-234
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	235-238



Նկարը՝ Կամիլայի

ՌՈՐԵՐՏ ԵՍԱՅԱՆ

Հատոր առաջին

ՔԱՆՍ ԵՎ ԼՈՒՅՍ

*Բանաստեղծություններ
պոեմներ*

Սրբագրիչ՝
Համակարգչային շարվածքը և
էջադրումը՝
Կազմի ձևավորումը՝

Անահիտ Եսայան
Թամար Հարությունյանի
Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84^{1/16},
ծավալը՝ 15 տպ. մամուլ+4 էջ ներդիր, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2015